

CSO METER

Քաղաքացիական
հասարակության միջավայրի
գնահատում և րևելյան
գործընկերության երկրներում

Հայաստան

ԵՐԵՎԱՆ, 2019



Հեղինակներ՝ Անուշ Հակոբյան, Տաթևիկ Մարգարյան, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Երևան, 2019 թ.

Չեկույցի մշակման խորհրդատվական խումբ՝ Լուսինե Հակոբյան, Նունե Պեպանյան, Ավետիք Իշխանյան, Լինե Ուրբան, Աննա Ավագյան, Օլգա Ազատյան, Արփինե Հակոբյան

ԹԻՀԿ առաքելությունն է կոռուպցիան նվազեցնելու ու ժողովրդավարությունն ամրապնդելու ճանապարհով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում: Կազմակերպության նպատակներն են՝ (1) աջակցել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականությանը և թափանցիկ ու հաշվետու կառավարմանը, (2) աջակցել ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների անցկացմանը և ընտրական ինստիտուտի կայացմանը, (3) նպաստել հանրային ռեսուրսների, այդ թվում՝ պետական և համայնքային սեփականության ու ֆինանսական միջոցների ողջամիտ, թափանցիկ և հաշվետու կառավարմանը, (4) խթանել ժողովրդավարական գործընթացները, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանությունը և հասարակության մասնակցությունը երկրի կառավարման գործընթացներում: ԹԻՀԿ-ը հետամուտ է համագործակցել պետական իշխանության մարմինների հետ այն նախաձեռնությունների շուրջ, որոնք դրական ազդեցություն են նախատեսում ընթացիկ բարեփոխումների համար կամ խթանում են հանրային նոր քաղաքականություն, և սկզբունքային հակադրություն է ցուցաբերում իշխանության այն որոշումներին, որոնք ակնհայտորեն սպառնում են արդյունավետ կառավարման իրականացմանը:

Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոնը (ECNL) քաղաքացիական հասարակության վրա ազդող քաղաքականությունների և օրենքների ոլորտում առաջատար ռեսուրսային և հետազոտական կենտրոն է Եվրոպայում: ECNL-ն աջակցում է այնպիսի միջավայրի ձևավորմանը, որտեղ մարդիկ կարող են ազատ կազմակերպվել, համատեղ կերտել և նպաստել հասարակությունների զարգացմանը: ECNL- ի գործունեությունն օգնում է այնպիսի պայմաններ ստեղծել, որոնք քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հնարավորություն են տալիս գործել ինքնուրույն, լինել ֆինանսապես կայուն, ունենալ ուժեղ կառավարում, մասնակցել հանրային քաղաքականությանը և մոբիլիզացնել հասարակության աջակցությունը: Քաղաքացիական հասարակության նպաստավոր միջավայր ապահովող քաղաքականության մշակումից և ջատագովումից զատ՝ ECNL- ն իրավագործում է տեղական շահագրգիռ կողմերին, վերահսկում է գործիքների և մեխանիզմների իրականացումը և գիտելիքների շտեմարան է ստեղծում իր հետազոտությունների և վերլուծությունների միջոցով:

© 2019, Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն և Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են:

Սույն փաստաթուղթը մշակվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Առաջընթացի դիտարկում, գործողության խրախուսում» ծրագրի շրջանակներում: Սույն փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը, և այն պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական Միության դիրքորոշումը:

ԲՈՎԱՆՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ	3
II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7
III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	10
IV. ԹՀԿ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ	14
4.1 Միավորումների ազատություն	14
4.2 Հավասար վերաբերմունք	24
4.3 Ֆինանսավորման մատչելիություն	27
4.4 Խաղաղ հավաքների ազատություն	30
4.5 Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք	36
4.6 Խոսքի ազատություն	48
4.7 Մասնավոր կյանքի իրավունք	53
4.8 Պետության կողմից պաշտպանության պարտականություն	54
4.9 Պետական աջակցություն	59
4.10 Պետություն-ԹՀԿ համագործակցություն	69
V. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	74
VI. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	76
6.1 Հավելված 1` Օգտագործված աղբյուրներ	76

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱԺ	Ազգային ժողով
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԵՄ	Եվրամիություն
ՉԼՍ	Չանգվածային լրատվության միջոց
ԹԻՀԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԼԳԲՏ	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր համայնք
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՊԵԿ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԻՍ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՖԽ	Ֆոկուս-խմբային քննարկում

I. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Սույն զեկույցը ներկայացնում է ՔՀԿ նպաստավոր միջավայրի՝ «ՔՀԿ չափիչ» մեթոդաբանությամբ իրականացված փորձնական ուսումնասիրության արդյունքները: «ՔՀԿ չափիչը» (CSO Meter) Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության միջավայրի գնահատման համար մշակված գործիք է, որը բաղկացած է 10 տարրեր ոլորտներում իրավական և գործնական միջավայրի գնահատման չափորոշիչներից և ցուցանիշներից: «ՔՀԿ չափիչը» մշակվել է «Առաջընթացի դիտարկում, գործողության խրախուսում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոնի» և Արևելյան գործընկերության երկրների մի խումբ հասարակական կազմակերպությունների կողմից: Հայաստանում ծրագրի գործընկերն է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը (ԹԻՀԿ):

Ուսումնասիրության մեթոդները ներառում են իրավական ակտերի, առկա հետազոտությունների և այլ փաստաթղթերի ու նյութերի վերլուծություն, ՔՀԿ-ների մասնակցությամբ ֆոկլուս-խմբային քննարկումներ (ՖԽ), փորձագիտական հարցազրույցներ և ՔՀԿ-ների ներկայացուցիչների առցանց հարցում:

Չեկույցում անդրադարձ է կատարվել ՔՀԿ նպաստավոր միջավայրի տասը ոլորտների չափանիշների վերաբերյալ առավել նշանակալի բացահայտումներին: Չեկույցի ուշադրության կենտրոնում են մասնավորապես այն խնդրահարույց հարցերը, որոնք կարող են հիմք ծառայել ջատագովության հետագա նախաձեռնությունների համար:

2018 թվականին Հայաստանում նշանակալի քաղաքական փոփոխություններ տեղի ունեցան, երբ ապրիլի զանգվածային ցույցերի արդյունքում նոր վարչապետ ընտրվեց և կառավարության կազմը փոխվեց, իսկ հետագայում կայացան արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Այս քաղաքական փոփոխությունները, որոնք ստացան «թավշյա հեղափոխություն» անվանումը, որոշ բարելավումներ բերեցին խոսքի ազատության, հավաքների ազատության, ազատ ընտրությունների և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում: ՔՀԿ-ները և ոչ ֆորմալ քաղաքացիական խմբերն ակտիվ դերակատարություն ունեցան 2018 թվականի բողոքի ցույցերում, իսկ հետագայում ներգրավվեցին կառավարության հետ խորհրդակցությունների և արտահերթ խորհրդարանական ընտրությունների մոնիտորինգի գործընթացներում: Քաղաքացիական հասարակության բազմաթիվ ակտիվիստներ ներառվեցին նոր կառավարության կազմում կամ պատգամավոր ընտրվեցին:

Հայաստանում կան ավելի քան 5000 գրանցված ՔՀԿ-ներ, որոնք ներառում

են հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները: Ըստ գնահատականների՝ ակտիվ գործունեություն է ծավալում նրանց մոտ 20 տոկոսը: Ֆինանսական կայունությունը Հայաստանի ՔՀԿ-ների առջև ծառայած հիմնական մարտահրավերներից է, քանի որ ՔՀԿ հատվածը մեծապես կախված է միջազգային դոնորների ֆինանսավորումից, իսկ ֆինանսավորման տեղական աղբյուրները փոքրաթիվ են: ՔՀԿ-ների կազմակերպական կարողություններն աստիճանաբար բարելավվում են, և ավելի շատ ՔՀԿ-ներ են ներքին կանոնակարգեր մշակում և ռազմավարական պլանավորում նախաձեռնում: ՔՀԿ-ներից քչերն են թափանցիկ գործելակերպ դրսևորում, որը հանրության կողմից ՔՀԿ-ների նկատմամբ վստահության ցածր մակարդակի պատճառներից մեկը կարող է լինել: Մյուս կողմից՝ վստահության ձևավորմանը չեն նպաստում նաև ՔՀԿ-ների մասին այնպիսի կարծրատիպերը, ըստ որոնց՝ ՔՀԿ-ները «գրանտակեր» կազմակերպություններ են, որոնք հետևում են արտաքին օրակարգին և վնասում ավանդական արժեքներին:

Միավորումների ազատության ոլորտում իրավական կարգավորումները հիմնականում բարենպաստ են ՔՀԿ-ների համար: ՔՀԿ-ները կարող են գործել՝ առանց գրանցվելու անհրաժեշտության, իսկ գրանցման ընթացակարգը թանկ չէ և տևում է առավելագույնը 15 օր: Առցանց գրանցումը ՔՀԿ-ների համար հասանելի չէ, սակայն 2018 թվականից հնարավորություն է տրվել գրանցման փաստաթղթերը ներկայացնել պետական ռեգիստրի մարզային գրասենյակների միջոցով: Գրանցման վարչարարության հետ կապված որոշ խնդիրներ, այնուամենայնիվ, կան, ներառյալ՝ որոշ փոքր թերությունների, ինչպես օրինակ՝ տառասխալների կամ կետադրական նշանների պատճառով փաստաթղթերը վերանայելու կամ կանոնադրության տեքստը կառավարության կողմից հաստատած օրինակելի նմուշին համապատասխանեցնելու պահանջները:

Միավորումների ազատության ոլորտում բացահայտված մյուս խնդիրներից է պետության կողմից ՔՀԿ-ների գործունեության վերահսկման շրջանակի սահմանման անհրաժեշտությունը:

Գրանցման գործընթացներում և ձեռնարկատիրական գործունեություն ծավալելիս առևտրային ընկերությունների համեմատ ՔՀԿ-ները խտրական վերաբերմունքի են հանդիպում: Գրանցման վճարը ՔՀԿ-ների դեպքում ավելի մեծ է, գրանցման ժամկետներն՝ ավելի երկար, իսկ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու դեպքում առկա հարկային կարգավորումներն ավելի անբարենպաստ են:

Մյուս կողմից՝ առևտրային ընկերությունների համեմատ ՔՀԿ-ներում հարկային ստուգումներ ավելի քիչ են իրականացվում: ՔՀԿ-ների միջև արտահայտված խտրական մոտեցում չի նկատվել, թեև որոշ ՔՀԿ-ներ նշում են, որ պետական ֆինանսավորման և որոշումների ընդունմանը մասնակցության տեսանկյունից ՔՀԿ-ների նկատմամբ տարբերակված մոտեցում է կիրառվում:

ՔՀԿ-ների համար օրենքով հասանելի են ֆինանսավորման բազմազան

աղբյուրներ, ներառյալ՝ հանրային դրամահավաք, միջազգային դրամաշնորհներ, մասնավոր նվիրատվություններ և պետական ֆինանսավորում: Պետական ֆինանսավորման թափանցիկության պակասը և չափանիշների անհստակությունն այս ոլորտի հիմնական խնդիրներից են: Թեև օրենսդրական փոփոխություններից հետո հասարակական կազմակերպություններին հնարավորություն է տրվել ուղղակի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել, ՔՀԿ-ները նշում են, որ տնտեսական գործունեությունը սկսելու համար բավարար խթաններ չկան: Միջազգային որոշ կազմակերպություններից ֆինանսավորում ստացող ՔՀԿ-ները քննադատության և պիտակավորման թիրախ են դառնում առանձին հասարակական խմբերի կողմից:

Խաղաղ հավաքների ազատության ոլորտում իրավիճակը իրավական տեսանկյունից բարենպաստ է, իսկ գործնական առումով բարելավվել է կառավարության փոփոխությունից հետո: 2018 թվականի հեղափոխության ընթացքում և նախորդող տարիներին գրանցվել են ոստիկանության կողմից բռնությունների, ճնշումների, հավաքներին անհարկի միջամտության, բերման ենթարկելու և ոստիկանական ուժի ու հատուկ միջոցների անիրավաչափ կիրառման բազմաթիվ դեպքեր: Այս ոլորտում խնդրահարույց են ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների կողմից խաղաղ հավաքի իրավունքի իրացման խոչընդոտները, ոստիկանության հայեցողական մոտեցումը և ոստիկանների կողմից իրավախախտումների արդյունավետ քննության ու պատասխանատվության ենթարկելու ոչ բավարար ջանքերը:

Որոշումների ընդունման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության համար բազմաթիվ իրավական հիմքեր ու հարթակներ կան նախատեսված, այդ թվում՝ օրենսդրական նախագծերի պարտադիր հանրային քննարկումները, նախարարություններին կից հասարակական խորհուրդները, հանրային լսումների հնարավորությունը և տարբեր ոլորտներում ձևավորված համատեղ աշխատանքային խմբերը: Տեղական ինքնակառավարման մասին օրենքը ևս բազմաթիվ դրույթներ է պարունակում համայնքի կառավարման հարցում բնակչության մասնակցության համար: Այս ոլորտում խնդիրները կապված են օրենքի կիրառման և հանրային մասնակցության արդյունավետության հետ, քանի որ, ըստ հետազոտության մասնակիցների, քննարկումներն ու մասնակցային հարթակները կարող են «ձևական» բնույթ կրել:

Խոսքի ազատությունը Հայաստանում ներկայումս նշանակալի սահմանափակումների չի հանդիպում՝ ի տարբերություն մինչհեղափոխական ժամանակաշրջանի, երբ սուր քննադատություն արտահայտող իրավապաշտպանները կարող էին ճնշումների ենթարկվել: Միևնույն ժամանակ առկա են հանրային անհանդուրժողականության միտումներ, սոցիալական ցանցերում զգալիորեն ավելացել է ատելության խոսքը, որը տարածվում է նաև լրատվամիջոցներով, ընդ որում՝ այն հստակ չի կարգավորվում օրենքով և չի պատժվում: Այս ոլորտում խնդիրներ են

արձանագրվել նաև հեռարձակվող լրատվամիջոցների օրենսդրական կարգավորումների առնչությամբ, ինչպես նաև փոքր համայնքներում դեռևս պահպանվող՝ կարծիքն ազատորեն արտահայտելու հարցում մարդկանց որոշակի կաշկանդվածության հետ:

Մասնավոր կյանքի իրավունքը օրենքով և գործնական մակարդակում ընդհանուր առմամբ պաշտպանված է, թեև անձնական տվյալների արտահոսքի դեպքեր են լինում: Սակայն թերի է պետության կողմից երրորդ անձանց հարձակումներից պաշտպանությունը, հատկապես հանրության համար զգայուն հարցերով զբաղվող՝ LQFS անձանց, կանանց և կրոնական փոքրամասնությունների իրավունքները պաշտպանող կազմակերպությունների և իրավապաշտպանների պարագայում: Ավելին, որոշ պետական պաշտոնյաներ իրենք են ատելության խոսք օգտագործում և խտրականություն դրսևորում վերոնշյալ խմբերի նկատմամբ:

ՔՀԿ-ներին կանոնավոր աջակցություն է տրամադրվում պետական և համայնքային բյուջեից: Ֆինանսավորման տրամադրման ընթացակարգը և աշխատանքի արդյունքները, որպես կանոն, թափանցիկ և հասանելի չեն եղել հանրության համար: Ներկայումս քայլեր են ձեռնարկվում պետական աջակցության թափանցիկության ու մրցակցային ընթացակարգերի ներդրման ուղղությամբ: Բարեգործական ծրագրերի իրականացման դեպքում ՔՀԿ-ները կարող են օգտվել որոշակի հարկային արտոնություններից, սակայն ընդհանուր առմամբ ՔՀԿ-ների համար սահմանված հարկային արտոնություններն անբավարար են: Կամավորական աշխատանքի օգտագործման առումով ՔՀԿ-ները խոչընդոտների չեն հանդիպում, միևնույն ժամանակ կամավորությունը իրանող քաղաքականություն կամ կարգավորումներ չկան:

Պետություն-ՔՀԿ համագործակցության վերաբերյալ առանձին ռազմավարություն կամ քաղաքականություն չկա: Մի քանի տարի առաջ մշակված՝ ՔՀԿ-ների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգը օրենսդրական փոփոխությունների միջոցով մասամբ իրականացվել է: Պետության և ՔՀԿ-ների միջև համագործակցության հիմնական ինստիտուցիոնալ մեխանիզմներն են Հանրային խորհուրդը և նախարարություններին ու մարզպետարաններին կից հասարակական խորհուրդները, ինչպես նաև ոլորտային աշխատանքային խմբերը: Այս մարմինների արդյունավետությունը տարբեր է՝ կախված ներգրավված ՔՀԿ-ների ակտիվությունից ու հմտություններից և պատասխանատու պաշտոնյաների մոտեցումներից:

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է ՔՀԿ չափիչը

ՔՀԿ չափիչը մի գործիք է, որը մշակվել է Արևելյան գործընկերության երկրներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) միջավայրի կանոնավոր ու հետևողական մոնիտորինգին ու գնահատմանն աջակցելու նպատակով: Այն բաղկացած է 10 տարբեր ոլորտների չափորոշիչներից և ցուցանիշներից, որոնք օգտագործվում են իրավական և գործնական միջավայրի գնահատման նպատակով: Ցուցանիշները մշակելիս հիմք են ընդունվել միջազգային չափորոշիչները և ոլորտի կարգավորման առաջատար փորձը:

ՔՀԿ չափիչը մշակվել է բավականին մասնակցային և համագործակցային գործընթացի միջոցով՝ «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոնի» (ECNL) աջակցությամբ: Այն կազմվել է տեղական փորձագետների հիմնական խմբի կողմից և քննարկվել է երեք փուլով՝ տարածաշրջանի 807 ՔՀԿ-ների հետ: Արևելյան գործընկերության վեց երկրներից յուրաքանչյուրում գործընթացն իրականացնում էին տեղացի գործընկերները՝ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը» (Հայաստան), «Էմ-Ջի Քրնսայթինգ» ՄՊԸ-ն (Ադրբեջան), «Ժողովրդավարամետ ՀԿ-ների միավորումը»՝ «Իրավական բարեփոխումների կենտրոնի» հետ համատեղ (Բելառուս), «Քաղաքացիական հասարակության ինստիտուտը» (Վրաստան), «Պրոմո-Լեքս» ընկերակցությունը (Մոլդովա) և «Անկախ քաղաքական հետազոտությունների ուկրաինական կենտրոնը» (Ուկրաինա):

Որո՞նք են ՔՀԿ նպաստավոր միջավայրի հիմնական տարրերը

Ուսումնասիրության համատեքստում «ՔՀԿ» եզրույթը նշանակում է կամավոր հիմունքներով ձևավորված ինքնակառավարվող մարմին կամ կազմակերպություն, որն ստեղծվել է իր հիմնադիրների կամ անդամների՝ շահույթ չհետապնդող նպատակների իրագործման համար: ՔՀԿ-ներ կարող են լինել ինչպես ֆիզիկական կամ իրավաբանական առանձին անձանց, այնպես էլ նման անձանց խմբերի կողմից ձևավորված մարմիններ կամ կազմակերպություններ: Դրանք կարող են ձևավորվել անդամակցության հիմքով կամ առանց անդամակցության: ՔՀԿ-ները կարող են գրանցված լինել որպես իրավաբանական անձ կամ ունենալ ոչ ֆորմալ բնույթ: Որպես ՔՀԿ կարող են հանդես գալ, մասնավորապես, միավորումները, հիմնադրամները, ոչ առևտրային ընկերությունները կամ վերը նշված չափանիշներին համապատասխանող գործունեության այլ տեսակներ իրականացնող կազմակերպություններ: Հարկ է նշել, որ «ՔՀԿ չափիչը» չի դիտարկում քաղաքական կուսակցությունների, կրոնական կազմակերպությունների և արհմիությունների գործունեության միջավայրը:

ՔՀԿ չափիչը կազմված է երկու հիմնական մասից.

- Հիմնարար իրավունքներ և ազատություններ, որոնք էական նշանակություն ունեն քաղաքացիական հասարակության գոյության համար և ներառում են՝ (1) միավորումների ազատությունը, (2) հավասար վերաբերմունքը, (3) ֆինանսավորման մատչելիությունը, (4) խաղաղ հավաքների ազատությունը, (5) որոշումների ընդունման գործընթացում մասնակցելու իրավունքը, (6) խոսքի ազատությունը, (7) մասնավոր կյանքի իրավունքը և (8) պետության կողմից պաշտպանության պարտականությունը:
- Անհրաժեշտ պայմաններ, որոնք հավելյալ աջակցություն են ապահովում քաղաքացիական հասարակության զարգացման համար (սակայն առանց հիմնարար իրավունքների և ազատությունների երաշխավորման բավարար չեն բարենպաստ միջավայր ապահովելու համար) և ներառում են՝ (1) պետական աջակցությունը և (2) պետություն-ՔՀԿ համագործակցությունը:

Ինչպե՞ս է մշակվել այս գեկոյցը

Չեկոյցը մշակվել է Հայաստանում ծրագրի գործընկեր «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության (ԹԻՀԿ) կողմից՝ հիմնվելով Արևելյան գործընկերության բոլոր վեց երկրների համար մշակված ընդհանուր մեթոդաբանության վրա:

Գործընթացն իրականացվել է տվյալների հավաքման (փաստաթղթերի ուսումնասիրում, ֆոկուս-խմբային քննարկումներ, հարցազրույցներ և առցանց հարցում) և ստացած արդյունքների վերլուծության միջոցով: Ընդհանուր առմամբ անցկացվել է ութ հարցազրույց ոլորտային փորձագետների հետ, չորս ՖԻՍ քննարկում՝ 33 մարզային և 8 երևանյան ՔՀԿ-ների մասնակցությամբ, իսկ առցանց հարցմանը մասնակցել է 94 ՔՀԿ, ներառյալ՝ 86 հասարակական կազմակերպություն, 6 հիմնադրամ և 2 չգրանցված նախաձեռնություն: Չեկոյցի մշակմանը հետևել է շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներից կազմված խորհրդատվական խումբը՝ համոզվելու համար, որ գեկոյցի բացահայտումներն ու առաջարկներն արտացոլում են երկրի ընդհանուր իրավիճակը: Չեկոյցի նախագիծը ներկայացվել է 2019 թ. հոկտեմբերին՝ գեկոյցի ներկայացման միջոցառմանը, որի ընթացքում մասնակիցները հաստատեցին գեկոյցի հիմնական բացահայտումներն ու առաջարկները, իսկ լրացուցիչ առաջարկները հետագայում ներառվեցին գեկոյցի վերջնական տարբերակում:

Չեկոյցում ամփոփվել են «ՔՀԿ չափիչի» բաղկացուցիչ 30 չափորոշիչները և առաջարկներ են ներկայացվել տասը ոլորտներից

յուրաքանչյուրի բարելավման ուղղությամբ: Ամփոփիչ մասում ներկայացված են առավել կարևոր բացահայտումներն ու առաջարկները, որոնք կարող են հիմք հանդիսանալ կառավարության կողմից Հայաստանի քաղաքացիական հասարակության միջավայրի բարելավման ուղղությամբ ձեռնարկվող բարեփոխումների համար:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում գեկույցի մշակման աշխատանքներին իրենց ներդրումն ունեցած բոլոր կազմակերպություններին՝ «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոնին», մասնավորապես՝ Էսթեր Հարթային և Լյուբեն Պանովին, ծրագրի գործընկեր մյուս կազմակերպություններին, Փոկուս-խմբային քննարկումների մասնակիցներին, հարցազրույցներին մասնակցած փորձագետներին, խորհրդատվական խմբի անդամներին, մասնավորապես՝ Լուսինե Հակոբյանին, Նունե Պեպանյանին, Ավետիք Իշխանյանին և մյուսներին:

III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Երկրի վերաբերյալ ընդհանուր տվյալներ

Մայրաքաղաք՝ Երևան

Բնակչությունը՝ 2 951 776 (2018)¹

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն՝ 4212,071 ԱՄՆ դոլար (2018)²

Ազատությունն աշխարհում՝ 44/100 (մասամբ ազատ)³

Մամուլի ազատության համաշխարհային ինդեքս՝ 28.98⁴

ՔՀԿ-ների քանակը՝ 4374 հասարակական կազմակերպություն, 1134 հիմնադրամ⁵

Երկրի ընդհանուր իրավիճակը և քաղաքացիական հասարակության զարգացման միտումները

2018 թվականին Հայաստանում խոշոր քաղաքական փոփոխություններ են տեղի ունեցել: Ըստ 2015 թվականի վերջին կայացած հանրաքվեով հաստատված սահմանադրական փոփոխությունների, երկրի՝ կիսանախագահականից դեպի խորհրդարանական հանրապետություն անցումն ավարտին հասավ 2018 թվականի ապրիլին, երբ լրանում էր Սերժ Սարգսյանի նախագահության ժամկետը: Գործադիր իշխանության ղեկավարի դերը փոխանցվեց վարչապետին, և Սերժ Սարգսյանը իշխող՝ Հայաստանի հանրապետական կուսակցության կողմից առաջադրվեց որպես վարչապետի պաշտոնի միակ թեկնածու:

Սարգսյանի առաջադրումը և դրան հաջորդող ընտրությունը Ազգային ժողովի կողմից զանգվածային ցույցերի առիթ դարձան, որոնք ի վերջո հանգեցրին նրա հրաժարականին: Ցույցերի առաջնորդ, ընդդիմադիր պատգամավոր Նիկոլ Փաշինյանը մայիսի 8-ին վարչապետ ընտրվեց և ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչներից կառավարության նոր կազմ ձևավորեց: Մակայն Հանրապետական կուսակցությունը շարունակում էր մեծամասնություն մնալ խորհրդարանում ընդհուպ մինչև 2018 թ. դեկտեմբերի արտահերթ խորհրդարանական ընտրությունները:

1 Համաշխարհային բանկ, <https://data.worldbank.org/country/armenia>:

2 Համաշխարհային բանկ, <https://data.worldbank.org/country/armenia>:

3 Ֆրիդոմ Հաուս, <https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2018>:

4 Մամուլի ազատության համաշխարհային ինդեքս, <https://rsf.org/en/ranking>:

5 ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված կազմակերպությունների վիճակագրությունը՝ 01.04.2019թ. դրությամբ, <http://moj.am/legal/view/article/1224/>:

Այդ ընտրություններին վարչապետի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության շուրջ ձևավորված «Իմ քայլը» դաշինքը հավաքեց քվեների ավելի քան 70 տոկոսը: Սերկայումս այն գերիշխող խմբակցությունն է խորհրդարանում, իսկ խորհրդարանական մյուս կուսակցություններն են «Լուսավոր Հայաստան» և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունները: Նախկին իշխող կոալիցիայի անդամները՝ Հանրապետական կուսակցությունը և Հայ հեղափոխական դաշնակցությունը մասնակցեցին ընտրություններին, բայց չհաղթահարեցին ձայների անհրաժեշտ շեմը: Դեկտեմբերին կայացած ընտրությունները միջազգային կազմակերպությունների և տեղական ՔՀԿ-ների կողմից գնահատվեցին որպես նախորդ ընտրությունների համեմատ շատ ավելի ազատ և արդար:

Մինչև 2018 թ. քաղաքական փոփոխությունները, որոնք հայտնի են որպես «թավշյա հեղափոխություն», միջազգային գեկոյցներում նշվում էր, որ ժողովրդավարական ինստիտուտները Հայաստանում թուլացել են՝ հիմնականում ավտորիտար ռեժիմի ամրապնդման և համակարգային կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքական կամքի բացակայության պատճառով⁶: Սակայն հեղափոխությունից հետո իրավիճակը դրականորեն փոխվեց: «Ազատությունը աշխարհում» 2019 թ. գեկոյցում արձանագրվում են բարելավումներ մի շարք ոլորտներում, այդ թվում՝ ընտրական գործընթացներ, քաղաքական բազմակարծություն, մասնակցություն և հավաքների ազատություն⁷:

«Մամուլի ազատությունը 2017 թ.» գեկոյցում գանգվածային լրատվամիջոցների (ՉԼՍ) կարգավիճակը գնահատվել է «ոչ ազատ», մինչդեռ համացանցի ազատությունը «ազատ» է գնահատվել⁸: 2019 թ. գեկոյցում նշվում է, որ անկախ և հետաքննական ՉԼՍ-ների մեծամասնությունը գործում է առցանց, իսկ տպագիր և հեռարձակող լրատվամիջոցները կապված են քաղաքական կամ խոշոր առևտրային շահերի հետ⁹: 2015-2016 թվականներին, ինչպես նաև 2018 թվականի բողոքի ցույցերի ժամանակ ՉԼՍ-ների նկատմամբ բռնության կիրառման մի շարք դեպքեր են արձանագրվել: Այս միջադեպերի մեծ մասը դեռևս պատշաճ կերպով չի ուսումնասիրվել:

Խոսքի ազատությունը թավշյա հեղափոխությունից հետո, ընդհանուր առմամբ, գնահատվում է բարելավված, թեև տեղի են ունեցել լրատվամիջոցների ճնշումների առանձին դեպքեր¹⁰: «Համացանցի ազատությունը 2018 թ.» գեկոյցում նշվում է, որ Հայաստանում համացանցի ազատությունը բարելավվել է այն բանից հետո, երբ քաղաքացիները սոցիալական մեդիա պլատֆորմների, հաղորդակցման ծրագրերի արդյունավետ օգտագործմամբ քաղաքական

6 Անցումային երկրները 2018 թվականին, Հայաստան, Ֆրիդմ Հաուս:

7 Ազատությունն աշխարհում 2019 թվականին, Հայաստան, Ֆրիդմ Հաուս:

8 Մամուլի ազատությունը 2017 թվականին, Հայաստան, Ֆրիդմ Հաուս:

9 Ազատությունն աշխարհում 2019 թվականին, Հայաստան, Ֆրիդմ Հաուս:

10 Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՍ-ների իրավունքների խախտումների մասին: 2018թ. տարեկան գեկոյց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2019:

փոփոխությունների հասան 2018 թ. ապրիլին¹¹: Միևնույն ժամանակ ՉԼՄ-ներում լայն տարածում է գտել ստելյուրյան խոսքը, որի մասին բարձրաձայնում են ՔՀԿ-ները և մեդիա մասնագետները:

Հայաստանում կան ավելի քան 5000 գրանցված ՔՀԿ-ներ, որոնք ներառում են հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները: Ըստ գնահատականների՝ նրանց մոտ 20 տոկոսն է ակտիվ գործունեություն ծավալում¹²: 2017 թվականին հասարակական կազմակերպություններին առնչվող օրենսդրության կարևոր փոփոխություններ ուժի մեջ մտան: Ըստ այդ փոփոխությունների՝ հեռացվեց ուղղակի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը, կառավարման կառույցներին ավելի շատ ճկունություն տրվեց, կարգավորումներ ներառվեցին կամավորների ներգրավման վերաբերյալ, իսկ բնապահպանական կազմակերպություններին թույլ տրվեց շրջակա միջավայրի խնդիրների վերաբերյալ իրենց շահառուների շահերը ներկայացնել դատարանում¹³: ՔՀԿ-ները և քաղաքացիական ոչ ֆորմալ խմբերն ակտիվ դերակատարություն ունեցան 2018 թվականի գարնան ցույցերի ընթացքում, ինչպես նաև կառավարության հետ հետագա քննարկումներում և արտահերթ խորհրդարանական ընտրությունների մոնիտորինգի գործընթացում: Քաղաքացիական հասարակության շատ ակտիվիստներ ընդգրկվեցին կառավարության նոր կազմում կամ պատգամավոր ընտրվեցին:

Ըստ ԱՄՆ ՄՁԳ-ի ՔՀԿ կայունության ինդեքսի՝ ՔՀԿ-ների ֆինանսական կայունությունը Հայաստանի ՔՀԿ-ների առջև ծառայած հիմնական մարտահրավերներից է, քանի որ ՔՀԿ հատվածը մեծապես կախված է միջազգային դոնորների ֆինանսավորումից¹⁴: Ֆինանսավորման տեղական աղբյուրները փոքրաթիվ են, սակայն ՔՀԿ-ներն աստիճանաբար ավելի շատ են հետաքրքրվում բիզնեսից և անհատներից նվիրատվություններ հավաքագրելու հնարավորություններով:

ՔՀԿ-ների կազմակերպական կարողություններն աստիճանաբար բարելավվում են, հիմնականում դոնորների կողմից ֆինանսավորվող կարողությունների զարգացման ծրագրերի շնորհիվ: ՔՀԿ-ներն ավելի շատ են գիտակցում ներքին կանոնակարգերի և ռազմավարական կառավարման անհրաժեշտությունը, թեև քչերն են այդ մոտեցումները կիրառում իրենց գործունեության ընթացքում: ՔՀԿ-ների կապը շահառու խմբերի հետ, ինչպես նաև գործելակերպի թափանցիկությունը դեռևս բավարար չէ¹⁵:

Ընդհանուր առմամբ, ՔՀԿ-ների նկատմամբ վստահության ցածր

11 Համացանցի ազատությունը 2018 թվականին, Հայաստան, Ֆրիդոմ Հաուս:

12 Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2017թ. ՔՀԿ կայունության ինդեքս, 2018թ. սեպտեմբեր:

13 ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016:

14 Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2017թ. ՔՀԿ կայունության ինդեքս, 2018թ. սեպտեմբեր:

15 Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2017թ. ՔՀԿ կայունության ինդեքս, 2018թ. սեպտեմբեր:

մակարդակ կա: Ըստ Կովկասյան հետազոտական ռեսուրսների կենտրոնների կողմից 2017 թվականին իրականացված «Կովկասյան բարոմետր» հետազոտության՝ հանրության միայն 5%-ն է լիովին վստահում ՔՀԿ-ներին, 18%-ը որոշ չափով է վստահում, իսկ ավելի շուտ չեն վստահում կամ բացարձակ չեն վստահում հարցվողների 29 տոկոսը¹⁶: Ոչ ֆորմալ խմբերը հաճախ ավելի շատ են վայելում հանրային վստահությունը՝ իրենց համայնքների կարիքներին արձագանքելու շնորհիվ, իսկ գրանցված ՀԿ-ներն ասոցացվում են «գրանտակեր» բացասական կարծրատիպի հետ:

Սոցիալական ցանցերի մի շարք հրապարակումներում և քննարկումներում ՔՀԿ-ներին մեղադրում են օտարերկրյա գործակալություններից դրամաշնորհներ ստանալու և արտաքին պատվեր կատարելու համար: Գենդերային հարցերով զբաղվող ՔՀԿ-ները, ինչպես նաև սեռական և կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն իրականացնող, ընտանեկան բռնության գոհերի հետ աշխատող կազմակերպությունները պիտակավորվում են որպես «ավանդական հայկական արժեքները վտանգող» և հաճախ հայտնվում են հակա-ՔՀԿ-ական քարոզարշավների և ատելության խոսքի թիրախում:

Վերջին տարիներին մարդիկ ավելի շատ են նվիրատվություններ անում ՔՀԿ-ներին, թեև բարեգործության մշակույթն ընդհանուր առմամբ ցածր մակարդակի վրա է: ՔՀԿ-ները և ոչ ֆորմալ խմբերը հաջողության են հասնում աղքատ և խոցելի ընտանիքներին, հիվանդ երեխաներին, գոհված զինվորների ընտանիքներին աջակցելու և նմանատիպ այլ նպատակների համար նախաձեռնած հանրային դրամահավաքների ժամանակ: Ավելանում է քրաուդֆանդինգի հարթակների օգտագործումը: ՔՀԿ-ները հաճախ են օգտվում կամավորների աջակցությունից, հատկապես երիտասարդական կազմակերպությունների և ոչ ֆորմալ խմբերի դեպքում: Ըստ «Բարեգործության աջակցության հիմնադրամի» բարեգործության համաշխարհային ինդեքսի՝ հարցված հայաստանցիների 15%-ը նվիրատվություններ է կատարում, իսկ 9%-ը կամավորական աշխատանք է կատարել¹⁷, ինչը բարելավում է ցույց տալիս 2017 թվականի նույն ցուցանիշների՝ համապատասխանաբար 12% և 4%-ի համեմատ¹⁸:

16 Կովկասյան բարոմետր (ԿԲ) 2017, Հարավկովկասյան երկրներում քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացումների հանրային ընկալումը (2017թ. նոյեմբերի դրությամբ), 19 դեկտեմբեր, 2017թ.:

17 «Բարեգործության աջակցության հիմնադրամի» բարեգործության համաշխարհային ինդեքս 2018:

18 «Բարեգործության աջակցության հիմնադրամի» բարեգործության համաշխարհային ինդեքս 2017:

IV. ՔՀԿ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ

4.1 Միավորումների ազատություն

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1. ՅՈՒՐԱՔԱՆՅՈՒՐ ՈՔ ԱՉԱՏՈՐԵՆ ԿԱՐՈՂ Է ՔՀԿ ՍՏԵՂԾԵԼ, ՄԱՍՆԱԿՑԵԼ և ԱՆԴԱՄԱԿՑԵԼ ՔՀԿ-ԻՆ:

Հայաստանում յուրաքանչյուր ոք կարող է միավորում հիմնել՝ անչափահասների դեպքում որոշակի վերապահումով, քանի որ նրանք միավորում կարող են հիմնել իրենց օրինական ներկայացուցիչների միջոցով: Որպես իրավաբանական անձ գրանցվելու որևէ պարտադիր պահանջ, ինչպես նաև առցանց եղանակով միավորվելու դեպքում որևէ սահմանափակում չկա:

Ըստ ՀՀ սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ մասնավոր միավորման: Միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով¹⁹:

ՔՀԿ-ների ստեղծումն ու գործունեությունը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և «Հասարակական կազմակերպությունների մասին» ու «Հիմնադրամների մասին» օրենքներով: Հայաստանի օրենսդրության մեջ «ՔՀԿ» հասկացությունը չի կիրառվում: Փոխարենը առավել հաճախ կիրառվում են «ոչ պետական» և կամ «ոչ առևտրային կազմակերպություններ» հասկացությունները: Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի²⁰՝ ոչ առևտրային կազմակերպությունները ներառում են հասարակական միավորումներ և հիմնադրամներ²¹: Ընդ որում, հասարակական միավորումները ներառում են կազմակերպությունների մի շարք տեսակներ՝ հասարակական կազմակերպություններ, կրոնական կազմակերպություններ, քաղաքական կուսակցություններ և արհեստակցական կազմակերպություններ: Քանի որ «ՔՀԿ չափիչը» չի դիտարկում քաղաքական կուսակցությունների, կրոնական

19 ՀՀ սահմանադրություն, 05.07.1995թ., փոփոխված 06.12.2015թ., հոդված 45:

20 ՀՀ քաղաքացիական օրենսգրք, 05.05.1998, Գլուխ 5 իրավաբանական անձինք, § 4 Ոչ առևտրային կազմակերպություններ:

21 Մինչ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2016 թվականի դեկտեմբերի փոփոխությունները, որոնք ընդունվեցին «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքի հետ մեկտեղ, քաղաքացիական օրենսգրքում սահմանված էր ոչ առևտրային կազմակերպությունների ևս մեկ տեսակ՝ իրավաբանական անձանց միություններ: Ընդունված փոփոխությունների համաձայն, հասարակական կազմակերպություն կարող են հիմնադրել ոչ միայն ֆիզիկական, այլև իրավաբանական անձինք, ուստի իրավաբանական անձանց միությունները պետք է մինչև 2019 թվականի փետրվար վերակազմավորվեն հասարակական կազմակերպությունների (ՀՀ օրենքը «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 16.12.2016, հոդված 6) :

կազմակերպությունների և արհմիությունների գործունեության միջավայրը, ուստի այս զեկույցի շրջանակներում իրավաբանական գրանցում ունեցող ՔՀԿ-ներ ասելով՝ նկատի կունենանք հասարակական կազմակերպություններն ու հիմնադրամները:

Ըստ օրենքի՝ հասարակական կազմակերպությունը (ՀԿ) կարող է հիմնադրվել երկու և ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից, իսկ հիմնադրամը՝ մեկ անձի կողմից: ՀԿ չեն կարող հիմնադրել կամ դրա անդամ չեն կարող լինել կուսակցությունները, կրոնական կազմակերպությունները, արհեստակցական միությունները, ինչպես նաև օրենքով ՀԿ հիմնելու կամ նրա անդամ դառնալու իրավասություն չունեցող իրավաբանական անձինք²²: Ֆիզիկական անձանց անդամակցության սահմանափակումներ են նախատեսված անչափահասների համար, այն է՝ մինչև տասնչորս տարեկան անձը ՀԿ անդամ կարող է դառնալ իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա, իսկ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անձը ՀԿ անդամ կարող է դառնալ իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ²³: Անչափահասներն իրենց իրավական ներկայացուցիչների միջոցով կարող են նաև կազմակերպություն հիմնադրել: Հիմնադիրների քաղաքացիության, ազգության կամ բնակության վայրի հետ կապված որևէ սահմանափակում չկա:

Հայաստանում ՔՀԿ-ները կարող են գործել նաև առանց գրանցվելու և իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելու, պարզապես այդ դեպքում չեն կարող բանկային հաշիվ բացել կազմակերպության անունով և ֆինանսական գործարքներ կատարել: Բազմաթիվ նախաձեռնող խմբեր են ձևավորվում և գործում առցանց եղանակով՝ հիմնականում ֆեյսբուքյան խմբերի միջոցով:

Հարցազրույցների, ՖԻՄ քննարկումների և առցանց հարցման մասնակիցները ՔՀԿ-ների ստեղծման ու անդամակցության հետ կապված էական գործնական խոչընդոտներ չեն նշել: Առանձին ՔՀԿ ներկայացուցիչներ բարձրաձայնել են պետական ծառայողների, ոստիկանության ու զինվորական ուժերի ներկայացուցիչների համար ՔՀԿ-ների անդամակցության կամ մասնակցության սահմանափակումները: Թեև նման սահմանափակումներ օրենքով չկան, բայց առկա է որոշակի կաշկանդվածություն: Մյուս խոչընդոտները, որ հաճախ նշվել են ՔՀԿ-ների կողմից, կապված են գրանցման վարչարարության հետ, որին կանդիդատներն հաջորդ չափորոշիչները:

22 ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 10:

23 ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 5:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2. ՔՀԿ-Ն ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀՍՏԱԿ Է, ՊԱՐԶ, ԱՐԱԳ և ՈՉ ԹԱՆԿ:

Գրանցման ընթացակարգը պարզ է և արագ, թեև կարող են ՔՀԿ կանոնադրության վերանայման անհիմն պահանջներ լինել: Պետական ռեգիստրի մարզային գրասենյակների աշխատակիցների գիտելիքները և վերաբերմունքը բարելավելու անհրաժեշտություն կա:

ՔՀԿ-ների, ինչպես և բոլոր իրավաբանական անձանց գրանցումը Հայաստանում իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը (այսուհետ՝ պետռեգիստր): ՀԿ պետական գրանցումը, վերագրանցումը, կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումը կամ գրանցման մերժումը կատարվում է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ ոչ ուշ, քան տասն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հիմնադրամների գրանցումը՝ ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Հիմնադրամների և ՀԿ-ների գրանցման համար վճարվող պետական տուրքը կազմում է 10000 դրամ, իսկ փոփոխություն գրանցելու դեպքում՝ 5000 դրամ: ՖԻՍ քննարկումների մասնակից ՔՀԿ-ների ներկայացուցիչները հիմնականում բավարարված են գրանցման ժամկետներով, սակայն որոշ ՔՀԿ-ներ գտնում են, որ գանձվող տուրքի գումարը պետք է նվազեցվի:

Օրենսդրությունը հստակ սահմանում է այն փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ է ներկայացնել գրանցման համար, և այդ ցանկը հրապարակված է նաև Էլեկտրոնային ռեգիստրի կայքում²⁴: Թեև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված է նաև փաստաթղթերը Էլեկտրոնային համացանցով ներկայացնելու հնարավորությունը, ՔՀԿ-ների գրանցման համար անհրաժեշտ է փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ թղթային տեսքով, քանի որ Էլեկտրոնային եղանակով ՔՀԿ-ների գրանցման համար դեռևս մեխանիզմներ չկան: Մինչև 2018 թվականի գարուն փաստաթղթերը անհրաժեշտ էր ներկայացնել անմիջապես Երևանում տեղակայված պետռեգիստրի գրասենյակ, սակայն 2018-ից հնարավորություն տրվեց նաև փաստաթղթերն ուղարկել պետռեգիստրի մարզային գրասենյակների միջոցով:

Գրանցման մերժման իրավական հիմքերը հիմնականում կապված են կազմակերպության առաջարկվող անվանման՝ այլ կազմակերպության անվանման հետ համընկնելու կամ օրենքին չհամապատասխանելու, կանոնադրության՝ օրենքի հետ հակասության, ներկայացված փաստաթղթերի՝ օրենքով սահմանված ցանկին չհամապատասխանելու հետ: Գործնականում կազմակերպությունները կարող են մերժման հանդիպել տարրական տառասխալների, կետադրական նշանների հետ

24 Պետական գրանցման/հաշվառման/ համար անհրաժեշտ փաստաթղթեր, տուրքերի դրույքաչափեր և ժամկետներ, ՀՀ կառավարության Էլեկտրոնային ռեգիստր, <https://www.e-register.am/am/docs/49> :

կապված թերացումների կամ կառավարության կողմից սահմանված կանոնադրության նմուշից տարբերվող՝ ոչ ստանդարտ ձևակերպումների պատճառով: Մասն մոտեցումը ՔՀԿ-ների կողմից մեկնաբանվում է որպես ավելորդ վարչարարություն: Հարկ է նշել, որ օրենքով փաստաթղթերի, մասնավորապես կանոնադրության վերանայման հնարավորությունն ու ժամկետ չի տրված, որի պատճառով կանոնադրության փոքր թերացումների համար կազմակերպության գրանցումը կարող է մերժվել, և հարկավոր է նորից դիմում ներկայացնել: Մյուս կողմից էլ, պետոեգիստրի աշխատակիցները, նման դեպքերում ընդատաջելով, փորձում են մինչև նախատեսված ժամկետը կապ հաստատել կազմակերպության հիմնադիրների հետ և առաջարկում են շտապ կարգով փոփոխված տարբերակ բերել: Որպես կանոն՝ կազմակերպությունները կատարում են պահանջվող փոփոխությունները, որպեսզի պետական գրանցում ստանան, քանի որ դատական վիճարկումը ժամանակատար և թանկ գործընթաց կարող է լինել:

Երևանում գրանցված կազմակերպությունները նշում են սպասարկման քարձր մակարդակի, պատրաստական ու սիրալիք վերաբերմունքի մասին, սակայն մարզային գրասենյակներում ոչ միշտ է այդպիսի վերաբերմունք ցուցաբերվում: Այսպես, հարցման մասնակիցներից մեկը նշել է՝ «մարզերում գործող պետոեգիստրի աշխատակիցները նախկինում չեն զբաղվել ՀԿ գրանցմամբ, ունեն գիտելիքի պակաս և բավականին անբարյացակամ են վերաբերվում իրենց վրա դրված այդ նոր պարտավորությանը»: Մասնատիպ խնդիրներ են նշել նաև ՖԻՄ քննարկումների՝ մարզերում գրանցված այլ ՔՀԿ ներկայացուցիչներ: Երկու մարզերի դեպքում պետոեգիստրի աշխատակիցներն անգամ տեղյակ չեն եղել, որ ունեն ՀԿ գրանցումը կազմակերպելու պարտավորություն և փորձել են մերժել ՔՀԿ հիմնադիրներին՝ նրանց ուղղորդելով Երևանի գրասենյակ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3. ՔՀԿ-ՆԵՐՆ ԱԶԱՏ ԵՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԻՐԵՆՑ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ և ԿԱՐՈՂ ԵՆ ԳՈՐԾԵԼ ԻՆՉՊԵՍ ԻՐԵՆՑ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆԵՐՈՒՄ, ԱՅՆՊԵՍ ԵՆ ԱՅՂ ՍԱՀՄԱՆԵՐԻՑ ԴՈՒՐՄ:

ՔՀԿ-ները կարող են ցանկացած օրինական նպատակ սահմանել՝ պայմանով, որ այդ նպատակները վերապահված չեն միավորումների այլ տեսակներին, օրինակ՝ կրոնական կազմակերպություններին, արհեստակցական կազմակերպություններին կամ քաղաքական կուսակցություններին:

ՔՀԿ-ների գործունեության նպատակները սահմանվում են կանոնադրությամբ: Ըստ օրենքի՝ արգելվում է այնպիսի նպատակների սահմանումը, որոնք համարվում են այլ հասարակական միավորումների առանձնահատկություններով պայմանավորված օրենքով ուղղակիորեն նախատեսված իրավունք²⁵, օրինակ՝ կրոնական կամ արհեստակցական

25 ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 3

կազմակերպությունների ու քաղաքական կուսակցությունների²⁶:
Գործունեության տարածքի առումով օրենքով սահմանափակումներ նախատեսված չեն: Օրենքը սահմանում է կազմակերպությունների՝ միջազգային և օտարերկրյա ոչ առևտրային կազմակերպություններին անդամակցելու, միջազգային այլ կապեր ունենալու, այլ երկրներում ստորաբաժանումներ ստեղծելու իրավունքը²⁷:

Տվյալ մոնիտորինգի շրջանակներում այս չափորոշի հետ կապված գործնական խոչընդոտներ չեն բացահայտվել: Գործունեության նպատակների և տեսակների հետ առկա խնդիրները կարող են կապված լինել որոշակի թեմաների վերաբերյալ հանրության անհանդուրժողականության, ատելության խոսքի դրսևորումների հետ, որոնք կդիտարկվեն խոսքի ազատությանը և պետության կողմից պաշտպանության պարտականությանը վերաբերող ոլորտներում:

ԶԱՓՈՐՈՇԻՉ 4. ԿԻՐԱՌՎՈՂ ՑԱՆԿԱՑԱԾ ՊԱՏԺԱՄԻՋՈՑ ՀՍՏԱԿ Է, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՀԱՄԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒԼՔԻՆ և ՑԱՆԿԱԼԻ ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ Է ՆԱԽԱՏԵՍՈՒՄ:

Իրավական պահանջներին չենթարկվող ՔՀԿ-ների համար օրենքով աստիճանական պատժամիջոցներ են սահմանված: Պետական եկամուտների կոմիտեում 2017 թ. ստեղծվեց ՔՀԿ-ների հսկողության հատուկ բաժին, սակայն ՔՀԿ-ների գործունեության վերահսկողության շրջանակն ու ընթացակարգերը պարզ չեն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքը վարչական պատասխանատվություն է նախատեսում ՀԿ-ի և հիմնադրամի կողմից հաշվետվությունը չհրապարակելու և ՀԿ-ի կողմից կանոնադրության նպատակներին անհամապատասխան գործունեություն իրականացնելու համար²⁸: Այն դեպքում, երբ ՔՀԿ-ն օրենքով սահմանված կարգով նախագգուշացվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում պահանջը չի կատարում, ենթարկվում է տուգանքի՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի (ներկայումս այդ գումարը կազմում է 50000 դրամ) չափով: Տուգանքի նշանակման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում նախագգուշացման պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

26 Ըստ «Քաղաքական կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի՝ քաղաքական կուսակցությունը «քաղաքացիների կամավոր միավորում է, որի նպատակը հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելն է» (ՀՀ սահմանադրական օրենքը «Քաղաքական կուսակցությունների մասին» 16.12.2016, հոդված 2): Ըստ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի՝ կրոնական կազմակերպությունը «հավատի համատեղ դավանության, ինչպես նաև կրոնական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված քաղաքացիների միավորում է» (ՀՀ օրենքը «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին», 17.06.1991, հոդված 4): Ըստ «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի՝ արհեստակցական կազմակերպությունը հասարակական միավորում է, որն «օրենքով սահմանված կարգով և ազատ կամքի դրսևորումով միավորում է տվյալ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողներին՝ իրենց աշխատանքային ու դրա հետ կապված մասնագիտական, տնտեսական, սոցիալական իրավունքներն ու շահերը ներկայացնելու և աշխատանքային հարաբերություններում դրանք պաշտպանելու նպատակով» (ՀՀ օրենքը «Արհեստակցական միությունների մասին», 05.12.2000, հոդված 2):

27 ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 28:

28 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, 06.12.1985, հոդված 169.18, 169.26, 169.27:

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի չափով: Այս քայլերից հետո պահանջը չկատարելու դեպքում կազմակերպության հանդեպ վարույթ է հարուցվում, և կազմակերպության գործունեությունը կարող է դատական կարգով կասեցվել: ՀԿ կանոնադրության նպատակներին անհամապատասխան գործունեությունն իրականացնելու համար տուգանքի կիրառման դեպքեր չեն գրանցվել, սակայն հաշվետվության կամ հարկային վարչարարության պահանջների չկիրառման դեպքում հնարավոր է, որ տուգանքներ կիրառված լինեն:

Օրենքի պահանջների կատարման նկատմամբ ՀԿ-ների և հիմնադրամների վերահսկողությունն իրականացնում է լիազոր մարմինը, այն է՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ): Սակայն հստակեցված չեն վերահսկողության կարգը, ռիսկայնության գնահատման չափորոշիչները, որոնցով պետք է առաջնորդվի լիազոր մարմինը հսկողությունն իրականացնելիս: Նախկինում (մինչև 2017 թ. փետրվար) ՊԵԿ-ը իրականացնում էր ոչ առևտրային կազմակերպությունների հարկային վարչարարության վերահսկողությունը, իսկ ՔՀԿ-ների գործունեության օրինականության վերահսկողությունը վերապահված էր ՀՀ արդարադատության նախարարությանը: Մինչև 2017 թ. փետրվարը, վերահսկման գործնական մեխանիզմների և ընթացակարգերի բացակայության պայմաններում գործնականում այս հսկողությունը գրեթե չէր իրականացվում:

Ըստ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի՝ ՀԿ-ների կասեցման հիմքերի թվում են կազմակերպության գործունեության ընթացքում օրենքի կոպիտ խախտումը կամ կազմակերպություն հիմնադրելիս օրենքի էական խախտումը կամ կեղծիքը: Ըստ օրենքի՝ լիազոր մարմինը հասարակական կազմակերպության հարկադիր լուծարման պահանջով դիմում է դատարան, եթե կազմակերպությունը գործունեության ընթացքում իրականացրել է սահմանադրական կարգը բռնի տապալելու կամ ատելություն բորբոքելու կամ բռնություն կամ պատերազմ քարոզելու գործողություն, կամ էլ կազմակերպության գործունեությունը օրենքով սահմանված կարգով կասեցվել է, և կասեցման ժամանակահատվածում կամ մեկ տարվա ընթացքում կասեցման հիմքը չի վերացվել²⁹: Լիազոր մարմնի՝ կազմակերպության հարկադիր լուծարման պահանջը պետք է լինի պատճառաբանված՝ նշելով այն օրենքը կամ այլ իրավական ակտը, որի խախտումը հիմք է կազմակերպության լուծարման համար, և ներկայացնելով խախտման փաստը հաստատող ապացույցներ: Հիմնադրամների լուծարման հիմքերն ավելի մեծաթիվ են. դրանք գործունեության և կամ հիմնադրման ընթացքում օրենքի կոպիտ խախտումների կամ կեղծիքների առկայությունից բացի, ներառում են նաև հիմնադրամի գործունեության իրականացման համար գույքի անբավարար լինելը, կանոնադրությամբ նախատեսված նպատակներից

29 ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 32:

շեղվելը, հիմնադրամի նպատակներին հասնելու անհնարինությունը, պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների ու ազատությունների վտանգումը³⁰: Ցանկացած դեպքում, հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների գործունեության կասեցումը և լուծարումը կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ³¹:

Հարցված փորձագետները և ՖԻՄ քննարկման մասնակիցները չեն մտաբերել այնպիսի դեպքեր, երբ որևէ կազմակերպության գործունեությունը կասեցվել է վերոնշյալ հիմքերով: Հաշվետվության չներկայացման կամ ոչ ճշգրիտ տվյալների ներկայացման դեպքում նախագգուշացման միջոցով հնարավորություն է տրվել սահմանված ժամկետներում վերանայել տվյալները և կամ հրապարակել հաշվետվությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՄԻՋԱՄՏՈՒՄ ԲՀԿ-ՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻՆ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ:

Օրենքն արգելում է պետության միջամտությունը ՀԿ-ների գործունեությանը, մինչդեռ հիմնադրամները կարող են ղեկավարվել պետական մարմինների և (կամ) պաշտոնատար անձանց կողմից: Հաշվետվության պահանջները նույնպես տարբեր են. ՀԿ-ները պետք է գործունեության տարեկան հաշվետվություն ներկայացնեն միայն այն դեպքում, երբ աջակցություն են ստացել հանրային միջոցներից, մինչդեռ հիմնադրամներից պահանջվում է տարեկան հաշվետվություններ ներկայացնել՝ անկախ եկամտի աղբյուրից:

ՀԿ-ներն, ըստ օրենքի, ինքնուրույն են որոշում իրենց կազմակերպական կառուցվածքը, գործունեության առարկան, նպատակները և ձևերը, իսկ պետական մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ) և նրանց պաշտոնատար անձանց արգելվում է միջամտել կամ խոչընդոտել ՀԿ-ների օրինական գործունեությանը³²: «Հիմնադրամների մասին» օրենքով պետության միջամտության վերաբերյալ հատուկ դրույթ չկա: Օրենքում նշված է, որ հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների՝ հոգաբարձուների խորհրդի և կառավարչի միջոցով³³: Հայաստանում կան հիմնադրամներ, որոնք հիմնադրված են ՀՀ կառավարության կողմից, իսկ հոգաբարձուների խորհրդում ընդգրկված են պետական պաշտոնյաներ: Ի տարբերություն ՀԿ-ների՝ հիմնադրամների նման կառուցվածքն օրենքով ընդունելի է համարվում, և տվյալ դեպքում հիմնադրամն իր էությանը նմանվում է պետական ոչ առևտրային կազմակերպության, որը պետական մարմինների կողմից հիմնադրված մեկ այլ կազմակերպաիրավական տեսակ է:

Ինչպես նշվեց, ՀԿ-ների և հիմնադրամների կողմից օրենքների պահանջների կատարման վերահսկողությունը վերապահված է ՊԵԿ-

30 ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 34:

31 ՀՀ սահմանադրություն, 05.07.1995թ., փոփոխված 06.12.2015թ., հոդված 45:

32 ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 9:

33 ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 21:

ին³⁴: Այս նպատակով ՊԵԿ կազմում ստեղծվել է «Ոչ առևտրային կազմակերպությունների հսկողության բաժին», որի գործառույթները նկարագրված են ՊԵԿ պաշտոնական կայքէջում և ներառում են՝ ոչ առևտրային կազմակերպությունների՝ հիմնադրամների, ՀԿ-ների և Հայաստանում գործող միջազգային կամ օտարերկրյա առանձնացված ստորաբաժանումների կողմից «Հասարակական կազմակերպությունների» և «Հիմնադրամների մասին» օրենքների պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը, օրենքով սահմանված կարգով և դեպքերում կազմակերպությունների իրազեկումը, հաշվետվությունների և այլ փաստաթղթերի ընդունումը, ուսումնասիրությունների կատարումը և օրենսդրության համապատասխանության գնահատումը³⁵: Բացի այդ, քանի որ ՊԵԿ-ի հիմնական գործառույթները կապված են հարկային և մաքսային հսկողության և վարչարարության հետ, ՊԵԿ-ը պատասխանատու է նաև բոլոր կազմակերպությունների հարկային վերահսկողության համար:

Ըստ հարցված փորձագետների՝ անհրաժեշտություն կա հստակեցնել ՊԵԿ-ի նոր ստորաբաժանման հսկողության շրջանակները, ստուգման ու պատասխանատվության ենթարկելու չափորոշիչները, «կոպիտ խախտումների» սահմանումը, որպեսզի ՔՀԿ-ների կողմից ավելի հասկանալի ու կանխատեսելի լինի պետական վերահսկողության իրականացումը: Հարցված ՔՀԿ-ների ու ՖԻՍ քննարկման մասնակիցների կողմից ֆինանսական վերահսկողությունից զատ ՔՀԿ-ների գործունեության օրինականության ստուգման դեպքեր չեն արձանագրվել, սակայն նոր վերահսկող մարմնի գործառույթների անորոշության համատեքստում մտահոգություն կա, որ ստուգումների դեպքում հնարավոր կլինեն կամայականության դրսևորումներ և անհարկի միջամտություններ:

ՔՀԿ-ների հաշվետվությունների կարգը և օրինակելի ձևերը հստակ սահմանված են ՊԵԿ նախագահի հրամաններով³⁶: Բոլոր հիմնադրամները պարտավոր են տարեկան հաշվետվություններ հրապարակել իրենց գործունեության մասին Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am), որի համար համապատասխան վճարում են կատարում՝ կախված հաշվետվության նիշերի քանակից: ՀԿ-ները նման հաշվետվություն հրապարակելու պարտավորություն ունեն միայն այն դեպքում, եթե հաշվետու տարվա ընթացքում կազմակերպության գույքի ստացման

34 ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 27, ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 38:

35 ՀՀ պետական եկամուտների կոմիտե, Ոչ առևտրային կազմակերպությունների հսկողության բաժին, <http://www.petekamutner.am/asStructuralUnits.aspx?itn=asDivisions&suid=1019>:

36 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի «Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության օրինակելի ձևը, լրացման, հրապարակման և ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի փետրվարի 13-ի թիվ 59-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N102-Ն հրաման, 15.02.2019 և «Հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվության ձևը, լրացման կարգը, հաշվետվության հրապարակման և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացման կարգը հաստատելու մասին» N 58-Ն հրաման, 24.02.2017:

աղբյուր են հանդիսացել հանրային միջոցները (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և այլ հանրային միջոցներ տնօրինող մարմնի կամ իրավաբանական անձի միջոցները): Ընդ որում, սկսած 2018 թ. հաշվետու տարվանից՝ հաշվետվությունը հրապարակվում է ՊԵԿ պաշտոնական կայքում անվճար հիմունքներով: ՖԽ քննարկումներին մասնակցած որոշ մարզային ՀԿ-ներ նշում են տեղական հարկային տեսչությունների կողմից ստացած զանգերի և հաշվետվություն ներկայացնելու հիշեցումների մասին, թեև տվյալ ՀԿ-ները հանրային միջոցներից եկամուտ չեն ունեցել նախորդ տարի և հետևաբար պարտավոր չեն եղել ներկայացնել այդ հաշվետվությունը:

2018 թվականի հոկտեմբերին ՊԵԿ-ը ՀԿ-ների և հիմնադրամների մասին օրենքների փոփոխությունների նախագծեր հրապարակեց: Ըստ նախագծերի՝ նախատեսվում էր ավելացնել ՀԿ-ների ու հիմնադրամների հաշվետվությունների պահանջները՝ ներառելով նվիրատուների, ինչպես նաև կազմակերպության միջոցներից օգտված անդամների, կառավարման մարմիններում և աշխատակազմում ընդգրկված անձանց և կամավորների անունները: Բացի այդ, նախատեսվում էր տարեկան հաշվետվությունը պարտադիր դարձնել բոլոր ՀԿ-ների համար՝ անկախ նրանից, թե հանրային միջոցներից ֆինանսավորում ստացել են, թե ոչ³⁷: ԶՀԿ-ներից շատերը քննադատեցին օրինագծերը՝ առաջարկվող պահանջները համարելով չհիմնավորված և անհամաչափ բեռ³⁸:

Արձագանքելով մտահոգություններին՝ 2019 թվականի փետրվարին ՊԵԿ նախագահի հրամանով «Հիմնադրամների մասին» և «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերը լրամշակելու նպատակով ստեղծվեց աշխատանքային խումբ՝ ԶՀԿ-ների ներգրավմամբ: Վերջինս մի քանի հանդիպում ունեցավ մարտ-հունիս ամիսների ընթացքում, և այդ հանդիպումների արդյունքների հիման վրա օգոստոսի վերջին ՀԿ-ների և հիմնադրամների մասին օրենքներում փոփոխությունների նոր նախագծեր հրապարակվեցին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքում՝ հանրային քննարկման նպատակով³⁹: Նոր նախագծերից հանվել է դոնորների և շահառուների անունները ներկայացնելու պահանջը, նախատեսվել են ընդհանուր տվյալներ, որոնց վերաբերյալ

37 «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/1283>; «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/1282> :

38 Դիմում-դիրքորոշում՝ ուղղված Պետական եկամուտների կոմիտեի նախագահին, 13 նոյեմբերի 2018, <https://ccd.armla.am/7875.html>, Հայտարարություն «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից առաջարկվող «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, 16 նոյեմբերի 2018, <https://transparency.am/hy/statements/view/305> :

39 «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/1912>; «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/1914> :

պետք է հաշվետու լինի կազմակերպությունը, օրինակ՝ տարեկան մուտքերի ընդհանուր գումարը, ծախսերը, իրականացված ծրագրերի նկարագրերը և ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ տեղեկություններ: Միաժամանակ, պահպանվել է բոլոր ՀԿ-ների կողմից հաշվետվություն ներկայացնելու պահանջը: Օրենսդրական փոփոխությունների ընդունման դեպքում վտանգ է առաջանում, որ հասարակական կազմակերպությունների իրազեկվածության պակասի պատճառով հաշվետվությունների ներկայացման պահանջի խախտման բազմաթիվ դեպքեր կարող են լինել: Մյուս կողմից, քանի որ մեծ թվով կազմակերպություններ, իրավական գրանցում ունենալով, դե ֆակտո գործունեություն չեն ծավալում, անհարկի թղթաբանությունից խուսափելու համար նրանք կարող են դիմել լուծարման քայլի, որը կօգնի գործող ՔՀԿ-ների վիճակագրության ավելի իրատեսական պատկեր ունենալ: Այս նպատակով անհրաժեշտ կլինի նաև հեշտացնել ՔՀԿ-ների լուծարման գործընթացը:

ՈԼՈՐՏ 1-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Պետական ռեգիստրի կողմից ՔՀԿ-ների գրանցման հարցում ճկունություն ապահովել՝ մեղմացնելով ձևական սխալների, կետադրության կամ ոչ ստանդարտ ձևակերպումների պատճառով կանոնադրության վերանայման պահանջը և բացառելով գրանցման մերժումը նշված հիմքերով:
- Միջանկյալ ժամկետ նախատեսել փաստաթղթերը վերանայելու և փոփոխված տարբերակ առաջարկելու համար, օրինակ՝ 5-օրյա ժամկետ սահմանել պետական ռեգիստրի կողմից պատասխանելու համար, որից հետո որոշակի ժամկետ տալ վերանայված տարբերակի ներկայացման համար՝ առանց լրացուցիչ վճար պահանջելու:
- Դյուրացնել ՔՀԿ-ների գրանցման, գործունեության և լուծարման հետ կապված վարչարարական գործընթացները, այդ թվում՝
 - Էլեկտրոնային (առցանց) եղանակով գրանցվելու, իսկ հետագայում՝ տվյալների փոփոխություն կատարելու հնարավորություն տալ:
 - Կազմել գրանցման, հաշվետվությունների ներկայացման, վերակազմակերպման և լուծարման գործընթացի վերաբերյալ մատչելի ուղեցույցներ:
 - Համագործակցություն հաստատել ՊԵԿ համապատասխան ստորաբաժանման և ՔՀԿ-ներին վարչարարության հարցերում խորհրդատվություն տրամադրող կազմակերպությունների միջև՝ ՔՀԿ-ների շրջանում հաշվետվությունների և այլ վարչարարության շուրջ իրազեկման աշխատանքների և աջակցության տրամադրման նպատակով:

- Հստակեցնել ՔՀԿ-ների պետական վերահսկողության կարգը, շրջանակները, չափորոշիչները՝ համապատասխան իրավական ակտի միջոցով, որը կքննարկվի ՔՀԿ-ների հետ և հասանելի կլինի նրանց:
- Բարելավել պետագիտորի ու հարկային տեսչությունների ներկայացուցիչների, մասնավորապես մարզային գրասենյակների աշխատակիցների իրազեկվածությունը ՔՀԿ-ներին առնչվող օրենսդրական դաշտի վերաբերյալ:

4.2 Հավասար վերաբերմունք

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՀԱՎԱՍԱՐ ԿԵՐՊՈՎ Ե ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ՔՀԿ-ՆԵՐԻՆ և ԱՌԱՏՐԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ:

Գրանցման և որոշ դեպքերում՝ հարկման կանոնակարգերը ավելի բարենպաստ են առևտրային ընկերությունների համար՝ ՔՀԿ-ների համեմատ: Միևնույն ժամանակ, ՔՀԿ-ները զգալիորեն ավելի քիչ են ենթարկվում հարկային ստուգումների, քան ընկերությունները:

Որոշ կարգավորումներ ՔՀԿ-ներին առևտրային ընկերությունների համեմատ անբարենպաստ դիրքում են դնում: Մասնավորապես, ՔՀԿ-ները չեն կարող գրանցվել էլեկտրոնային եղանակով՝ ի տարբերություն ընկերությունների, իսկ գրանցման համար գանձվող պետական տուրքը կազմում է 10000 դրամ, մինչդեռ ՄՊԸ-ները գրանցման համար տուրք չեն վճարում, իսկ անհատ ձեռներեցները վճարում են 3000 դրամ: Տարբերվում է նաև գրանցման առավելագույն ժամանակահատվածը՝ անհատ ձեռներեցները գրանցվում են անմիջապես դիմումի օրը, առևտրային ընկերությունները՝ 2 օրվա ընթացքում, իսկ ՔՀԿ-ները՝ 10 կամ 15 օրվա ընթացքում՝ կախված կազմակերպատիրական ձևից: Ինչպես նշվեց վերը, ՔՀԿ-ների կանոնադրությունը մանրակրկիտ ուսումնասիրության առարկա է դառնում պետական գրանցման մարմնի կողմից, մինչդեռ առևտրային կազմակերպությունների կանոնադրության համապատասխանությունն օրենքի պահանջներին չի ստուգվում, ստուգվում է միայն ներկայացված կանոնադրության ամբողջականությունն ու օրենքով սահմանված տեղեկությունների ներառումը⁴⁰:

Ուղղակի ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու դեպքում ՔՀԿ-ները պարտավոր են վճարել շահութահարկ, որը գործունեության տեսակների մեծ մասի համար կազմում է 20 տոկոս⁴¹: ՔՀԿ-ները նաև ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) վճարող են դառնում, եթե նրանց տարեկան շրջանառությունը գերազանցել է որոշակի շեմը: Մինչև 2019 թ. հունիսի 29-ը այդ շեմը կազմում էր 58,35 միլիոն ՀՀ դրամ, սակայն

40 ՀՀ օրենքը «իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», 03.04.2001, հոդված 35:

41 ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 125:

հունիսին ընդունված՝ Հարկային օրենսգրքի փոփոխությունների համաձայն, այս շեմը դարձավ 115 միլիոն ՀՀ դրամ: Միևնույն ժամանակ, ՀՀ հարկային օրենսգրքով առևտրային ընկերությունների համար նախատեսված է շրջանառության հարկի հնարավորություն (այս հարկը կարող է կազմել 1,5-ից 25 տոկոս՝ կախված գործունեության տեսակից, սակայն շատ դեպքերում 5 տոկոս է⁴²), որի դեպքում շահութահարկ և ԱԱՀ չի նախատեսվում⁴³:

2017 թվականի փետրվարին ուժի մեջ մտավ «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքը, ըստ որի ՀԿ-ները կարող են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել՝ ի տարբերություն նախորդ տարիների: Սա նշանակում է, որ ՀԿ-ները, ինչպես նաև հիմնադրամները, կարող են մասնակցել պետական գնումների մրցույթներին՝ առևտրային ընկերությունների հետ հավասար հիմունքներով: Սակայն ՀԿ-ները առևտրային ընկերությունների համեմատ անբարենպաստ դիրքում են հայտնվում նաև պետական գնումներին մասնակցելիս, քանի որ հանրային միջոցներից տարեկան 5 միլիոնից ավելի ֆինանսավորում ստանալու դեպքում նրանք պարտադիր աուդիտ պետք է անցնեն այդ միջոցների ծախսման մասով: Դա նշանակում է, որ պետական գնումների մրցույթներին մասնակցելիս ՀԿ-ները պետք է նախահաշվարկում ներառեն նաև աուդիտի ծախսը, որը բերում է մատուցվող ծառայության արժեքի ավելացմանը, հետևաբար նաև գնառաջարկի մրցակցայնության նվազեցմանը:

ՖԽ քննարկումների և առցանց հարցման որոշ մասնակիցներ նշել են, որ տեղական հարկային տեսչություններն ավելի դժկամությամբ են ՀԿ-ների հարցերին պատասխանում. «Իրենք շահութաբեր հիմնարկների հետ են ուզում աշխատել»: Միևնույն ժամանակ, վերահսկողության առումով ՔՀԿ-ներն առավելություն են տեսնում, քանի որ զգալիորեն ավելի քիչ են ենթարկվում հարկային մարմինների ստուգումների, քան տնտեսվարող մարմինները: ՔՀԿ-ների հիմնական առաջարկներն այս համատեքստում վերաբերում էին ձեռնարկատիրական գործունեության համար ՔՀԿ-ներին արտոնությունների կամ, առնվազն, հավասար հնարավորությունների ընձեռնման անհրաժեշտությանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍԱՐԱՊԵՍ Ե ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ԲՈՒՈՐ ՔՀԿ-ՆԵՐԻՆ ՆՐԱՆՑ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ:

Հիմնադրամների և ՀԿ-ների գրանցման ժամկետները, հաշվետվությունների և աուդիտի պահանջները տարբերվում են: ՔՀԿ-ները որոշ կազմակերպությունների նկատմամբ արտոնյալ վերաբերմունք են նկատում՝ կապված պետական ֆինանսավորման և որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորությունների հետ:

Հետազոտության ընթացքում որևէ մասնակցի կողմից չի արձանագրվել փաստ առ այն, որ ՔՀԿ-ների միջև սուբյեկտիվ հիմքով տարբերակում

42 ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 258:

43 ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 254:

Է դրվել գրանցման կամ ծրագրերը որպես բարեգործական որակելու գործընթացում: Օտարերկրյա անձանց կողմից հիմնադրված ՔՀԿ-ներն օրենքով սահմանված որևէ տարբերակում չունեն իրենց գործունեության և վերահսկողության առումով: ՔՀԿ-ների համար օրենքով նախատեսված արտոնությունները վերաբերում են գնումների և գործարքների՝ ԱԱՀ-ից ազատումներին և սահմանվում են կառավարության և համապատասխան լիազոր մարմինների որոշումների հիման վրա: Մինևույն ժամանակ, տարբեր են հիմնադրամների և ՀԿ-ների վերաբերյալ իրավակարգավորումները՝ գրանցման առավելագույն ժամկետի (համապատասխանաբար 15 և 10 օր) և հաշվետվողականության պահանջների առումով (գործունեության տարեկան հաշվետվությունը պարտադիր է բոլոր հիմնադրամների և միայն հանրային միջոցներից օգտված ՀԿ-ների համար): Բացի այդ, տարվա ընթացքում հանրային միջոցներից 5 միլիոն ՀՀ դրամ և ավելի գումար ստանալու դեպքում ՀԿ-ն պետք է անկախ աուդիտ իրականացնի⁴⁴, իսկ հիմնադրամների նկատմամբ աուդիտի պահանջը գործում է, եթե տարվա ընթացքում նրանց ակտիվները գերազանցել են 10 միլիոն դրամը⁴⁵:

Որպես առանձին ՔՀԿ-ների նկատմամբ չհիմնավորված արտոնյալ մոտեցման օրինակ՝ հետազոտության մասնակիցներն առավել հաճախ նշել են պետական ֆինանսավորում ստացող ՔՀԿ-ների հայեցողական ընտրությունը, ինչպես նաև պետական մարմինների ու տեղական իշխանությունների կողմից կազմակերպված միջոցառումներին ու քննարկումներին հայեցողական հիմքով հրավերներ ուղարկելը: Պետական ֆինանսավորման հետ կապված խնդիրներն առավել մանրամասն կներկայացվեն «Պետական աջակցություն» բաժնում, իսկ քննարկումներին ՔՀԿ-ների ներգրավումը՝ «Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք» բաժնում:

ՈՒՈՐՏ 2-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՔՀԿ-ներին հնարավորություն տալ օգտվել գրանցման նույն պայմաններից, ինչ առևտրային ընկերություններին՝ մասնավորապես էլեկտրոնային և անվճար գրանցման, ինչպես նաև գրանցման առավելագույն ժամկետների առումով:
- Հարկային դաշտում ՔՀԿ-ներին առնվազն նույն հնարավորությունները տրամադրել, ինչ առևտրային ընկերություններին՝ ձեռնարկատիրական գործունեության պարագայում հնարավորություն տալով աշխատել շրջանառության հարկով:
- Հավասար պայմաններ ստեղծել ՀԿ-ների և հիմնադրամների միջև՝ գրանցման, հաշվետվությունների ներկայացման և պարտադիր աուդիտի իրականացման ոլորտներում, կամ օրենսդրության

44 ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 26:
 45 ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 39:

4.3 Ֆինանսավորման մատչելիություն

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1. ԲՀԿ-ՆԵՐՆ ԱՉԱՑ ԵՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ և ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ՓՆՏՐԵԼ, ՍՏԱՆԱԼ և ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԻՐԵՆՑ ՆԴԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՐԴՆՈՒԹՅԱՄԲ:

ԲՀԿ-ները սահմանափակումների չեն հանդիպում՝ ֆոնդահայթայթման տարբեր եղանակներով միջոցներ հայթայթելիս, թեև որոշակի գործնական խոչընդոտներ կան ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցման հարցում:

Օրենսդրությամբ ԲՀԿ-ներին տարբեր աղբյուրներից ֆինանսավորում ստանալու լայն հնարավորություններ են տրվում: Մասնավորապես, «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով սահմանված է, որ ՀԿ-ների գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել կազմակերպության անդամների ներդրումները և անդամավճարները, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները, իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպությունից ստացված միջոցները, դրամական մուտքերը պետական բյուջեից, նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները, հանգանակությունները և օրենքով չարգելված այլ միջոցներ⁴⁶: Մինչ 2017 թվականի փետրվարի 2-ին «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքի ուժի մեջ մտնելը, ՀԿ-ները չէին կարող ուղղակի ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնել:

«Հիմնադրամների մասին» օրենքի համաձայն՝ հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել հիմնադրի ներդրումը, ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները, դրամական մուտքերը պետական բյուջեից, դրամաշնորհները, հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները, հանգանակությունները և օրենքով չարգելված այլ միջոցներ⁴⁷: Հանրային միջոցներից ֆինանսավորում ստանալու դեպքում ՀԿ-ները պարտավոր են գործունեության մասին տարեկան հաշվետվություն հրապարակել պետության կողմից նախատեսված կայքում⁴⁸: Եթե այդ միջոցները տարվա ընթացքում գերազանցել են 5 միլիոն դրամը, ապա ՀԿ-ն պետք է հրապարակի նաև անկախ աուդիտորի եզրակացությունը⁴⁹: Հիմնադրամները պարտավոր են անկախ աուդիտ անցկացնել և համապատասխան եզրակացությունը հրապարակել,

46 ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 7

47 ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 8

48 ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 24

49 ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 26

երթն նրանց ակտիվները գերազանցում են 10 միլիոն դրամը⁵⁰: Առևտրի իրականացումը խնդրահարույց է լինում ՔՀԿ-ներից շատերի համար, քանի որ լրացուցիչ ֆինանսական բեռ է առաջացնում, հատկապես այն դեպքում, երբ ՔՀԿ-ներն աշխատում են դրամաշնորհային ծրագրերի շրջանակում և չունեն ազատ դրամական միջոցներ:

Գործնականում ՔՀԿ-ները դրամահավաքի տարրեր եղանակներով, այդ թվում՝ հանրային դրամահավաքի և քրաուդֆանդինգի հարթակների միջոցով գումար հայթայթելիս, կամ որևէ օրինական աղբյուրից գումար կամ բնափրեղեն նվիրատվություն ստանալիս պետության կողմից խոչընդոտների չեն հանդիպում: Հայաստանյան ՔՀԿ-ները ավանդաբար կախված են եղել միջազգային դրամաշնորհներից, իսկ հանրային դրամահավաքից, քրաուդֆանդինգի հարթակներից, ձեռնարկությունների նվիրատվություններից եկած գումարները ՔՀԿ եկամտի փոքր մասն են կազմել: Միևնույն ժամանակ, քրաուդֆանդինգի առցանց հարթակների և ֆինանսավորման մյուս այլընտրանքային աղբյուրների օգտագործման աճ է նկատվել⁵¹: Որոշ խնդիրներ են նշվում՝ կապված ձեռնարկատիրական գործունեության ծավալման հետ, քանի որ ներկա օրենսդրական կարգավորումները նպաստավոր հարկային միջավայր չեն տրամադրում ՔՀԿ-ների ձեռնարկատիրական գործունեության համար, իսկ առկա իրավակարգավորումները և վարչարարությունը հարցման մասնակից մի շարք ՔՀԿ-ներ համարել են բարդ ու ծավալուն: ՖԻՄ քննարկումներին մասնակցած ՔՀԿ-ներից մի քանիսը նշում են, որ թեև հնարավորություն է տրվել ուղղակի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել, շատերը նախընտրում են այս գործունեությունն իրականացնել առանձին ՍՊԸ հիմնելու միջոցով՝ հարկային վարչարարության հետ կապված խնդիրներից խուսափելու համար (ՔՀԿ և առևտրային ընկերությունների հարկման տարբերությունների վերաբերյալ նկատառումները տե՛ս «Հավասար վերաբերմունք» բաժնում):

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՄ ԼՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ՄԻՋԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԴՐՎՈՒՄ:

ՔՀԿ-ներն ազատ են օտարերկրյա ֆինանսավորում փնտրելու և ստանալու հարցում և պետության կողմից որևէ խոչընդոտի չեն հանդիպում այս առումով: Միևնույն ժամանակ, հանրության կողմից օտարերկրյա ֆինանսավորում ստացող ՔՀԿ-ների պիտակավորման խնդիրը նշանակալիորեն սրվել է հատկապես վերջին տարիների ընթացքում:

ՀՀ օրենսդրությունը չի պարունակում այնպիսի դրույթներ, որոնք ՔՀԿ-ների համար հատուկ սահմանափակումներ կամ ընթացակարգեր են սահմանում արտերկրյա ֆինանսավորում կամ նյութական աջակցություն ստանալու և օգտագործելու, իսկ դոնորների համար՝ ֆինանսավորում տրամադրելու կամ արտերկիր ուղարկելու համար: Տարբերակում չկա

50 ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 39
51 Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2017թ. ՔՀԿ կայունության ինդեքս, 2018թ. սեպտեմբեր

նաև տեղական և միջազգային դրամաշնորհների, նվիրատվությունների և անդամավճարների կարգավորման առումով: Առանձին միջպետական պայմանագրերի հիման վրա, ինչպես նաև համապատասխան լիազոր մարմնի որոշմամբ առանձին դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ՔՀԿ-ները ապրանքներ ու ծառայություններ գնելիս կարող են ազատվել ԱԱՀ-ից:

Միջազգային ֆինանսավորման գործնական խնդիրները կապված են հանրության որոշ խմբերի կողմից միջազգային դոնորներից ֆինանսավորում ստացող ՔՀԿ-ների բացասական պիտակավորման հետ: Սոցիալական ցանցերի մի շարք հրապարակումներում և քննարկումներում ՔՀԿ-ներին մեղադրում են օտարերկրյա գործակալություններից դրամաշնորհներ ստանալու և արտաքին պատվեր կատարելու համար: Թիրախավորվում են հատկապես այն ՔՀԿ-ները, որոնք գումար են ստացել Բաց հասարակության հիմնադրամներից, որի հիմնադիրը Ջորջ Սորոսն է: «Սորոսական» պիտակավորումը հատկապես վերջին տարիներին խիստ բացասական երանգ է ստացել պետական ու ոչ պետական լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի տարբեր հրապարակումներում ու էլոյթներում: Այս հիմնադրամից ֆինանսավորում ստացած կազմակերպությունները բացասական են որակվել անգամ որոշ պաշտոնյաների կողմից, մասնավորապես «օտարերկրյա պատվեր իրականացնելու», «միասեռականություն քարոզելու» և նպատակաուղղված կերպով «հայկական ավանդական արժեքներն ու հայ ընտանիքը քայքայելու» մեղադրանքով⁵²: Վերջին ամիսներին Բաց հասարակության հիմնադրամների դեմ քարոզարշավը սահագնացող չափերի հասավ, ընդհուպ մինչև 2019 թվականի հունիսին այս հիմնադրամի հայաստանյան գրասենյակի մոտ կազմակերպվող ցույցերը, որոնք ուղեկցվում էին գրասենյակի աշխատողների դեմ սպառնալիքներով ու ատելության խոսքով⁵³: Բազմաթիվ իրավապաշտպան ՔՀԿ-ներ այս առնչությամբ հանդես եկան հայտարարությամբ՝ կոչ անելով իրավապահ մարմիններին միջոցներ ձեռնարկել հասարակական կարգը պահպանելու, աշխատակիցների և այցելուների անարգել ու անվտանգ տեղաշարժն ապահովելու ուղղությամբ⁵⁴: Հարկ է նշել, որ նմանատիպ քարոզարշավները որոշակի քաղաքական ենթատեքստ ունեն: Ըստ փորձագետների՝ այս քարոզարշավները նախաձեռնելով՝ նախկին իշխանության աջակիցները փորձում են պայքարել «այլասերված արժեքները հովանավորող» ներկա իշխանության դեմ՝ օգտագործելով հանրության առավելապես

52 Սորոսը Հայաստանում հայանպաստ գործունեություն է ծավալում, երկրորդ կարծիք չկա. Գևորգ Պետրոսյան, Politik.am, 27.05.2019, <http://politik.am/sorosy-hayastanum-hayanpast-gortsuneutyun-chi-tsavallum-erkrord-kartsiq-chka-gevorg-petrosyan>; Ինչո՞ւ է արթնացել Սորոսի հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ, Հայկական ժամանակ, 11.02.2019, <https://armtimes.com/hy/article/154262>; Եվրագիտափարթևը Սորոս, Փյան-Ֆստան ի գորու չեն կանխել ծաղկունքը. Ծ. Պետրոսյան (տեսակոչ), Հայկական ժամանակ, 16.01.2018, <https://armtimes.com/hy/article/129028>

53 Սորոսը՝ նախկին իշխանությունների աջակիցների հարձակումների թիրախում, Ազատություն Դադիկոյան, 05.06.2019, <https://www.azatutyun.am/a/29983350.html>:

54 Հայտարարություն. Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան գրասենյակի նկատմամբ ոտնձգությունների վերաբերյալ, «Իրավունքի պաշտպանությունն առանց սահմանների» ՀԿ, 05 հունիսի 2019թ., <http://prwb.am/new/hy/2019/06/05/բաց-հասարակության-հիմնադրամներ-հայա/>:

ավանդապատ խմբերի տրամադրությունները:

ՈՒՈՐՏ 3-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԶՀԿ-ների՝ ուղղակի ձեռներեցությամբ զբաղվելու համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ձևավորել:
- Վերացնել պարտադիր ֆինանսական աուդիտի պահանջը⁵⁵ և ԶՀԿ-ների կողմից հանրային միջոցներից ֆինանսավորում ստանալու դեպքում աուդիտի պարտականությունը դնել պետական մարմինների վրա:
- Պատշաճ պաշտպանություն ապահովել երրորդ անձանց կողմից հարձակումների ու ատելության խոսքի դրսևորումների դեպքում համապատասխան իրավական կանոնակարգումների և ըստ անհրաժեշտության պաշտոնյաների դեմ էթիկայի վարույթների հարուցման միջոցով (տե՛ս բաժին 1.8):

4.4 Խաղաղ հավաքների ազատություն

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՋ ԿԱՐՈՂ Է ԱՉԱՏՈՐԵՆ ՕԳՏՎԵԼ ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՑԻՑ:

Յուրաքանչյուր ոք խաղաղ հավաքների ազատության իրավունք ունի՝ պաշտոնյաների որոշակի խմբերի համար նախատեսված որոշ սահմանափակումներով: Ոստիկանության կողմից ահաբեկման և ճնշումների դեպքերը հաճախակի են եղել անցյալում, մասնավորապես մարզերում, սակայն վերջին տարվա ընթացքում իրավիճակը բարելավվել է:

Խաղաղ հավաքների ազատությունը երաշխավորված է ՀՀ սահմանադրությամբ և կարգավորվում է «Հավաքների ազատության մասին» օրենքով: Հավաքների ազատության իրավունքի իրականացման սահմանափակումներ են նախատեսված դատավորների, դատախազների, քննիչների, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների համար՝ նրանք հավաքներին մասնակցելիս պետք է քաղաքական չեզոքություն և զսպվածություն ցուցաբերեն և իրավունք չունեն կազմակերպելու այնպիսի հավաքներ, որոնք կարող են կասկածի տակ դնել իրենց քաղաքական չեզոքությունը, ինչպես նաև հավաքներին մասնակցել

55 Արևելաեվրոպական միայն մի քանի երկրներում է ԶՀԿ-ների պարտադիր ֆինանսական աուդիտի պահանջ սահմանված, ընդ որում՝ հատուկ կարգավիճակ ունենալու և կամ տարեկան ֆինանսական շրջանառության նշանակալի շեմն անցնելու դեպքում: Օրինակ, նման պահանջ կա Սլովակիայում՝ 166 հազար և ավելի եվրո շրջանառություն ունեցող հիմնադրամների նկատմամբ, Լեհաստանում՝ հանրային օգուտի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների նկատմամբ՝ տարեկան 724 հազար եվրոյի ընդհանուր եկամուտ և միաժամանակ առնվազն 12 հազար եվրո պետական մարմիններից ստանալու դեպքում, աղբյուր՝ ԶՀԿ-ների գրանցման և գործունեության ձեռնարկ, 2016, <http://ecnl.org/wp-content/uploads/2016/04/Handbook-on-Civil-Society-Organizations-Registration-and-Operation-Comparative-Aspects.pdf>: Բուլղարիայում ԶՀԿ-ները պարտադիր աուդիտ են անցնում սկսած 511 հազար եվրոյի ֆինանսավորում կամ ակտիվներ ունենալու կամ այդ գումարի կրկնակի չափի դեպքում՝ կախված կարգավիճակից, աղբյուր՝ Ոչ առևտրային կազմակերպությունների օրենսդրություն, 2018, http://bcnl.org/uploadfiles/documents/Blue_ZULNC_Q_A_2018_FINAL.pdf:

ծառայողական համագգեստով⁵⁶: Ինքնաբուխ, միաժամանակյա և հակադարձ ուղղվածությամբ հավաքներն օրենքով թույլատրված են:

Գործնականում վերջին երկու տարիների ընթացքում իշխանությունների կողմից խաղաղ հավաքների կազմակերպումը մերժելու դեպքեր հետազոտության շրջանակում չեն արձանագրվել: Մարզային ՔՀԿ-ները նշում են, որ մարզերում, հատկապես մինչ 2018 թվականի հեղափոխությունը, խնդիրներ են եղել հավաքներ կազմակերպելու հարցում: Մասնավորապես կաշկանդվածություն կար քաղաքական թեմաներով հավաքներ կազմակերպելու և մասնակցելու առումով, օրինակ՝ աշխատանք կորցնելու մտավախությունից ելնելով: Հայտնի են նաև բազմաթիվ դեպքեր, երբ ոստիկանությունը նախապես այցելել կամ զանգահարել է ակտիվիստներին կամ նրանց հարազատներին՝ դրդելով չմասնակցել նախատեսվող այս կամ այն հավաքին, փակել է միջմարզային ճանապարհները՝ խոչընդոտելով ցուցարարների մասնակցությունը մայրաքաղաքում ընթացող հանրահավաքներին⁵⁷: Իջևանում քաղաքացիական ակտիվ մի խումբ ապրիլյան հեղափոխության օրերին ակցիա է փորձել կազմակերպել, սակայն ակցիայի պլանավորված օրը վաղ առավոտյան, դեռևս փողոց դուրս չեկած, կազմակերպիչ երիտասարդները բերման են ենթարկվել ոստիկանության կողմից՝ առանց որևէ իրավական հիմքի⁵⁸:

Բազմաթիվ են նաև հավաքների մասնակիցներին բերման ենթարկելու դրվագները. միայն 2018թ. ապրիլյան դեպքերի ընթացքում բերման են ենթարկվել 1200-ից ավելի անձ⁵⁹: Անօրինական հավաքներ կազմակերպելու և անցկացնելու, ինչպես նաև դրանց ընթացքում անկարգությունների, բռնություն գործադրելու կասկածանքով ձերբակալվել էր 41 անձ, սակայն այդ գործով քրեական վարույթը հետագայում կարճվեց:

2018 թ. երկրորդ կեսին, ըստ Հայաստանի Հելսինկյան կոմիտեի դիտարկման արդյունքների, հավաքների ազատության իրավունքի հասանելիության ու պաշտպանվածության մակարդակը բարձրացավ, նկատվեց անցկացվող հավաքների քանակի աճ⁶⁰:

56 ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, հոդված 8:

57 ՖԽ քննարկում Գյուլմրիում, 12.04.2019, ՖԽ քննարկում Եղեգնաձորում, 23.04.2019

58 ՖԽ քննարկում Գյուլմրիում, 12.04.2019

59 Խաղաղ հավաքների ազատության մոնիթորինգի զեկույց (2017 թ. հուլիս - 2018 թ. հունիս), Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2018թ.

60 Մարդու իրավունքները Հայաստանում 2018թ., Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2019թ.

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2. ԴԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԱԿՑՈՒՄ Է ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻՆ և ԴԱՇՏԴԱՆՈՒՄ Է ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԸ:

Չնայած օրենքով նախնական ծանուցման պահանջ է սահմանված, բազմաթիվ հավաքներ տեղի են ունենում առանց ծանուցման: Որպես կանոն, հավաքները ուղեկցվում են ոստիկանության կողմից՝ պաշտպանության նպատակով, սակայն լինում են ոստիկանության կողմից միջամտության և բռնության դեպքեր:

Ըստ օրենքի, հավաքների կազմակերպիչը պետք է առնվազն 7 օր առաջ հավաքի մասին գրավոր կերպով իրազեկի տվյալ համայնքի ղեկավարին, բացառությամբ մինչև 100 մասնակից ունեցող, շտապ և ինքնաբուխ հավաքների: Իրազեկման նպատակը պետության կողմից հավաքի բնականոն և խաղաղ ընթացքն ապահովելը, ինչպես նաև այլ անձանց հիմնական իրավունքների ու հանրության շահերի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելն է⁶¹: Համայնքի ղեկավարի՝ հավաքի անցկացմանը վերաբերող որոշումները կարող են վիճարկվել վարչական դատարանում, ընդ որում, հայցը պետք է քննվի երկու օրացույցային օրվա ընթացքում⁶², ինչը հնարավորություն է տալիս համապատասխան դատական որոշումը ստանալ մինչև հավաքի անցկացման համար նախատեսված օրը:

Գործնականում վերջին երկու տարիների հավաքների մեծ մասը տեղի է ունեցել առանց իրազեկման: Այսպես, ըստ Հայաստանի Հելսինկյան կոմիտեի մոնիտորինգի արդյունքների, 2017 թ. հուլիսի 1-ից մինչև 2018 թ. հունիսի 30-ը Երևանում և Գյումրիում դիտարկված 158 հավաքից միայն 15-ի դեպքում է իրազեկման ծանուցում ուղարկվել, իսկ մնացած դեպքերում հավաքները եղել են շտապ, ինքնաբուխ, փոքրաթիվ մասնակիցներով կամ առանց իրազեկման: Գրեթե բոլոր հավաքներին եղել է ոստիկանական ուժերի մասնակցություն՝ հավաքին աջակցելու նպատակով, սակայն որոշ դեպքերում ոստիկանությունը միջամտել է հավաքների ընթացքին և հեռացրել կամ փորձել հեռացնել հավաքի մասնակիցներին, օրինակ՝ ցուցարարների կողմից փողոցի երթևեկելի հատվածները փակելու, ոստիկանության տեղաշարժը խոչընդոտելու, պատնեշները հեռացնելու փորձերի ժամանակ⁶³: Ոստիկանության կողմից հավաքներին միջամտելու դեպքերի մեծ մասը տեղի է ունեցել 2018 թ. ապրիլին տեղի ունեցած հավաքների ընթացքում: 2019 թվականին ևս գրանցվել են միջամտության դրվագներ՝ հավաքի մասնակիցների կողմից փողոցի երթևեկելի հատվածը փակելու դեպքում⁶⁴: 2019 թ. օգոստոսին մի շարք ցույցեր տեղի ունեցան Ամուլսարի հանքի շահագործման դեմ: Ըստ ՔՀԿ-ների և ցույցի մասնակիցների՝ ոստիկանները անհամաչափ ուժ

61 ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, հոդված 9-13

62 ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, հոդված 204

63 Խաղաղ հավաքների ազատության մոնիթորինգի զեկույց (2017 թ. հուլիս - 2018 թ. հունիս), Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2018թ. :

64 Օպերայի հարակից տարածքում սրճարանների ապամոնտաժումը վաղը կշարունակվի, Azatutyun.am, 14.03.2019, <https://www.azatutyun.am/a/29821742.html>; Խաղաղ հավաքների ազատության մոնիթորինգի զեկույց (2017 թ. հուլիս - 2018 թ. հունիս), Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2018թ. :

կիրառեցին ցուցարարների դեմ, երբ վերջիններս փակեցին Բաղրամյան փողոցը, քանի որ չկարողացան մուտք գործել Ազգային ժողովի հարակից այգի՝ հանրային քննարկում անցկացնելու նպատակով⁶⁵: ՔՀԿ-ները նշում են, որ հավաքներին շարունակվում է հայեցողական մոտեցում ցուցաբերվել ոստիկանության կողմից, և նույն վայրում, նույն պայմաններով հավաքների դեպքում կարող է տարբեր մոտեցում կիրառվել՝ կախված հավաքի նպատակից:

Վերջին տարիների ընթացքում թերևս միակ դեպքը, երբ պետության կողմից բացահայտ կերպով չի իրականացվել հավաքին աջակցություն տրամադրելու պարտավորությունը, թեև կազմակերպիչների կողմից ներկայացվել էր համապատասխան ծանուցում, 2018 թ. աշնանը նախատեսվող՝ «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումն» էր: Կազմակերպիչները որոշում ընդունեցին չեղարկել հավաքը, քանի որ ոստիկանությունը կազմակերպիչներին դիմել էր ֆորումը չանցկացնելու հորդորով՝ նշելով, որ նպատակահարմար չէ նման ֆորում անցկացնել՝ հաշվի առնելով անվտանգության հետ կապված ռիսկերը⁶⁶:

Օրենսդրության մեջ և գործնականում խաղաղ հավաքների կազմակերպման կամ համակարգման նպատակով էլեկտրոնային միջոցներ կամ սոցիալական ցանցեր օգտագործելու սահմանափակումներ չկան:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3. ԴԵՏՈՒԹՅՈՒՆ և ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆՑՆԵՐ ԶԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ և ՄԱՍՆԱԿԻԳՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ:

Հավաքների կազմակերպիչների վրա դրված ավելորդ բեռ չկա, և վերջիններս կարող են հաղորդակցման միջոցներ և սարքավորումներ օգտագործել՝ առանց ոչ իրավաչափ սահմանափակումների:

Ըստ «Հավաքների ազատության մասին» օրենքի, հավաքի կազմակերպիչը պարտավոր է ներկա լինել հավաքին և հասանելի լինել ոստիկանության ներկայացուցչի համար, հավաքի ընթացքում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հավաքի բնականոն ընթացքն ապահովելու համար՝ մասնավորապես հավաքի մասնակիցների կողմից բռնի գործողությունները կանխելու միջոցով: Կազմակերպիչը պարտավոր է նաև բռնությունից զերծ մնալու և ուժի կիրառմանը պատրաստ մասնակիցներից սահմանազատվելու միջոցներ ձեռնարկել, հավաքի մասնակիցներին անմիջապես տեղեկացնել հավաքի խաղաղ և բնականոն ընթացքն ապահովելու վերաբերյալ ոստիկանության ծառայողների պահանջների մասին: Հավաքի ղեկավարն իրավունք ունի դիմելու ոստիկանության ծառայողներին՝ հավաքի անցկացման վայրից հեռացնելու այն անձանց,

65 ՔՀԿ-ների հայտարարությունը օգոստոսի 19-ին ՀՀ ոստիկանության կողմից խաղաղ հավաքի ազատության ոտնահարման կապակցությամբ, 20.08.2019, <https://transparency.am/hy/news/view/2816>; Ամուլսարի հանքի շահագործման դեմ բողոքի ակցիայի մասնակիցները անդրում են, որ ոստիկանությունն իրենց նկատմամբ անհամաչափ ուժ է կիրառել, Arminfo.am, 20.08.2019, https://arminfo.info/full_news.php?id=44529&lang=1:

66 Հայտարարություն, «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ, 06.11.2018, <https://ngngo.net/hy/news/ANOUNCEMENT/97>, Վալերի Օսիպյանը՝ ԼԳԲՏ ֆորումի մասին. «Նպատակահարմար չի, ինքս չեմ գտնում, որպեսզի անցկացվի՝ նաև ռիսկերից, անվտանգությունից ելնելով», Առավոտ, 06.11.2018, <https://www.aravot.am/2018/11/06/991547/>:

ովքեր կոպտորեն խախտում են հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը⁶⁷: Պետության կողմից հավաքին օժանդակելու կամ այլ գործողությունների հետ կապված որևէ վճար չի նախատեսվում: Կազմակերպիչները հավաքի մասնակիցների գործողությունների համար իրավական պատասխանատվություն չեն կրում:

Գործնականում հավաքների կազմակերպիչների կողմից հավաքի վերաբերյալ տեղեկատվության տարածման, հավաքի ընթացքում սարքավորումների օգտագործման ոչ իրավաչափ խոչընդոտներ չեն արձանագրվել:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4. ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ԱՅՍԿՑՈՒՄ ԵՆ ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻՆ և ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՆ ԻՐԵՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

Խաղաղ հավաքների ժամանակ մի շարք դեպքերում ոստիկանների անհամաչափ մեծ քանակի ներկայություն և ոստիկանական ուժի ապօրինի օգտագործում է արձանագրվել, սակայն ոստիկանության ծառայողներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները բավարար չեն:

Ըստ «Հավաքների ազատության մասին» օրենքի, եթե հավաքն անցկացվում է իրազեկմամբ անցկացվող հանրային հավաքներին վերաբերող պահանջների խախտմամբ, ապա ոստիկանությունը պարտավոր է բարձրախոսով տեղեկացնել, որ հավաքն անօրինական է, և որ մասնակիցները ենթակա են օրենքով սահմանված պատասխանատվության: Եթե հավաքը խաղաղ բնույթ ունի, ապա ոստիկանությունն իր իրավասությունների սահմաններում պարտավոր է աջակցել հավաքին⁶⁸: Ըստ «Ոստիկանության մասին» օրենքի, արգելվում է հատուկ միջոցներ գործադրել խաղաղ, առանց զենքի և օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող հավաքները և հանրային միջոցառումները դադարեցնելու ժամանակ, ինչպես նաև ոստիկանության սպառազինության մեջ հատուկ միջոցների այնպիսի տեսակներ ընդգրկել, որոնք կարող են մարդու առողջությանը ծանր վնաս պատճառել կամ չհիմնավորված ռիսկի աղբյուր են⁶⁹: Նույն օրենքի համաձայն, հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս ոստիկանության ծառայողները պարտավոր են կրել սահմանված ձևի համազգեստ, որի վրա տեսանելի մասում փակցվում են ոստիկանության ծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշաններ⁷⁰:

Ըստ հավաքների մոնիտորինգի արդյունքների՝ 2017-2018 թթ. բազմաթիվ հավաքների ընթացքում ոստիկանության ծառայողների թիվը եղել է անհամաչափ մեծ, ներկա են եղել առանց համազգեստի ոստիկաններ: 2018 թ. ապրիլի 16-ից մինչև ապրիլի 23-ը տեղի ունեցած խաղաղ հավաքների ընթացքում դիտարկվել են ոստիկանության կողմից անհամաչափ ուժի,

67 ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, հոդված 31:

68 ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, հոդված 32:

69 ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին», 16.04.2001, հոդված 31:

70 ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին», 16.04.2001, հոդված 12:

բոնությունների գործադրման, անհարկի միջամտությունների բազմաթիվ դեպքեր: Հատուկ միջոցներ կիրառելուց առաջ ուստիկանության կողմից նախագգուշացում չի եղել⁷¹: Ուստիկանության կիրառած հատուկ միջոցների հետևանքով մի շարք քաղաքացիներ և լրագրողներ տարբեր աստիճանի վնասվածքներ են ստացել: Բերման են ենթարկվել բազմաթիվ ցուցարարներ, որոնք ուստիկանության բաժիններում երբեմն պահվել են օրենքով սահմանված ժամկետների (մինչև 3 ժամ) և ընթացակարգերի խախտումներով: Խոչընդոտվել է նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող փաստաբանների աշխատանքը⁷²: Հաճախ են եղել այն դեպքերը, երբ ուստիկանության բաժինների աշխատակիցները թույլ չեն տվել փաստաբաններին հանդիպել իրենց վստահորդների հետ՝ պնդելով, որ այնտեղ նշված անունով որևէ մեկը չկա, կամ պահանջելով, որ փաստաբանները սպասեն և թույլ չտալով նրանց մուտք գործել⁷³:

Հեղափոխությանը հաջորդող ժամանակահատվածում ուստիկանության կողմից հավաքների նկատմամբ Էսկան միջամտություններ չեն դիտարկվել մինչ 2019 թ. օգոստոսը, երբ Ամուլսարի շահագործման դեմ ցույցն ավարտվեց ուստիկանության հետ բախումներով և ուստիկանական ուժի անհամաչափ կիրառմամբ:

Բազմաթիվ գործեր են հարուցվել 2015-2018 թթ. ցույցերի ընթացքում ուստիկանության կողմից բոնության կիրառման և պաշտոնեական լիազորությունները գերազանցելու հիմքով⁷⁴: Սակայն առկա արդյունքներն առայժմ բավարար չեն համարվում հետազոտության մասնակից փորձագետների կողմից, քանի որ միայն մի քանի ուստիկանի դեմ է մեղադրանք առաջադրվել, իսկ կիրառված պատժամիջոցները հիմնականում վարչական բնույթի են: Որոշ գործեր կարճվել են այն հիմքով, որ օրինախախտներին հնարավոր չէ բացահայտել, իսկ որոշ գործեր դեռևս քննության գործընթացում են⁷⁵: Խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը 2018 թ. նոյեմբերի՝ Հայաստան կատարած իր այցի արդյունքների հիման վրա Հայաստանի կառավարությանը կոչ է արել ապահովել, որ իրականացվի խաղաղ հավաքների իրավունքի ոտնահարման բոլոր առկա դեպքերի ու մեղադրանքների անհապաղ, անկողմնակալ և արդյունավետ հետաքննություն, և որ բոնություն գործադրած անձինք ենթարկվեն

71 2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունների և հավաքների դիտորդության վերաբերյալ զեկույց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2018թ.

72 Հաշվետվություն 2018 թվականի ապրիլի 13-20-ը խաղաղ հավաքների ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումների մասին, «Իրավունքի պաշտպանությունն առանց սահմանների» ՀԿ, 20.04.2018:

73 2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունների և հավաքների դիտորդության վերաբերյալ զեկույց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2018թ. :

74 Խաղաղ հավաքների ազատության մոնիթորինգի զեկույց (2017 թ. հուլիս - 2018 թ. հունիս), Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2018թ.:

75 Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2019թ. առաջին կիսամյակի զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2019թ., Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկման զեկույց (2018 թ. հուլիս - 2019 թ. հունիս), Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2019թ.:

դատական կարգով հետապնդման, իսկ տուժած անձանց և նրանց ընտանիքներին տրամադրվի փոխհատուցում⁷⁶:

ՈՒՈՐՏ 4-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ապահովել հավաքների և ոստիկանության կողմից պարտականությունների պատշաճ կատարումը, հետևողական մոտեցումը՝ անկախ հավաքի թեմայից, ֆիզիկական բռնության գործադրման բացառումը, ինչպես նաև օրենքով սահմանված՝ համապատասխան հանդերձանքի կրումը:
- Իրականացնել ոստիկանության ներկայացուցիչների կողմից իրավախախտումների և բռնությունների կիրառման դեպքերի պատշաճ քննություն և պատասխանատվության ենթարկել մեղավորներին:

4.5 Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՋ ԿԱՐՈՂ Է ՄԱՍՆԱԿՅԵԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՄՆԱԿ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ:

Ըստ օրենքի՝ ազգային և տեղական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը ենթակա են պարտադիր հանրային քննարկման: Սակայն գործնականում միշտ չէ, որ հանրային մասնակցության մեխանիզմները հետևողական և արդյունավետ են կիրառվում, իսկ մասնակցության ազդեցությունը հաճախ տեսանելի չէ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքը սահմանում է, որ օրենսդրական ակտերի նախագծերը ենթակա են հանրային քննարկման, բացառությամբ միջազգային պայմանագրի վավերացման (դրան միանայլու) մասին օրենքի նախագծի: Այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հանրային քննարկման կարող են դրվել նախագիծը մշակող կամ այն ընդունող մարմնի նախաձեռնությամբ: Հանրային քննարկումների տևողությունն առնվազն 15 օր է⁷⁷:

Համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի որոշմամբ⁷⁸ սահմանված՝ հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի, նորմատիվ իրավական ակտի նախագծի հանրային քննարկումը պարտադիր իրականացվում է պետական կառավարման համակարգի համապատասխան մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում և ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարվող

76 Խաղաղ հավաքների և միությունների կազմելու ազատության իրավունքների հարցերով միավորված ազգերի կազմակերպության Հատուկ զեկուցող Կլեման Նյալեցոսի Վոլեի հայտարարությունը Հայաստանի Հանրապետություն իր այցելության ավարտին, Երևան, Նոյեմբերի 16, 2018 թ.:

77 ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին», 21.03.2018, հոդված 3-4

78 ՀՀ կառավարության N 1146-Ն որոշումը «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», 10.10.2018

իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարակման եղանակով (բացառությամբ գաղտնիք պարունակող, ինչպես նաև ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշումների նախագծերի)⁷⁹: Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը՝ e-draft.am-ը, գործարկվել է 2017 թվականին և ցանկացած անձի հնարավորություն է տալիս ծանոթանալ տարբեր պետական կառույցների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերին, ներբեռնել դրանք, իսկ կայքում գրանցվելու դեպքում՝ կողմ կամ դեմ քվեարկել և առաջարկներ ներկայացնել: Թե՛ գրանցված, թե՛ չգրանցված օգտատերերը կարող են նաև տեսնել առաջարկների ամփոփաթեթը՝ մերժման կամ ընդունման հիմնավորումներով⁸⁰: Ըստ «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի», քննարկումների ամփոփաթեթը, արձանագրությունը և լրամշակված նախագիծը տեղադրվում են հանրային քննարկումներ կազմակերպող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև e-draft.am կայքում: Քննարկման դրված հարցերի առնչությամբ ստացված առաջարկությունների վերլուծության և ամփոփման արդյունքում հանրային քննարկում իրականացնող մարմինը կատարում է նախագծի անհրաժեշտ լրամշակումներ⁸¹:

ՀՀ արդարադատության նախարարությունը համակարգում է միասնական կայքի աշխատանքները և իրականացնում է իրավական ակտերի նախագծերի տեղադրման ու քննարկման մոնիտորինգը: Հանրային քննարկումների իրականացման խախտումներ հայտնաբերելու դեպքում Ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են դիմել ինչպես հանրային քննարկում իրականացնող մարմին, այնպես էլ արդարադատության նախարարություն՝ պարզաբանում ստանալու նպատակով: Հանրային քննարկման ենթակա՝ հանրային քննարկում չանցած և կառավարություն ներկայացված նախագիծը կառավարությունը կարող է վերադարձնել այն ներկայացնող մարմին⁸²՝ պահանջելով նախագիծը ներկայացնել հանրային քննարկման:

Հանրային քննարկումներն իրականացվում են նաև հանրային լուումների կամ հանրային հարցումների ձևով, որոնք սակայն պարտադիր բնույթ չեն կրում: Հանրային լուումներ կարող են հրավիրվել նաև խորհրդարանում՝ Ազգային ժողովի (ԱԺ) նախագահի, մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի, ինչպես նաև խմբակցության որոշմամբ⁸³: Այս պարագայում ևս լուումների կազմակերպումը պարտադիր բնույթ չի կրում:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը տեղական մակարդակով

79 Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը, ՀՀ կառավարության N 1146-Ն որոշման հավելված, 10.10.2018, կետ 10

80 Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/>

81 Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը, ՀՀ կառավարության N 1146-Ն որոշման հավելված, 10.10.2018

82 Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը, ՀՀ կառավարության N 1146-Ն որոշման հավելված, 10.10.2018

83 «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքը, 16.12.2016, հոդված 125

հանրային մասնակցության մի շարք հնարավորություններ է ընձեռում: Ըստ օրենքի՝ համայնքի բնակիչներն, առանց խտրականության, տեղեկացվում են ՏԻՄ գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ ՏԻՄ որոշումների վրա՝ ինչպես անձամբ, այնպես էլ հասարակական միավորումների և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով⁸⁴: Համայնքի ավագանու նիստերը հրապարակային են, իսկ 10000-ից ավել բնակիչ ունեցող համայնքներում դրանք պետք է հեռարձակվեն առցանց՝ համայնքի պաշտոնական կայքում: Համայնքի բնակիչները, համապատասխան քանակով ստորագրություններ կերկայացնելու դեպքում, կարող են հանդես գալ նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ⁸⁵:

Համայնքի ղեկավարի պարտականությունների մեջ է մտնում տեղական ինքնակառավարման առնչվող օրենսդրական և ենթօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների և այլ ոլորտներում հանրային լուրմների կամ քննարկումների կազմակերպումը⁸⁶: Բացի այդ, հնգամյա զարգացման ծրագրի կամ տարեկան բյուջեի կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին, որի կազմում կարող են ներգրավվել փորձագետներ, բնակիչներ, այլ շահագրգիռ անձինք, իսկ մինչև ավագանու նիստին ներկայացնելը այդ փաստաթղթի վերաբերյալ կազմակերպվում են հանրային բաց լուրմներ կամ քննարկումներ⁸⁷:

Գործնականում, ըստ փորձագետների ու ՔՀԿ-ների, որոշումների կայացման գործընթացում նշանակալի մասնակցությունն ապահովելու համար կարևոր է ՔՀԿ-ների պրոակտիվությունը: Թեև օրենքով նախատեսված մասնակցային մեխանիզմները բազմաթիվ են, դրանցից ոչ բոլոր են արդյունավետ ու հետևողական կերպով կիրառվում: Կառավարության կողմից ստեղծված միասնական կայքում օրենսդրական նախագծերի հրապարակումը ողջունելի է համարվում ՔՀԿ-ների կողմից, և շատ օգտակար է օրենսդրական նախագծերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, անմիջական հետադարձ կապ տրամադրելու, ինչպես նաև ցանկացած շահագրգիռ անձի համար բաց լինելու տեսանկյունից, թեև լինում են դեպքեր, երբ նախագիծը քննարկվում է շտապ կարգով կամ տեղադրվում է քննարկման համար անբարենպաստ ժամանակահատվածում (օրինակ՝ ամանորյա տոների ընթացքում կամ ընտրությունների ժամանակ): E-draft հարթակը ոչ միշտ է արդյունավետ,

84 ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, խմբ. 16.12.2016, հոդված 11:

85 ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, խմբ. 16.12.2016, հոդված 14-16:

86 ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, խմբ. 16.12.2016, հոդված 37:

87 ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, խմբ. 16.12.2016, հոդված 84:

քանի որ քննարկման համար նախատեսված ժամանակահատվածը հաճախ 15 օր է լինում, որը բավարար չի լինում հատկապես ծավալուն օրենքների և օրենսգրքերի պատշաճ ուսումնասիրման ու հիմնավոր առաջարկների ներկայացման համար: Առաջարկների ամփոփաթերթում ՔՀԿ-ները կարող են տեսնել իրենց առաջարկների պատասխանը՝ ընդունման կամ մերժման հիմնավորումներով: Սակայն նախագծին կողմ կամ դեմ լինելու վիճակագրությունը որևէ նշանակություն չունի այն ընդունելու կամ չընդունելու հարցում, իսկ ներկայացված առաջարկների ներառումն էլ հարցականի տակ է: Բացի այդ, քանի որ հարթակը ստեղծվել է կառավարության որոշման հիման վրա, այն պարտադիր չի համարվում պատգամավորների կողմից մշակված օրինագծերի տեղադրման համար:

Հանրային քննարկումների կազմակերպման տեսանկյունից հաջողված փորձ կարելի է համարել ՀՀ արդարադատության նախարարությանը կից «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի աշխատանքը: Հիմնադրամը ստեղծվել է 2016 թ. ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորմամբ ծրագրի շրջանակներում և, ի թիվս այլ գործառույթների, կազմակերպում է նաև պետական կառավարման համակարգի և այլ մարմինների ու շահագրգիռ անձանց մասնակցությամբ հանրային քննարկումներ և իրավական նախագծերի վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումներ⁸⁸:

Միաժամանակ, պետական մարմինների կողմից կենդանի հանրային քննարկումների կազմակերպման դեպքում տեղեկատվությունը ոչ միշտ է մատչելի լինում ցանկացող ՔՀԿ-ներին, քանի որ նման քննարկումները հիմնականում իրականացվում են հրավերի սկզբունքով, իսկ բաց քննարկումներ ու հանրային լուումներ հազվադեպ են կազմակերպվում: Հաճախ քննարկումներն իրականացվում են ՔՀԿ-ների նախաձեռնությամբ կամ դրդմամբ: Օրինակ, համայնքներից մեկում տարեկան բյուջեի վերաբերյալ լուումները կազմակերպվել են այն բանից հետո, երբ ՔՀԿ ներկայացուցիչը, տեղեկանալով ավագանու նիստում բյուջեի հարցի ընդգրկման մասին, զանգահարել է համայնքապետարան և պնդել, որ առանց լուումների ավագանին չի կարող հաստատել համայնքի բյուջեն⁸⁹: Դեպքեր կան, երբ ավագանու նիստը որոշվել է անցկացնել դոնփակ՝ ՔՀԿ-ների մասնակցությունից խուսափելու համար: Այսինքն, չնայած օրենքով նախատեսված՝ հանրային մասնակցության տարատեսակ մեխանիզմներին, դրանք ոչ միշտ են իրագործվում պետական կամ տեղական իշխանությունների կողմից, և շատ բան կախված է ՔՀԿ-ների վճռականությունից և հետևողականությունից:

Հանրային կարևոր հարցերի շուրջ քննարկումները, ըստ ՔՀԿ-ների, պետք է չսահմանափակվեն e-draft հարթակի կամ հասարակական խորհուրդների շրջանակով, այլ նախատեսվեն մի քանի բաց քննարկումներ և լուումներ՝

88 Տե՛ս «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի ֆեյսբուքյան էջը, https://www.facebook.com/legislativefund/?ref=br_rs:

89 Ֆեյսբուքյան քննարկում Երևանում, 18.04.2019:

առնվազն խնդրահարույց կամ հանրային հնչեղություն ենթադրող նախագծերի վերաբերյալ: Բացի այդ, ՔՀԿ-ներն անհրաժեշտ են համարում որոշակի չափանիշներ ապահովել՝ հանրային քննարկումը կայացած համարելու համար, օրինակ՝ մասնակիցների որոշակի նվազագույն թվի առկայություն, տվյալ ոլորտում փորձառու ՔՀԿ-ների մասնակցություն, ոչ թե պարզապես որևէ օրինագծի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում: Փորձագետները կարևորում են նաև, որ ՔՀԿ-ները ներգրավվեն որոշումների կայացման վաղ փուլերից՝ ընդհանուր հայեցակարգերի ու մոտեցումների քննարկման ժամանակ, երբ օրենքի նախագիծը դեռևս մշակված չէ:

Մասնակցության հետ կապված մեկ այլ խնդիր, որ առավել հաճախ է նշվել ՖԻՄ քննարկումների և առցանց հարցման մասնակիցների կողմից, մասնակցության ազդեցությունն է: ՔՀԿ-ների առաջարկները կարող են մերժվել շատ ընդհանրական պատճառաբանությամբ (օրինակ՝ «նպատակահարմար չէ» ձևակերպմամբ) և/կամ անգամ առանց որևէ հիմնավորման: Լայն մասնակցային գործընթացներից և բազմաթիվ առաջարկներ հավաքագրելուց հետո հնարավոր է, որ արդյունքում ընդունված որոշումը կատարելապես տարբերվի քննարկված ու համաձայնեցված տարբերակից, քանի որ այն կարող է փոխվել վերջին պահին՝ խորհրդարան ներկայացնելու առաջ կամ անգամ ընթերցումների միջև ընկած ժամանակահատվածում: Մի քանի փորձագետ, ինչպես նաև ՖԻՄ քննարկումներին ու առցանց հարցմանը մասնակցած բազմաթիվ ՔՀԿ-ներ նկարագրեցին մասնակցային գործընթացները «ձևական բնույթ, իմիտացիա» բնորոշումներով: Այնուամենայնիվ, առանձին ՔՀԿ-ներ նշել են, որ նախկինի համեմատ՝ ներկա իշխանությունն ավելի բաց է ՔՀԿ-ների կողմից ներկայացվող առաջարկների համար, ինչը նկատվել է առանձին ռազմավարությունների և օրինագծերի քննարկման ընթացքում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2. ԱՌԿԱԿ ԵՆ ՀՍԱԿ, ԴՅՈՒՐԻՆ և ԹԱՓԱՆՑԻԿ ՍԵՆԱՆԻՉՄՆԵՐ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ, ՈՐՈՆՔ ԼՊԱՍՏՈՒՄ ԵՆ ՔՀԿ-ՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿՈՐ, ԲԱՑ և ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՍԱՄԱԿՑՈՒԹՅԱՆԸ ԴԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ և ՍՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԳՈՐԾՈՒՄ:

Հասարակական խորհուրդներն ու համատեղ աշխատանքային խմբերը նպաստում են քաղաքականության մշակման և մոնիտորինգի գործընթացում ՔՀԿ-ների մասնակցությանը: Այս խորհրդակցական մարմինների ակտիվությունն ու արդյունավետությունը հաճախ կախված են պատասխանատու մարմնից:

Հանրային քննարկման վերոնշյալ գործիքներից բացի պետական քաղաքականությունների մշակման, իրականացման և մոնիտորինգի գործընթացներում մասնակցության հիմնական ինստիտուցիոնալ միջոցը տարբեր գերատեսչությունների, ոլորտային քաղաքականությունների, համայնքային ու մարզային կառավարման կառույցների շուրջ ձևավորված խորհուրդներն ու աշխատանքային խմբերն են:

Կառավարության խորհրդակցական մարմին հանդիսացող Հանրային խորհուրդը իր գործառույթների շարքում ներառում է քաղաքականության

մշակման և իրականացման գործում հասարակության տարբեր շերտերի շահերը ներկայացնելու, պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությանը նպաստելու, հանրային նշանակություն ունեցող հարցերի, այդ թվում՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի, պետական ծրագրերի, ռազմավարությունների, հայեցակարգերի և դրանց նախագծերի վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելու խնդիրները⁹⁰: Հանրային խորհրդի անդամ կարող է լինել 25 տարին լրացած, Հայաստանի Հանրապետությանը ծառայություններ մատուցած, հանրային կամ իր մասնագիտական ոլորտում հեղինակություն վայելող, ինչպես նաև Հանրային խորհրդի առջև դրված խնդիրների կենսագործման համար անհրաժեշտ հմտություններ ունեցող յուրաքանչյուր անձ: Հանրային խորհրդի անդամ չեն կարող լինել քաղաքական, վարչական կամ ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձինք, գինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության և քննչական մարմինների ծառայողները, հանրային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող անձինք⁹¹:

Կառավարությունը 2016 թվականին որոշում է ընդունել, ըստ որի՝ նախարարությունների առջև դրված խնդիրների և գործառնությունների իրականացման ընթացքում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովման նպատակով նախարարներին կից հասարակական խորհուրդներ պետք է ստեղծվեն՝ այդ մասին կետ ավելացնելով նախարարությունների կանոնադրություններում⁹² (մանրամասները տե՛ս «Պետություն-ՔՀԿ համագործակցություն» բաժնում): Հասարակական խորհուրդները ՀԿ-ների կամ այլ շահագրգիռ անձանց մասնակցությամբ քննարկում են հասարակության տարբեր շերտերի կարծիքներն ու տեսակետները նախարարության խնդիրների և նպատակների իրականացման վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնում առաջարկություններ և դիտողություններ նախարարության կողմից շրջանառվող իրավական ակտերի, հայեցակարգերի, ռազմավարությունների ու միջոցառումների ծրագրերի նախագծերի, բարեփոխումների և այլ հարցերի վերաբերյալ: Խորհուրդների գործառնությունների թվում է նաև հանրային քննարկումների կազմակերպմանն ու իրականացմանն աջակցելը⁹³: Խորհուրդների կազմում ընդգրկվելու համար կարող են դիմել թե՛ ՔՀԿ ներկայացուցիչներ, թե՛ այլ քաղաքացիներ: Որպես կանոն, յուրաքանչյուր նախարարությանը կից գործող հասարակական խորհրդի նախագահը համապատասխան նախարարն է:

Հետազոտության մասնակիցներից շատերը թերահավատ են Հանրային

90 ՀՀ օրենքը «Հանրային խորհրդի մասին», 07.03.2018, հոդված 2:

91 ՀՀ օրենքը «Հանրային խորհրդի մասին», 07.03.2018, հոդված 4:

92 ՀՀ կառավարության N 337-Ն որոշումը «ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 31.03.2016:

93 ՀՀ կառավարության N 624-Լ որոշման հավելված N 1, 22.05.2018, Նախարարության կանոնադրության օրինակելի ձև, կետ 11:

խորհրդի գործունեության հանդեպ՝ համարելով այն ձևական, չգործող կառույց: Ինչ վերաբերում է նախարարություններին կից գործող հասարակական խորհուրդներին՝ ՔՀԿ-ների կարծիքները տարբերվում են, քանի որ դրանց ակտիվությունը և արդյունավետությունը հաճախ կախված է պատասխանատու գերատեսչությունից: Մասնակիցներից մեկի դիտարկմամբ, հասարակական խորհուրդները նախարարությունների կողմից դիտվում են ավելի շատ որպես պարտականություն, քան այդ կառույցներն իրենց աշխատանքի ու նպատակների օգտին օգտագործելու հնարավորություն: Բացի այդ, այս խորհուրդները գույտ խորհրդատվական գործառույթ ունեն, հետևապես կառավարությունը պարտավորություն չի կրում հաշվի առնել խորհրդի շրջանակներում տեղի ունեցած քննարկումների արդյունքները և առաջարկները:

Բացի ինստիտուցիոնալ հարթակներից, առանձին ՔՀԿ-ներ անհատական մակարդակով համագործակցության հուշագրեր են կնքում առանձին գերատեսչությունների հետ՝ իրենց գործունեության ոլորտում ընդհանուր նպատակների համատեղ իրականացման համար, կամ երկարաժամկետ համագործակցություն են հաստատում առանց որևէ փաստաթղթային հիմնավորման: Հարցված փորձագետներից մի քանիսը շեշտում են, որ համագործակցության հաստատման համար անհրաժեշտ չէ որևէ ինստիտուցիոնալ հարթակ կամ փաստաթղթավորում, կարևորը ՔՀԿ-ների մասնագիտական փորձառությունն ու հաստատականությունն է, ինչպես նաև պետական կառույցի կողմից համագործակցելու պատրաստականությունը: Իրենց գործունեության ոլորտում ճանաչում ձեռք բերած և հիմնավոր առաջարկներ ներկայացնող ՔՀԿ-ները կարողանում են լսելի լինել պետական մարմինների կողմից և հաճախ հենց վերջիններս են նրանց հրավիրում քննարկումների կամ կարծիք հարցնում այս կամ այն նախաձեռնության վերաբերյալ⁹⁴:

ՔՀԿ-ները մասնակցում են հանրային քաղաքականության իրականացմանը համագործակցության հուշագրերի միջոցով՝ պետության կամ դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում: Պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում համագործակցությունը տեղ է գտնում, օրինակ, սոցիալական աջակցության ոլորտում, երբ առանձին ՔՀԿ-ների կողմից սոցիալական ծառայություններ են մատուցվում խոցելի խմբերին, ինչպես նաև երիտասարդական քաղաքականության, սպորտային և կրթական ծրագրերի միջոցով:

Հանրային քաղաքականության մոնիտորինգի ծրագրերը հիմնականում իրականացվում են միջազգային կազմակերպությունների աջակցությամբ: Պետական մարմինները սովորաբար բաց են՝ քննարկելու մոնիտորինգի արդյունքները և կարող են դրանք հաշվի առնել քաղաքականության հետագա մշակման գործընթացում: Այնուամենայնիվ, քաղաքականության

94 Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2017թ. ՔՀԿ կայունության ինդեքս, 2018թ. սեպտեմբեր; Փորձագիտական հարցազրույցներ:

իրականացման և մոնիտորինգի աշխատանքները ՔՀԿ-ներին պատվիրակելու համար իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմներ չկան, և ՔՀԿ-ների մասնակցությունը քաղաքականության մոնիտորինգի և իրականացման գործընթացներին հիմնականում կախված է ՔՀԿ-ների ակտիվությունից և համառությունից, ինչպես նաև համապատասխան գործունեության համար դոնորներից ֆինանսավորում ստանալու հնարավորությունից:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3. ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՆԵԼԻ Ե ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ:

ՔՀԿ-ների մասնակցության համար անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունը նախատեսված է օրենքով: Տեղական իշխանություններից տեղեկություններ ստանալը կարող է խնդրահարույց լինել, իսկ պաշտոնական կայքերում օրենքով նախատեսված տեղեկատվության հրապարակումը հաճախ պատշաճ կերպով չի իրականացվում:

Տեղեկատվության մատչելիությունը երաշխավորված է ՀՀ սահմանադրությամբ՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք⁹⁵: «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը սահմանում է տեղեկատվություն տնօրինողի պարտականությունները և տեղեկատվության ստացման կարգը, ձևը և պայմանները: 2015 թվականին կառավարությունն ընդունեց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման կարգը: Այս կարգը ներառում է նաև պետական մարմիններին էլեկտրոնային ձևաչափով ուղարկված տեղեկատվության հարցումները⁹⁶:

Ըստ օրենքի՝ տեղեկատվության գրավոր հարցումների պատասխանները դիմողին են տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, իսկ եթե տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է լրացուցիչ աշխատանք կատարել, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում⁹⁷: Տեղեկատվության տրամադրման սահմանափակումները վերաբերում են ազգային անվտանգությանը կամ մասնագիտական գաղտնիքին, մասնավոր տեղեկատվությանը, նախաքննության տվյալներին և հեղինակային

95 ՀՀ սահմանադրություն, 05.07.1995թ., փոփոխված 06.12.2015թ., հոդված 51:

96 ՀՀ կառավարության N 1204-Ն որոշումը «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին», 15.10.2015:

97 ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, հոդված 9:

իրավունքով պաշտպանված տվյալներին⁹⁸:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության տրամադրման համար գանձվող վճարը ներառում է միայն այդ տեղեկության տրամադրման տեխնիկական ծախսերը, սակայն գանձում չի կատարվում, օրինակ՝ մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս, էլեկտրոնային փոստով տեղեկություն տրամադրելիս, առանձին տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս, տեղեկության տրամադրումը մերժելիս⁹⁹: Պետական ռեգիստրից որևէ իրավաբանական անձի վերաբերյալ ամբողջական տեղեկություններ ստանալու համար պետական տուրքը կազմում է 3000 դրամ¹⁰⁰:

ՔՀԿ-ները նշում են, որ գործնականում տեղեկությունների տրամադրման պրակտիկան պետական կառավարման մարմինների կողմից տարիների ընթացքում բարելավվել է, հարցումները հիմնականում ժամանակին պատասխան են ստանում, ավելի քիչ են լինում խուսափողական պատասխաններ: Համայնքային մակարդակում խնդիրներն ավելի հաճախ են հանդիպում՝ բազմաթիվ ՔՀԿ-ներ դեպքեր են նշել, երբ համայնքապետարանից իրենց հարցումներին ուշ են պատասխանել, երբեմն՝ երկրորդ հարցումից հետո, երբեմն էլ առհասարակ չեն պատասխանել: Դեպքեր են եղել, երբ մարզպետարանները կամ համայնքապետարանները գրավոր հարցումներին պատասխանել են հեռախոսով, որը հակասում է օրենքով ընդունված կարգին: Մի ՔՀԿ օրինակ բերեց, որ իր ներկայացրած էլեկտրոնային հարցմանը պատասխանել են թղթային եղանակով՝ պահանջելով կատարած ծախսերի փոխհատուցում, իսկ մեկ այլ օրինակում փաստաթղթերի համար սահմանված վճարը մի քանի անգամ գերազանցել է փաստաթղթերի տպագրման ու պատճենահանման շուկայական արժեքը:

Առցանց հարցմանը մասնակցած 94 ՔՀԿ-ներից 54-ը նշել են, որ վերջին երկու տարիներին տեղեկատվության հարցում են ուղարկել պետական մարմիններին. նրանցից 26-ը ստացել են, 19-ը՝ մասամբ են ստացել պահանջվող տեղեկությունը, իսկ 8 ՔՀԿ տեղեկությունը չեն ստացել: Տեղեկության տրամադրման մերժումների կամ չտրամադրման դեպքում ՔՀԿ-ները կարող են դիմել դատարան, սակայն դա հիմնականում անում են ավելի շատ սկզբունքայնությունից ելնելով, քանի որ, որպես կանոն, դատական գործընթացները չափազանց ժամանակատար են, և վճռի կայացման պահին պահանջվող տեղեկատվությունը հաճախ կորցնում է արդիականությունը¹⁰¹:

Վերջին տարիներին էլեկտրոնային կառավարման զարգացման հետ

98 ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, հոդված 8:

99 ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, հոդված 10:

100 ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, հոդված 20

101 ՔՀԿ Նպաստավոր միջավայրի ազգային ուսումնասիրություն, Հայաստան, ՀԿ կենտրոն, Երևան 2018

մեկտեղ ավելացել են տեղեկություններն առցանց դիտելու և ստանալու՝ կառավարության կողմից ընձեռված հնարավորությունները: Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգը տեղեկատվություն է պարունակում բոլոր գործող (ինչպես նաև ուժը կորցրած) օրենքների և բազմաթիվ այլ իրավական ակտերի վերաբերյալ¹⁰², իսկ կառավարության էլեկտրոնային կառավարման կայքէջը տրամադրում է կառավարության նիստերի, որոշումների, մի շարք այլ հարցերի հետ կապված տեղեկություն¹⁰³: Կան նաև գնումների, դատական ակտերի, լիցենզիաների վերաբերյալ տվյալներ, ոլորտային այլ տեղեկություններ տրամադրող կայքեր: 2018 թվականին ստեղծվել է էլեկտրոնային հարցումների միասնական՝ www.e-request.am հարթակը, որը հնարավորություն է տալիս պետական մարմիններին (այդ թվում՝ Ազգային ժողովին, վարչապետի աշխատակազմին, նախարարություններին, մարզպետարաններին և այլ պետական մարմիններին) էլեկտրոնային հարցում ուղարկել մեկ պատուհանի ձևաչափով, որից հետո հարցումները դասակարգվում են և ուղարկվում պատասխանատու պաշտոնյային¹⁰⁴:

Օրենքով նախատեսված է նաև տեղեկատվության հրապարակայնության ապահովումը գերատեսչությունների կողմից: Պետական բոլոր գերատեսչությունները, մարզպետարանները և խոշոր համայնքներն ունեն իրենց պաշտոնական կայքէջերը, որտեղ տեղեկություններ են հրապարակում իրենց գործունեության վերաբերյալ և հետադարձ կապի հնարավորություն տրամադրում: Այսպես, տարին առնվազն մեկ անգամ նրանք պարտավոր են օրենքով սահմանված տեղեկություններ հրապարակել՝ հանրության համար մատչելի ձևով, իսկ ինտերնետային էջի առկայության դեպքում՝ նաև դրանով¹⁰⁵: ՏԻՄ օրենքով նախատեսված է, որ 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքը պետք է ունենա պաշտոնական համացանցային կայք, որտեղ պետք է տեղադրվեն մասնավորապես համայնքում բնակիչների հետ հանդիպումների, հանրային լսումների և քննարկումների նյութերը, ընթացակարգը, անցկացման վայրը և ժամը, համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ փաստաթղթերի վերաբերյալ անցկացված հանրային լսումների և քննարկումների արդյունքները, համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման և այլ կարգերը և այլ տեղեկատվություն¹⁰⁶: Տեղեկատվության ազատության հարցերով զբաղվող ՔՀԿ-ները, սակայն, անհրաժեշտ տեղեկատվության հրապարակման հետ կապված խնդիրներ են արձանագրում, քանի որ գերատեսչությունները և

102 Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am/>:

103 Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարում, <https://www.e-gov.am/>:

104 էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ, <https://www.e-request.am/en/>:

105 ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, հոդված 7:

106 ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, խմբ. 16.12.2016, հոդված 11:

հատկապես համայնքապետարանները ոչ միշտ են ժամանակին ու լիարժեք հրապարակում այն տեղեկատվությունը, որը պահանջվում է օրենքով սահմանված կարգով: Նոր իշխանության պարագայում պաշտոնական կայքերում տեղեկատվության հրապարակումը երկրորդ պլան մղվեց՝ ֆեյսբուքյան էջերի կամ լրատվամիջոցների միջոցով տեղեկատվության հրապարակման ֆոնին¹⁰⁷:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԵՐԱԾՑԻՆ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ Ե ԶԱՂԱՔԱԿԱՆ և ԼՈՐՐԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Քաղաքականության մշակման գործընթացին մասնակցելիս՝ ՔՀԿ-ները իրավական կամ գործնական սահմանափակումների չեն հանդիպում քաղաքական գործունեության և լրբիսգի իրավակարգավորումների պատճառով:

Ըստ օրենսդրության՝ ՔՀԿ-ները չեն կարող ունենալ այնպիսի նպատակներ, որոնք վերապահված են կազմակերպարական այլ տեսակների¹⁰⁸, օրինակ՝ քաղաքական կուսակցություններին: Մասնավորապես, քաղաքական կուսակցությունների նպատակը սահմանված է որպես «հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելը»¹⁰⁹: Այս դրույթը իրավական կամ գործնական առումով չի խոչընդոտում պետական քաղաքականության մշակման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցությանը:

Ներկայումս ՀՀ օրենսդրությունը կարգավորումներ չի պարունակում լրբիստական գործունեության մասին: 2005 թվականին կառավարության կողմից հավանության էր արժանացել և ԱԺ ներկայացվել «Լորբիստական գործունեություն մասին» օրենքի նախագիծը, որը չընդունվեց ԱԺ կողմից¹¹⁰: ՔՀԿ-ները դեմ էին այս օրինագծին, քանի որ այն կարող էր սահմանափակել ջատագովության ուղղությամբ նրանց գործունեությունը¹¹¹:

Ինչ վերաբերում է ՔՀԿ-ների ջատագովական գործունեության գործնական սահմանափակումներին, որոշ խնդիրներ են արձանագրվել, երբ ՔՀԿ-ները խոչընդոտների են հանդիպել հավաքների կազմակերպման կամ մասնակցության ընթացքում (մանրամասները տե՛ս «Խաղաղ հավաքների ազատություն» բաժնում), հալածվել են քննադատության համար (մանրամասները տե՛ս «Խոսքի ազատություն» բաժնում) կամ ատելության

107 ՔՀԿ նպաստավոր միջավայրի ազգային ուսումնասիրություն, Հայաստան, ՀԿ կենտրոն, Երևան 2018:

108 ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 3:

109 ՀՀ սահմանադրական օրենքը «Քաղաքական կուսակցությունների մասին» 16.12.2016, հոդված 2:

110 ՀՀ օրենքը «Լորբիստական գործունեության մասին», նախագիծ, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=793&Reading=0&lang=arm&enc=utf8>

111 «Գործընկերություն Հանուն Բաց Հասարակության» նախաձեռնության հայտարարությունը «Լորբիստական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, 11.11.2005, <https://transparency.am/hy/statements/view/101>, Բարեփոխում, թե՛ օրենսդրական ճնշում. ՀԿ-ները այնչու են, որ լրբիստական գործունեության մասին օրենքը կխանգարի իրենց գործունեությանը, ArmeniaNow.com, https://www.armenianow.com/hy/news/6463/reform_or_repression_ngos_say_law :

խոսքի թիրախ են դարձել սեռական փոքրամասնությունների կամ կանանց իրավունքները պաշտպանելու համար (մանրամասները տե՛ս «Պետության կողմից պաշտպանության պարտականություն» բաժնում):

ՈԼՈՐՏ 5-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ընդլայնել որոշումների ընդունման գործընթացում հանրության և ՔՀԿ-ների մասնակցության հնարավորությունները՝ բացի էլեկտրոնային հարթակի օգտագործումից կազմակերպելով նաև բաց հանրային քննարկումներ, որոնց մասին տեղեկատվությունը կտարածվի լայն լսարան ընդգրկող տարբեր միջոցներով: Մասնավորապես, առաջարկվում է հանրային քննարկումների ու լսումների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրել միասնական հարթակում, օրինակ՝ e-draft հարթակում, բաժանորդագրման հնարավորությամբ, տեսանելի տեղում, իսկ հանրային լսումների հայտարարությունները տարածել զանգվածային լրատվամիջոցներով, ինչպես նաև լսումներ ու քննարկումներ կազմակերպել մարզերում:
- Հստակեցնել հանրային քննարկման սահմանումը և չափանիշները՝ տարբերակելով իրազեկումը փաստացի քննարկումից: Նախատեսել կարծիքի հավաքագրման, քննարկման մասնակիցների որոշակի թվի, պետական մարմնի կողմից հետադարձ կապի պարտադիր պահանջներ՝ քննարկումը կայացած համարելու համար: Ավելի իրատեսական սահմանել հանրային քննարկման համար նախատեսված ժամկետները՝ բավարար ժամանակ հատկացնելով ՔՀԿ-ներին նախագիծը լիարժեք ուսումնասիրելու, առաջարկություններ մշակելու և ներկայացնելու, անհրաժեշտության դեպքում շահագրգիռ կողմերի հետ քննարկումներ կազմակերպելու համար:
- Քննարկումներն իրականացնել սկսած իրավական նախագծերի մշակման նախնական փուլից՝ ներգրավելով տվյալ ոլորտում մասնագիտացած ՔՀԿ-ներին, փորձագետներին և այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներին: Օրենքով ամրագրել օրենսդրական նախագծերի կազմավորման փուլում հանրային քննարկման պահանջը:
- Մեխանիզմներ ստեղծել խորհրդարանի կողմից մշակված օրենսդրական նախագծերի պարտադիր հանրային քննարկման համար, ինչպես դա արվում է պետական կառավարման մարմինների դեպքում ըստ կառավարության կողմից ընդունված կարգի՝ e-draft հարթակի միջոցով:
- Ապահովել ՔՀԿ-ների նշանակալի մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում՝ ի թիվս այլ միջոցառումների նախատեսելով հետևյալը.
 - Հաշվի առնել ՔՀԿ-ների հիմնավորված նկատառումներն ու

առաջարկները,

- ԶՀԿ-ների մասնակցությունը նախատեսել նաև վերանայված նախագծերի քննարկման գործընթացում ընդհուպ մինչև նախագծի ընդունման փուլը,
- Հետադարձ կապ տրամադրել ներկայացված բոլոր առաջարկներին՝ մերժման դեպքում պատշաճ հիմնավորում ներկայացնելով:
- Պետական քաղաքականության մոնիտորինգի ու իրականացման գործընթացներում ԶՀԿ-ների ներգրավման համար ինստիտուցիոնալ գործիքներ և հարթակներ ստեղծել:
- ԶՀԿ-ների հարցումներին ժամանակին ու լիարժեք պատասխան տրամադրել պետական մարմինների և տեղական իշխանությունների կողմից, իսկ վերջիններիս պաշտոնական կայքերում ապահովել օրենքով սահմանված տեղեկատվության հրապարակումը և պատշաճ թարմացումը: Օրենքի համապատասխան պահանջների խախտման դեպքերում արդյունավետ մեխանիզմներ ստեղծել ողջամիտ ժամկետներում տեղեկատվություն ստանալու իրավունքի վերականգնման համար:
- Անվճար դարձնել պետական ռեգիստրի ինտերնետային կայքում տեղադրված գրանցամատյանի, ինչպես նաև պետության կողմից տնօրինվող այլ տեղեկատվական բազաների տվյալների տրամադրումը՝ հանրային մասնակցությունն ու վերահսկողությունը խթանելու նպատակով:
- Բարելավել հասարակական խորհուրդների և այլ խորհրդակցական մարմինների գործունեության թափանցիկությունը, ինչպես նաև արդյունավետությունը՝ ավելի ռազմավարական հիմքերի վրա դնելով նրանց գործունեությունը, ընդլայնելով որոշումների կայացման գործընթացում նրանց լիազորությունները և մեխանիզմներ ստեղծելով ավելի խորքային մասնագիտական քննարկումների ու աշխատանքների համար:

4.6 Խոսքի ազատություն

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՔ ԿԱՐԾԻՔ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ և ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ:

Յուրաքանչյուր ոք ազատ է արտահայտելու իր կարծիքը: Խոսքի ազատությունը բարելավվել է պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ճնշումների տեսանկյունից: Սակայն զգալիորեն ավելացել է հանրային անհանդուրժողականությունը և ատելության խոսքի օգտագործումը:

Խոսքի ազատությունը երաշխավորվում է ՀՀ սահմանադրությամբ՝

յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, ներառյալ սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով¹¹²:

Սահմանադրությամբ երաշխավորվում է նաև մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը: Բացի այդ, լրատվամիջոցների ազատությունը կանոնակարգվում է «Չանգվածային լրատվության մասին» և «Հեռուստատեսության ու ռադիոյի մասին» օրենքներով: Ըստ օրենքի՝ լրատվական գործունեությունն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա: Գրաքննությունը, հարկադրանքը, մասնագիտական գործունեությանը խոչընդոտելը, խտրականությունը արգելված են օրենքով: Օրենքը սահմանափակում է միայն այնպիսի տեղեկատվության տարածումը, որը համարվում է գաղտնի կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, կատարվել է տեսաձայնագրման միջոցով՝ առանց համապատասխան զգուշացման, կամ խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը¹¹³:

Լրատվության միջոցները թողարկվում և տարածվում են առանց նախնական կամ ընթացիկ պետական գրանցման, լիցենզավորման, պետական կամ որևէ այլ մարմնում հայտարարագրման կամ որևէ մարմնի ծանուցման¹¹⁴: Չանգվածային լրատվամիջոցների (ՉԼՄ) լիցենզավորման պահանջը վերաբերում է բացառապես ռադիո- և հեռուստարնկերություններին:

Ըստ հետազոտության մասնակիցների՝ վերջին երկու տարիների ընթացքում խոսքի ազատության հետ կապված սահմանափակումները հիմնականում վերաբերում են մինչև 2018-ի ապրիլի ժամանակաշրջանին, երբ պետական համակարգի վերաբերյալ սուր քննադատական կարծիքները կարող էին ճնշումների կամ հետապնդումների պատճառ դառնալ, հատկապես մարզային համայնքներում: Հարցման մասնակիցներից մեկն այսպիսի օրինակ է բերել՝ «Իջևան քաղաքում մեր կազմակերպությունը գրեթե առաջին անգամ բարձրացրեց աղբահանության հարցը, կոմունալ ծառայությունների ոչ պատշաճ աշխատանքի հիմնախնդիրը, ինչի

112 ՀՀ սահմանադրություն, 05.07.1995թ., փոփոխված 06.12.2015թ., հոդված 42:

113 ՀՀ օրենքը «Չանգվածային լրատվության մասին», 13.12.2003, հոդված 7:

114 ՀՀ օրենքը «Չանգվածային լրատվության մասին», 13.12.2003, հոդված 4:

արդյունքում համայնքապետարանը շատ կոշտ արձագանք տվեց, անձնական մակարդակով վիրավորանքի և հերյուրանքի արժանացնելով կազմակերպության աշխատակիցներին»¹¹⁵: Այլ ԲՀԿ-ներ նշել են հեռախոսագանգերի, հարազատների միջոցով ուղղորդելու, լռեցնելու փորձերի մասին: Փոքր համայնքներում մինչ օրս առկա է վախի, կաշկանդվածության մթնոլորտը՝ պայմանավորված ավանդույթներով, ընտանեկան-բարեկամական սերտ հարաբերություններով:

Ներկայումս խոսքի ազատության մակարդակը փորձագետների կողմից բարելավված է գնահատվում, սակայն միաժամանակ նշվում է քննադատական կարծիքների նկատմամբ կտրուկ ավելացած հասարակական անհանդուրժողականության և մեծ չափով տարածված՝ ատելության խոսքի մասին: Ատելության խոսքի զգալի աճ է նկատվում նաև հայաստանյան հասարակության մեջ ավանդաբար խոցելի թեմաների՝ միասեռականության, կրոնական փոքրամասնությունների, ընտանեկան բռնության վերաբերյալ քննարկումներում: Նման դեպքերում ատելության խոսքը կարող է վերածվել այդ ոլորտում աշխատող ԲՀԿ-ների ներկայացուցիչների նկատմամբ վիրավորական արտահայտությունների, բռնության կոչերի ու սպառնալիքների¹¹⁶: Հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրությամբ «ատելության խոսք» հասկացությունը սահմանված չէ, սակայն քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունների համար¹¹⁷: Հակախտրականության վերաբերյալ տեղական օրենսդրության և ատելության խոսքի իրավական ձևակերպման բացակայության պայմաններում իշխանության կողմից նման երևույթները կանխելու կամ պատժելու գործողությունների պակաս կա, և ոստիկանությունը միջամտում է միայն այն ժամանակ, երբ առերևույթ անձի կյանքի նկատմամբ սպառնալիքներ կամ բռնություն է արձանագրվում: Ներկայումս քննարկման է դրված քրեական օրենսգրքի փոփոխությունների նախագիծը, ըստ որի՝ պատասխանատվություն կնախատեսվի անձի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, անձի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ նման բռնություն քարոզելու համար¹¹⁸: Ընդունվելու դեպքում՝ այս նախագիծը որոշ չափով կմեղմի ատելության խոսքի հիմնախնդիրները:

115 ՖԽ քննարկում Գյումրիում, 12.04.2019:

116 Ատելության խոսքի վերաբերյալ 2018թ. հուլիս-դեկտեմբեր ամիսների վիճակագրական տվյալների և օրինակների համար տե՛ս «Ատելության խոսքի մշտադիտարկում, միջանկյալ գեկույց (հուլիս-դեկտեմբեր 2018 թ.):»՝ Հայաստանի Հելսինկյան կոմիտե, 2019թ.:

117 ՀՀ քրեական օրենսգիրք, 18.04.2003, հոդված 226:

118 «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/1862>:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2. ԴԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՉԱԿՅՈՒՄ և ԴԱՇՏԴԱՆՈՒՄ Է ԽՈՍՔԻ և ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱՉԱՏՈՒԹՅՈՒՆԸ:

Խոսքի ազատության ոչ իրավաչափ սահմանափակումներ չկան, թեև գրանցվել են ՉԼՄ-ների գործունեությանը միջամտելու դեպքեր:

Հայաստանում ինտերնետի և սոցիալական ցանցերի հետ կապված սահմանափակումներ չկան: Ըստ փորձագետների, վերջին տարիներին առցանց լրատվամիջոցներն առավել անկաշկանդ են եղել ազատ արտահայտման հարցում, իսկ հեղափոխությունից հետո կարծիքների բազմազանությունն ապահովված է նաև հեռուստատեսությամբ: Հարցազրույցների ընթացքում, ինչպես նաև վերջին տարիների զեկույցներում նշված օրենսդրական խնդիրները վերաբերում են լիցենզավորված լրատվամիջոցների՝ հեռուստատեսության և ռադիոալիքների գործունեության սահմանափակումներին: Օրինակ՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքով մարզային հեռուստա- և ռադիոալիքների թիվը սահմանափակված է, իսկ հեռարձակման մասնավոր թվային ցանց՝ մուլտիպլեքս ստեղծելու համար նախատեսված պայմաններն ու պահանջներն այնքան խիստ են, որ որևէ ընկերություն դիմում չի ներկայացնում, և ինչպես նախորդ երկու տարիներին, այնպես էլ 2018 թվականին մասնավոր մուլտիպլեքսի մրցույթը չկայացավ¹¹⁹:

Ըստ «Չանգվածային լրատվության մասին» օրենքի՝ լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ տեղեկատվության աղբյուրի բացահայտումը լրատվական գործունեություն իրականացնողին, ինչպես նաև լրագրողին կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, և սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները¹²⁰:

Պաշտպանված է նաև ազդարարների անձի գաղտնիությունը՝ ըստ «Ազդարարման համակարգի մասին» օրենքի, ազդարարը ունի պաշտպանության իրավունք և ազդարարի անձնական տվյալների պաշտպանությունը անանուն հաղորդում ներկայացնելիս երաշխավորվում է պետության կողմից¹²¹:

Հայաստանում զրպարտությունն ու վիրավորանքը ապաքրեականացվել է 2010 թվականին: Չրպարտությունն ու վիրավորանքը, ինչպես նաև հատուցման առավելագույն չափերը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ըստ որի՝ մինչև 1 միլիոն դրամի չափով

119 Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2018թ. տարեկան զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2019:

120 ՀՀ օրենքը «Չանգվածային լրատվության մասին», 13.12.2003, հոդված 5:

121 ՀՀ օրենքը «Ազդարարման համակարգի մասին», 09.06.2017, հոդված 11:

փոխհատուցում է սահմանվում վիրավորանքի և մինչև 2 միլիոն դրամ՝ գրպարտության համար: Ընդ որում, ըստ օրենսգրքի՝ փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը պետք է հաշվի առնի ամբաստանյալի գույքային դրությունը¹²²:

Լրատվամիջոցների ազատության հետ կապված գործնական խնդիրները նախկին իշխանության ժամանակ առկա ինքնագրաքննության միտումներն էին: Միևնույն ժամանակ, խնդիրներ են արձանագրվել նաև 2018 թվականի հետհեղափոխական շրջանում, մասնավորապես եղել են ՉԼՍ-ների տեղեկատվության աղբյուրների բացահայտման պահանջի և լրատվամիջոցի գրասենյակի խուզարկման դեպքեր, ենթադրաբար՝ քաղաքական հիմքերով¹²³: Այս դեպքերի կապակցությամբ լրագրողական համայնքը և այս ոլորտում աշխատող ՔՀԿ-ները հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ կոչ անելով իշխանություններին միջոցներ ձեռնարկել՝ ՉԼՍ-ներին գերծ պահելու ոստիկանական ապօրինի գործողություններից և բարենպաստ պայմաններ ապահովել լրագրողների և լրատվամիջոցների ազատ գործունեության համար՝ անկախ դրանց քաղաքական ուղղվածությունից¹²⁴:

ՈԼՈՐՏ 6-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Օրենսդրական կարգավորումներ նախատեսել ատելության խոսքի և համապատասխան պատժամիջոցների վերաբերյալ¹²⁵:
- Փոփոխություններ ընդունել հեռուստատեսության ու ռադիոյի մասին օրենքում հեռուստա- և ռադիոընկերությունների բազմազանության և ազատ գործունեության ապահովման նպատակով:
- Բացառել առանց համապատասխան իրավական հիմքերի միջամտությունը ՉԼՍ-ների գործունեությանը:

122 ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 05.05.1998, հոդված 1087.1:

123 Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՍ-ների իրավունքների խախտումների մասին 2018թ. տարեկան զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2019:

124 «Կոչ ենք անում նոր իշխանություններին՝ միջոցներ ձեռնարկել՝ ՉԼՍ-ներին գերծ պահելու ոստիկանական ապօրինի գործողություններից և առավել բարենպաստ պայմաններ ապահովել»:
Հայտարարություն, 10.12.2018, <http://medialab.am/news/id/9693>:

125 Ինչպես սահմանված է այս ուսումնասիրության մեթոդաբանությամբ, ատելության խոսք են համարվում արտահայտման բոլոր այն ձևերը, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, այլատյացությունը, հակասեմիտիզմը կամ ատելության այլ ձևերը և հիմնված են անհանդուրժողականության վրա (Եվրոպայի Խորհուրդ, անդամ պետությունների նախարարների «Ատելության խոսքի հարցերով» կոմիտեի 1997թ. հոկտեմբերի 30-ի թիվ R(97)20 հանձնարարական, հավելված):

4.7 Մասնավոր կյանքի իրավունք

ՀԱՓՈՐՈՇԻՉ 1. ՅՈՒՐԱՔԱՆՅՈՒՐ ՈՋ ՈՒՆԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ և ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԵ:

Մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության իրավունքը սահմանված է օրենքով, գործնականում երբեմն լինում են իրավախախտումներ:

ՀՀ սահմանադրությամբ ամրագրված է յուրաքանչյուրի մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, ինչպես նաև իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունքը: Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով¹²⁶: Քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելու կամ տարածելու համար¹²⁷:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը կարգավորում է պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անձնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները¹²⁸:

Գործնականում ՔՀԿ-ները մասնավոր կյանքի միջամտության հետ կապված խնդիրներ չեն մատնանշել, բացառությամբ մի դրվագի: 2017 թվականի ապրիլի խորհրդարանական ընտրություններին նախորդող քարոզչության ընթացքում «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ ծրագրերի համակարգողը ձայնագրություններ տարածեց՝ իշխող կուսակցության օգտին դպրոցների և մանկապարտեզների տնօրենների կողմից ընտրողներ հավաքագրելու վերաբերյալ, որից հետո «Իրավունք» թերթում հրապարակվեցին նրա անձնական կյանքին և նրա ընտանիքին վերաբերող տվյալներ, որոնց տիրապետում են բացառապես ՀՀ ոստիկանությունը և Քննչական կոմիտեն: ՀԿ ներկայացուցչի դիմումի հիման վրա քրեական գործ հարուցվեց անձնական և ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն ապօրինի հավաքելու և լրատվության միջոցով տարածելու դեպքի առթիվ, սակայն մի քանի ամիս անց գործը կասեցվեց¹²⁹:

126 ՀՀ սահմանադրություն, 05.07.1995թ., փոփոխված 06.12.2015թ., հոդված 31:

127 ՀՀ քրեական օրենսգիրք, 18.04.2003, հոդված 144:

128 ՀՀ օրենքը «Անձնական տվյալների պաշտպանության մասին», 18.05.2015:

129 Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2017թ. տարեկան զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2018:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ԹՀԿ-ՆԵՐԻ Լ ԿՈՆՉԿՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱՎՈՐ ԿՑԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ:

Ըստ օրենքի՝ գրասենյակի խուզարկումը և գաղտնալսումը կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Հիմնադրամների հաշվետվության պահանջները կարող են խախտել նրանց աշխատակիցների մասնավոր կյանքի իրավունքը:

Գրասենյակի խուզարկումն ու անձանց գաղտնալսումը, ըստ օրենքի, կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Հարցազրույցների ընթացքում որոշ իրավապաշտպաններ նշել են, որ հիմնավոր կասկածներ ունեն նախորդ իշխանության ժամանակ իրենց հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման վերաբերյալ:

Հիմնադրամների տարեկան հաշվետվության մեջ իրականացված ծրագրերի և օգտագործված միջոցների մասին տեղեկատվությունից գատ պահանջվում է հրապարակել հոգաբարձուների խորհրդի անդամների, կառավարչի և հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն ու ազգանունները, եթե հաշվետու տարվա ընթացքում նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից և ծառայություններից: Սա կարող է խնդրահարույց լինել մասնավոր կյանքի իրավունքի տեսակետից:

ՈՒՈՐՏ 7-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Վերանայել հիմնադրամների հաշվետվության ձևաչափը՝ պահպանելով իրենց վերաբերյալ անվանական տեղեկատվություն և չհրապարակելու՝ աշխատակիցների իրավունքը:

4.8 Պետության կողմից պաշտպանության պարտականություն

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ԹՀԿ-ՆԵՐԻՆ Լ ՆՐԱՆՑ ՀԵՏ ԿԱՊԱՍԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԻՑ Լ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻՑ:

ԹՀԿ-ները կարող են իրենց իրավունքները պաշտպանել դատարանում: Այնուամենայնիվ, պետությունը միշտ չէ, որ պատշաճ պաշտպանություն է ապահովում այն դեպքերում, երբ ԹՀԿ-ները հարձակման են ենթարկվում երրորդ անձանց կողմից: Նման դեպքերը տեղ են գտնում հատկապես այն դեպքերում, երբ ԹՀԿ-ներն աշխատում են զգայուն ոլորտներում:

Ըստ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի՝ պետությունն օրենքով սահմանված կարգով ապահովում է կազմակերպության իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը¹³⁰: ՀԿ-ն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և

130 ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 9:

տեղական ինքնակառավարման մարմիններում¹³¹: Ըստ «Հիմնադրամների մասին» օրենքի՝ հիմնադրամն իրավունք ունի իր անունից դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող¹³²: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա իրավունքները և ազատությունները, այդ թվում՝ եթե այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար խոչընդոտներ են հարուցվել կամ չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ¹³³: Ըստ օրենքի՝ դատաքննությունը պետք է իրականացվի ողջամիտ ժամկետներում¹³⁴: Թեև օրենսդրությամբ նախատեսված են «ողջամիտ ժամկետի» սահմանման չափորոշիչները, ներառյալ «հնարավոր սեղմ ժամկետը», կոնկրետ ժամանակահատված չի սահմանվում, իսկ գործնականում դատավարությունը կարող է մի քանի ամիս և անգամ մի քանի տարի տևել՝ հիմնականում դատարանների ծանրաբեռնվածության պատճառով:

Գործնականում, ըստ հետազոտության արդյունքների, պետությունը ոչ միշտ է պատշաճ պաշտպանություն տրամադրում ՔՀԿ-ներին, երբ նրանք հարձակման են ենթարկվում երրորդ անձանց կողմից: Ավելին, երբեմն պետական պաշտոնյաներն են ատելության խոսք օգտագործում ՔՀԿ-ների կամ նրանց հետ կապված անձանց նկատմամբ: Ավանդաբար հարձակման թիրախում առավել հաճախ հայտնվում են ԼԳԲՏ անձանց, կանանց և կրոնական փոքրամասնությունների իրավունքները պաշտպանող կազմակերպությունները, ինչպես նաև իրավապաշտպանները: Իրավապաշտպանների վրա հարձակման, սպառնալիքների, համապատասխան գործերը կարճելու դեպքեր են գրանցվել հիմնականում մինչև 2018 թվականի հեղափոխությունը: 2018 թվականի երկրորդ կեսին և 2019-ի ընթացքում ավելացել են հասարակական տարբեր խմբերի կողմից ճնշումները սեռական և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ: Առավել հայտնի դեպքերից է Շուռնուխի միջադեպը, երբ 2018թ. օգոստոսին Շուռնուխ գյուղի բնակիչները ֆիզիկական բռնություն կիրառելով գյուղից վտարեցին գյուղի բնակիչներից մեկին՝ իր հյուրերի հետ միասին, որոնց մի մասը ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներն էին: Դեպքի առթիվ հարուցված քրեական գործը կարճվեց՝ համաներման հիմքով¹³⁵: 2019 թվականի ապրիլին Ազգային ժողովում լսումներ կայացան ՄԱԿ-ի մարդու իրավունքների համընդհանուր պարբերական դիտարկման վերաբերյալ, որոնք բաց էին հետաքրքրված ՔՀԿ-ների համար՝ նախնական գրանցման պայմանով: Լսումներին ելույթ ունեցավ տրանսգենդեր անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ

131 ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 16:

132 ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 3:

133 ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը, 05.12.2013, հոդված 3:

134 ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը, 05.12.2013, հոդված 84:

135 Մարդու իրավունքները Հայաստանում 2018թ., Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2019թ. :

ներկայացուցիչը, որը ևս տրանսգենդեր համայնքից էր, և ներկայացրեց այդ համայնքի խնդիրները, այս անձանց նկատմամբ բռնություններն ու հետապնդումները: Ի պատասխան՝ լսումները վարող՝ ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն իր վրդովմունքն արտահայտեց՝ նշելով, որ տրանսգենդեր անձանց խնդիրները օրակարգում ներառված չեն, և հետևաբար՝ ներկայացված ելույթն անհարգալից վերաբերմունք է իր և խորհրդարանի նկատմամբ: Իրավապաշտպան ՔՀԿ-ներն այս արձագանքը խտրական համարեցին¹³⁶: Մակայն առավել հատկանշական էին ելույթին հետևած արձագանքները հանրության առանձին խմբերի կողմից և հրապարակումները սոցիալական ցանցերում, որտեղ հաճախ առկա էին ատելության խոսք, անհանդուրժողականության, վիրավորանքի ու սպառնալիքների դրսևորումներ¹³⁷: Ատելության խոսք և անհանդուրժողական արտահայտություններ են հնչել նաև պատգամավորների, եկեղեցու ներկայացուցիչների կողմից, որոնք հրապարակվել ու տարածվել են լրատվամիջոցներով: Միջադեպի հետ կապված՝ պատգամավորների վարքագծի համապատասխանությունը էթիկայի նորմերին քննելու նպատակով վարույթ չի նախաձեռնվել և էթիկայի հանձնաժողով չի գումարվել մյուս պատգամավորների կողմից:

Կանանց իրավունքները պաշտպանող այլ կազմակերպությունների նման կանանց հանդեպ բռնության դեպքերով զբաղվող «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն հաճախ քննադատական արտահայտությունների և սպառնալիքների թիրախում է հայտնվում՝ մեղադրվելով «քնտանիքների քայքայման» համար, քանի որ այս կենտրոնը ապաստան է տրամադրում ամուսինների կողմից բռնության ենթարկված այն կանանց, որոնք անվտանգության ապահովման կարիք ունեն: Կազմակերպության ղեկավարը նշում է, որ դիմելու դեպքում ստանում են ոստիկանության աջակցությունը և կարծում է, որ խնդիրը հանրության կրթության, կարծրատիպերի վերացման, ինչպես նաև ատելության խոսքի ու ատելության հանցանքի նկատմամբ ավելի խիստ միջոցներ կիրառելու անհրաժեշտության դաշտում է:

Սկսած 2019 թ. հունիսից՝ Բաց հասարակության հիմնադրամների հայաստանյան գրասենյակի մոտ կանոնավոր ցույցեր են կազմակերպվել հասարակական «Վետո» շարժման կողմից, որոնք ուղեկցվել են գրասենյակի աշխատողների և այցելուների դեմ ուղղված սպառնալիքներով ու ատելության խոսքով: Պետությունն ապահովել է ոստիկանության աշխատակիցների ներկայությունը՝ ֆիզիկական բռնություն թույլ չտալու նպատակով, սակայն անձանց դեմ ուղղված վիրավորանքներն ու ատելության խոսքը որևէ կերպ չի կանխվել: Ըստ օրենքի՝ հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել, երբ ժողովրդավարական

136 Նաիրա Չոհրաբյանի արձագանքը խտրական էր, ֆինք Արմենիա, 06.04.2019, <http://www.pinkarmenia.org/announce/na-upri/>:

137 Հայաստանում տրանսգենդերի պատմական ելույթից հետո LGBTI անձինք մահվան սպառնալիքներ են ստանում, Առավոտ, 26.04.2019, <https://www.aravot.am/2019/04/26/1038786/>:

հասարակությունում պետական անվտանգության և հասարակական կարգի պահպանումը, հանցագործությունների կանխումը, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը գերակայում են հավաքի ազատության նկատմամբ¹³⁸: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարծիքով «Վետո»-ի հավաքները խախտել են Բաց հասարակության հիմնադրամների հայաստանյան գրասենյակի աշխատակիցների և այցելուների իրավունքները, այդ թվում՝ արժանապատվությունը, հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, մասնավոր կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը, ազատ գործելու իրավունքը, ազատ տեղաշարժվելու իրավունքը և միավորումների ազատությունը, սակայն իշխանությունները գործուն քայլեր չեն ձեռնարկել այս իրավունքները պաշտպանելու համար¹³⁹: Առհասարակ, ավելացել են ատելության և թշնամանքի արտահայտություններով, երբեմն էլ՝ բռնության կոչերով ուղեկցվող հավաքները, մասնավորապես ուղղված սեռական փոքրամասնությունների դեմ: ՔՀԿ-ները նշում են, որ անհրաժեշտ է օրենքով հստակեցնել հավաքների սահմանափակման իրավական հիմքերը՝ դրանցում ներառելով նաև ատելության բորբոքումն ու բռնության քարոզը (ի լրումն օրենքով սահմանված ազգային, ռասայական և կրոնական հիմքերով ատելության և բռնության բորբոքման հետ կապված սահմանափակումների):

Խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը 2018 թվականի նոյեմբերի իր այցից հետո հրապարակած հայտարարությունում մտահոգություն է հայտնել զգայուն թեմաներով զբաղվող ՔՀԿ-ների գործունեության սահմանափակումների վերաբերյալ և կոչ է արել կառավարությանն արդյունավետորեն պայքարել ատելության քարոզչության և փոքրամասնություն հանդիսացող խմբերի նկատմամբ ատելության հրահրման դեմ, դատապարտել հանրային քննարկումներում խտրական հայտարարությունների տարածումը, այդ թվում՝ հասարակական գործիչների կողմից, և անհրաժեշտության դեպքում ապահովել մասնակիցների անվտանգությունը¹⁴⁰:

138 ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, հոդված 5:

139 Հայտարարություն ԲՀՀ-Հայաստանի դեմ իրականացվող հարձակումների մասին, 27.09.2019, <https://transparency.am/hy/news/view/2857>:

140 Խաղաղ հավաքների և միություններ կազմելու ազատության իրավունքների հարցերով Միավորված ազգերի կազմակերպության Հատուկ զեկուցող Կլեման Նյալեցոսի Վուլեի հայտարարությունը Հայաստանի Հանրապետություն իր այցելության ավարտին, Երևան, Նոյեմբերի 16, 2018 թ. :

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2. ԾԱՅՐԱՀԱՆՐԱԿԱԿՈՒԹՅԱՆ, ԱՀԱՐԵԿՉՈՒԹՅԱՆ, ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ և ԿՈՌՈՒԴՑԻՎՅՈՒՄԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՆՊԱՏԱԿԱՈՒՂՂՎԱԾ ԵՆ, ՀԱՄԱՉԱՓ, ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՄԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, և ՀԱՐԳՈՒՄ ԵՆ ՄԻԱԿՈՐՈՒՄՆԵՐԻ, ՀԱՎԱՔՆԵՐԻ ՈՒ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ:

Կոռուպցիայի, ահաբեկչության և փողերի լվացման դեմ պայքարի միջոցները չեն թիրախավորում ՔՀԿ-ներին և չեն սահմանափակում նրանց գործունեությունը:

Հայաստանում չկան հակակոռուպցիոն այնպիսի օրենքներ և քաղաքականություններ, որոնք կարգավորում են ՔՀԿ-ների իրավունքներն և գործունեությունը: Որպես կանոն, հակակոռուպցիոն միջոցառումները, որոնք ներառված են, օրինակ, «Հանրային ծառայության մասին» և «Ազդարարման համակարգի մասին» օրենքներում, վերաբերում են պետական ծառայողների գործունեությանը: 2019 թվականի հունիսին հանրային քննարկման նպատակով հրապարակվել է «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի» նախագիծը: Այն ներառում է կոռուպցիայի դեմ պայքարի մի շարք դրույթներ, մասնավորապես՝ կոռուպցիայի կանխարգելման, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ուղղություններով¹⁴¹: Ռազմավարության մեջ նշվում է ՔՀԿ-ների մասնակցության կարևորությունը հակակոռուպցիոն գործընթացներում:

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքը¹⁴² չի պարունակում այնպիսի դրույթներ, որոնք կարող են սահմանափակել կամ անհնարին դարձնել ՔՀԿ-ների օրինական գործունեությունը կամ հիմնարար ազատությունների իրացումը: Ըստ այս օրենքի, հաշվետվություն տրամադրող անձինք, որոնց թվում են բանկերը, վարկային կազմակերպությունները, նոտարները, պետական ռեգիստրը և այլն, պարտավոր են հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնել՝ ներդնելով ռիսկի կառավարման ընթացակարգեր, որոնք կբացահայտեն և կզննահատեն հնարավոր կամ առկա ռիսկերը և կապահովեն ռիսկերին համարժեք միջոցների ձեռնարկումը: Բարձր ռիսկի չափանիշի առկայության կամ լիազոր մարմնից՝ ՀՀ կենտրոնական բանկից հաճախորդի հավելյալ ուսումնասիրության իրականացման հանձնարարականի ստացման դեպքում հաշվետվություն տրամադրող անձը պետք է իրականացնի հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն¹⁴³: ՔՀԿ-ներն այս օրենքով հաշվետվություն տրամադրող անձ չեն համարվում և որևէ պարտավորություն չունեն այդ առումով:

Որոշ ՔՀԿ-ներ նշել են, որ բանկից չափազանց մանրամասն

141 «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, <https://www.e-draft.am/projects/1733> :

142 ՀՀ օրենքը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին», 26.05.2008:

143 ՀՀ օրենքը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին», 26.05.2008, հոդված 18:

տեղեկատվություն է պահանջվել հաշիվ բացելիս՝ օրինակ, պահանջվել են բոլոր հիմնադիրների անձնագրային տվյալները, մեկ այլ դեպքում էլ օտարերկրյա դոնորի կողմից ֆինանսավորվող ծրագիր ստանալուց բանկը պահանջել է դոնորի հետ պայմանագրի օրինակը՝ իր բոլոր հավելվածներով: Մի քանի ՔՀԿ-ի դեպքում բանկը պահանջել է լրացնել մի ձևաթուղթ՝ կազմակերպության գործունեությունն ու գումարների նպատակը ճշտելու համար¹⁴⁴: Ըստ էության, լրացուցիչ տեղեկատվության պահանջը բխել է վերոնշյալ օրենքի դրույթներից՝ փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի շրջանակներում: Այնուամենայնիվ, այս պահանջները ՔՀԿ-ները ավելորդ ու ծանրաբեռնող են համարել, թեև բանկը նմանատիպ պահանջներ կարող է առաջադրել՝ իր ներքին իրավական ակտերի հիման վրա:

ՈՒՈՐՏ 8-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Սահմանել ատելության խոսքի վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ և ապահովել պատշաճ պաշտպանություն ու համապատասխան պատժամիջոցների կիրառում ատելության խոսքի, ատելության հանցանքի դրսևորումների դեպքում: Ազգային, ռասայական ու կրոնական հիմքերով ատելության ու բռնության բորբոքումից զատ որպես հավաքի արգելման հիմք սահմանել առհասարակ ատելության հրահրումն ու բռնության քարոզը:
- Հանրության շրջանում հանդուրժողականության, մարդու իրավունքների գերակայության, ատելության խոսքի բացառման ուղղությամբ իրազեկման միջոցառումներ կազմակերպել:
- Պետական պաշտոնյաների կողմից խտրականության և մարդու իրավունքների սկզբունքների խախտման դեպքում նրանց վարքագծի համապատասխանությունը քննել համապատասխան էթիկայի հանձնաժողովներում, ըստ անհրաժեշտության՝ էթիկայի վարույթներ հարուցել և համապատասխան պատժամիջոցներ կիրառել:

4.9 Պետական աջակցություն

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԶՀԿ-ՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ և ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ԿԱՆ:

Պետական աջակցությունը տրամադրվում է զգալի թվով ՔՀԿ-ների, սակայն հստակ տարբերակում չկա աջակցության տարբեր տեսակների նպատակների և ընթացակարգերի միջև:

Պետական ֆինանսական և նյութական աջակցության տրամադրումը կարգավորվում է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և

144 ՖԻՄ քննարկում Գյումրիում, 12.04.2019, ՖԻՄ քննարկում Երևանում, 16.04.2019:

դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» որոշմամբ: Ըստ այս որոշման՝ կազմակերպությունը, որին հատկացվում է դրամաշնորհ, որոշվում է սահմանված կարգի համաձայն կազմակերպվող և անցկացվող մրցույթի արդյունքներով, իսկ սուբսիդիան հատկացվում է տվյալ ոլորտը կարգավորող պետական մարմնի և կազմակերպության միջև կնքված սուբսիդիայի տրամադրման մասին պայմանագրի հիման վրա¹⁴⁵: Սակայն գործնականում ՔՀԿ-ներին տարիներ շարունակ ֆինանսական միջոցներ են հատկացվել հիմնականում առանց մրցութային ընթացակարգի՝ ըստ «Բյուջեի մասին» պետական օրենքով սահմանված՝ առանց մրցույթի դրամաշնորհներ ստացող կազմակերպությունների ցանկի, ինչպես նաև առանձին իրավական ակտերի հիման վրա¹⁴⁶:

2018 թվականի բյուջեում «Եվրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» և «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածներով հատկացվող ֆինանսավորումը կազմել է 6,4 միլիարդ դրամ: ՔՀԿ-ներին միջոցներ են տրամադրվել նաև այլ հոդվածներով, այդ թվում՝ ծառայությունների մատուցման պայմանագրերով¹⁴⁷: Օրենքով սոցիալական պատվիրակման մեխանիզմ սահմանված չէ. ՔՀԿ ծառայությունները պետության կողմից ձեռք են բերվում դրամաշնորհների, սուբսիդիաների կամ ֆինանսավորման այլ պայմանագրերի, ինչպես նաև պետական գնումների մրցույթների միջոցով, որոնք բաց են բոլոր կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների համար: Ծառայությունների մատուցման համար ՔՀԿ-ներին տրամադրված գումարների մասին ամփոփ տեղեկատվություն չկա: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սուբսիդիաներ է տրամադրում տարեցների խնամքի ոլորտում սոցիալական ծառայություններ մատուցող ՔՀԿ-ներին, հաշմանդամություն ունեցող երեխաների կենտրոններին, բայց դրա վերաբերյալ համախմբված տեղեկատվություն չկա:

Ըստ «ՀԿ կենտրոնի» կողմից իրականացված հետազոտության՝ 2017 թվականին պետական ֆինանսավորում է հատկացվել 138 հասարակական կազմակերպությունների և 12 հիմնադրամների: Հատկացված գումարը գրեթե հավասարաչափ էր բաշխված ՀԿ-ների և հիմնադրամների միջև, ընդ որում պետական ֆինանսավորում ստացած հիմնադրամների մեծ մասը (95%) պետության կողմից հիմնադրված և (կամ) ղեկավար մարմնում կառավարության մասնակցությամբ հիմնադրամներն էին¹⁴⁸:

Օրենքը հստակ բնորոշում կամ տարբերակում չի սահմանում ՔՀԿ-ների ֆինանսավորման տեսակների՝ ներառյալ ծառայությունների

145 ՀՀ կառավարության N 1937-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին», 24.12.2003:

146 Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018, 2017թ.:

147 ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին», 08.12.2017:

148 ՔՀԿ-ների պետական ֆինանսավորման աղբյուրները. Մշտադիտարկում, «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ, Երևան, 2019թ.:

մատուցման պայմանագրերի, դրամաշնորհների, նվիրատվությունների և սուբսիդիաների համար: Հասկանալի չէ, թե ինչպես է որոշվում ֆինանսավորման տեսակը, որոնք են մրցութային կամ ոչ մրցութային ֆինանսավորման եղանակ ընտրելու սկզբունքները, մոնիտորինգի և գնահատման մեխանիզմները¹⁴⁹:

ՔՀԿ-ներին ֆինանսավորում է տրամադրվում նաև մարզպետարանների և համայնքապետարանների բյուջեներից, սակայն տրամադրված գումարի չափի և դրամաշնորհ ստացած ՔՀԿ-ների քանակի վերաբերյալ տեղեկությունները հասանելի չեն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2. ՔՀԿ-ՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՁԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՒՄ Է ՀՍԱԿ և ՕԲՅԵԿՏԻՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՎ և ՀԱՏՎԱՑՎՈՒՄ Է ԹԱՓԱՆՑԻԿ և ՄՐՑԱԿՑԱՑԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ:

Պետական ֆինանսավորման գործընթացը, ինչպես նաև ֆինանսավորված ծրագրերի մոնիտորինգն ու գնահատումը հստակ և թափանցիկ չեն:

Միայն երկու պետական կառույցներ՝ ՀՀ նախագահի աշխատակազմը և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն¹⁵⁰ են միջնորդ կազմակերպությունների միջոցով դրամաշնորհային մրցույթներ կազմակերպել և տեղեկատվություն ներկայացրել ֆինանսավորված կազմակերպությունների և կամ ծրագրերի մասին¹⁵¹: Բաց կառավարման գործընկերության Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագրով նախատեսվել է մրցութային դարձնել բոլոր դրամաշնորհները¹⁵², և 2019-ին կառավարությունը քայլեր է ձեռնարկել այդ ուղղությամբ՝ մի շարք նախարարություններում նախաձեռնելով միջոցների բաշխման մրցութային գործընթացներ: Հետազոտությանը մասնակցած ՔՀԿ ներկայացուցիչները, որոնք տարբեր գերատեսչություններում ընդգրկված են եղել մրցութային այդ գործընթացներում որպես հանձնաժողովի անդամ կամ դիմորդ, նշում են, որ գործընթացը դեռևս կայացման փուլում է: Չկան ընտրության հստակ ընթացակարգեր, չափանիշներ, ինչպես նաև ընտրված դրամաշնորհառու կազմակերպության հետ հաղորդակցության և ծրագրային մոնիտորինգի հստակ մեխանիզմներ: Խնդիրներ են արձանագրվել նաև մրցույթներում նախատեսված՝ բյուջեի ծախսերի ոչ ողջամիտ սահմանափակումների առումով, որոնց հետևանքով մասնագիտացած ՔՀԿ-ները խուսափում են դիմել մրցույթներին՝ վստահ լինելով, որ ներկայացված գնային սանդղակի պայմաններում չեն կարող պատշաճ որակի ծառայություններ ապահովել: Նման պարագայում կասկած է առաջանում նաև իրականացված ծրագրերի

149 ՔՀԿ-ների պետական ֆինանսավորման աղբյուրները. Մշտադիտարկում, «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ, Երևան, 2019թ.:

150 2019 թ. մայիսի 8-ին «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի ընդունումից հետո այս նախարարությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կազմում է ներառվել:

151 Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2017թ. ՔՀԿ կայունության ինդեքս, 2018թ. սեպտեմբեր:

152 «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր, Հավելված ՀՀ կառավարության N 1307-Լ որոշման, 15.11.2018:

արդյունավետության վերաբերյալ:

Ինչպես նշվեց, ՔՀԿ-ները ֆինանսավորվում են նաև մարզպետարանների և համայնքապետարանների բյուջեներից, սակայն այդ գործընթացը ևս եղել է հայեցողական և ոչ թափանցիկ: ՖԽ քննարկումներին մասնակցած մարզային ՔՀԿ-ների ներկայացուցիչները նշում են, որ հաճախ չեն իմացել, թե որքան գումար և որ կազմակերպությանն է տրվել, անգամ տեղյակ չեն եղել դիմելու և գումար ստանալու հնարավորության մասին: ՖԽ քննարկման մասնակիցներից մեկը նշեց, որ նախկին քաղաքային իշխանությունը հիմնականում գումար տալիս էր այն ՀԿ-ներին, որոնցից հետագայում, մասնավորապես՝ ընտրությունների գործընթացում, մեծ աջակցություն էր ստանում՝ «ընդունված էր, որ այս ՀԿ-ն պետք է ստանա Էսքան դրամ, բայց մյուսները որ դիմում էին, մերժում էր՝ հիմնավորելով որ բյուջեում գումար չկա»: Ըստ ՖԽ քննարկումների մասնակիցների՝ մարզպետարանների ու համայնքապետարանների գումարները հիմնականում տրվել են մշակութային կամ տոնական միջոցառումներ կազմակերպելու, ինչպես նաև կազմակերպության գործառնական ծախսերը հոգալու համար¹⁵³: Ներկայումս նոր իշխանության օրոք տեղական մակարդակով ևս միտում կա բարելավելու ՔՀԿ ֆինանսավորման գործընթացների թափանցիկությունը, սակայն հստակ ընթացակարգեր ու մեխանիզմներ դեռևս չեն մշակվել:

ՔՀԿ-ներին որոշ աջակցություն է տրվում մարզային ու համայնքային կառույցների կողմից՝ գրասենյակային տարածքի տրամադրման միջոցով: Այնուամենայնիվ, այս պարագայում էլ չկան հստակ չափանիշներ կամ մեխանիզմներ՝ աջակցության շնորհիվ ստացված արդյունքները գնահատելու համար: Բացի այդ, ՔՀԿ-ները նշում են, որ ռիսկ կա որոշակի կախվածության տակ ընկնելու կամ առնվազն հանրության կողմից նման ընկալում ունենալու տեսանկյունից: Օրինակ, ՔՀԿ-ներից մեկը նշեց, որ մարզպետարանի կողմից սենյակի տրամադրումից հետո ՔՀԿ անդամներից երբեմն խնդրել են տեղեկատվություն տրամադրել տարբեր հարցերի վերաբերյալ, և հետագայում ՔՀԿ-ն հրաժարվել է տարածքից, որպեսզի որպես մարզպետարանի բաժին չընկալվի թե՛ աշխատակիցների, թե՛ արտաքին լսարանի կողմից:

Ըստ ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» որոշման՝ բյուջեի հաստատումից հետո համապատասխան պետական մարմնի ղեկավարը կազմավորում է տվյալ դրամաշնորհի հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի՝ առնվազն 3 անդամից կազմված հանձնաժողով: Որևէ նշում չկա հանձնաժողովում ՔՀԿ ներկայացուցիչների մասնակցության վերաբերյալ: Որոշմամբ սահմանվում է նաև, որ դրամաշնորհի հատկացման պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում պայմանագիր կնքած կազմակերպության տվյալները և

153 ՖԽ քննարկում Գյումրիում, 12.04.2019, ՖԽ քննարկում Երևանում, 16.04.2019:

ներկայացված ծրագիրը հրապարակվում են դրամաշնորհ տրամադրած պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

Ինչպես նշվեց վերը, գործնականում պետական դրամաշնորհների մրցութային հատկացման գործելակերպը դեռևս կայացման փուլում է, իսկ Ֆինանսավորված դրամաշնորհային ծրագրերի մասին հրապարակվող տեղեկատվությունն անբավարար է: Հետազոտության մասնակից ՔՀԿ-ները բազմիցս նշել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության¹⁵⁴ դրամաշնորհների տրամադրման առցանց համակարգը՝ որպես պետական Ֆինանսավորման մրցութային և թափանցիկ տրամադրման դրական փորձ, որտեղ ծրագրերի գնահատումը իրականացվում է պետական և ոչ պետական հատվածների փորձագետների խմբի կողմից՝ սահմանված չափորոշիչների հիման վրա¹⁵⁵:

Առցանց հարցմանը մասնակցած ՔՀԿ-ների մեծ մասը (73-ից 55-ը) վերջին երկու տարիներին չի դիմել պետական Ֆինանսավորման համար, և շատերը պետական Ֆինանսավորման համար դիմելու ընթացակարգը որակել են որպես փակ և անորոշ: Հարցման շրջանակներում ներկայացված՝ առանձին ՔՀԿ-ների նկատմամբ պետական մարմինների կողմից արտոնյալ վերաբերմունքի մասին հարցին իրենց պատասխանում բազմաթիվ ՔՀԿ-ներ նշել են պետության կողմից սնվող, «գրպանային», հատուկ պետական դրամաշնորհների համար ստեղծված կազմակերպությունների մասին՝ ընդգծելով, որ գործընթացը թափանցիկ ու մրցութային չի եղել, հայտնի չեն Ֆինանսավորման չափանիշները: Պետական Ֆինանսավորմանը դիմելու մեկ այլ խոչընդոտ է հանրային միջոցներից որոշակի չափից ավելի Ֆինանսավորում ստանալու դեպքում օրենքով սահմանված՝ պարտադիր աուդիտի պահանջը, որը ոչ բոլոր հասարակական կազմակերպություններն են կարողանում իրականացնել:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3. ՔՀԿ-ՆԵՐՆ ՕԳՏՎՈՒՄ ԵՆ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՑ:

ՔՀԿ-ներին հատկացված դրամաշնորհները և նվիրատվությունները (այդ թվում՝ անվճար ծառայությունների տեսքով) չեն հարկվում: Բարեգործական ծրագրերի համար հարկային որոշ արտոնություններ են տրամադրվում հատուկ ընթացակարգով: Սակայն տնտեսական գործունեության դեպքում կիրառվող հարկերը նույնն են, ինչ առևտրային ընկերությունների համար՝ առանց ընկերությունների հատկացված հարկման այլընտրանքային մեխանիզմի օգտագործման հնարավորության:

ՀՀ օրենսդրության համաձայն ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները, աշխատանքները և ծառայությունները շահութահարկով չեն հարկվում¹⁵⁶: Միևնույն ժամանակ, եթե ոչ առևտրային

154 2019 թ. մայիսի 8-ին «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի ընդունումից հետո այս նախարարությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կազմում է ներառվել:

155 ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, պետական երիտասարդական քաղաքականություն, առցանց դրամաշնորհային համակարգ, <http://cragrer.am/>:

156 ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 108:

կազմակերպության՝ գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցում 115 միլիոն ՀՀ դրամը, ապա այդ կազմակերպությունը ԱԱՀ վճարելու պարտավորություն չի կրում¹⁵⁷ (մինչև 2019 թ. հունիսին ընդունված փոփոխությունները այս շեմը կազմում էր 58,35 միլիոն ՀՀ դրամ): Հասարակական, բարեգործական և կրոնական կազմակերպությունների կողմից ապրանքների անհատույց մատակարարումը, աշխատանքների անհատույց կատարումը և ծառայությունների անհատույց մատուցումը ևս ազատվում են ԱԱՀ-ից¹⁵⁸:

«Բարեգործության մասին» օրենքի համաձայն՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնությունները լիազորված մարմնի կողմից բարեգործական որակված ծրագրերին տրամադրվում են օրենքով սահմանված կարգով¹⁵⁹: Այս արտոնությունները կարող են ներառել գնված ապրանքների ու ծառայությունների ազատում ԱԱՀ-ի վճարումից, արտասահմանից ապրանք ներկրելու դեպքում մաքսատուրքից ազատում և այլն: ՀՀ կառավարության «Բարեգործական ծրագրերի մասին» որոշմամբ հաստատվել են ծրագրերը բարեգործական որակելու, այդ ծրագրերի հետ կապված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների շրջանակը որոշելու վերաբերյալ հայտը ներկայացնելու, քննարկելու, որոշում ընդունելու ընթացակարգերը: Այդ ընթացակարգերը կարգավորում են նաև բարեգործական որակում ունեցող ծրագրերը գրանցելու և դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև նշված որակումը փոփոխելու կարգը¹⁶⁰: Այսինքն, բարեգործական ծրագրի որակումը տրվում է կոնկրետ ծրագրի՝ դրա տևողության ժամանակահատվածի համար, սակայն այս որակումը կարող է փոփոխվել, եթե ծրագրի իրականացման ընթացքում խնդիրներ բացահայտվեն, օրինակ՝ ծրագրային փաստաթղթերում կեղծ տեղեկատվության հայտնաբերման կամ օրենսդրության պահանջների էական խախտումների առկայության դեպքում¹⁶¹: Ծրագիրը բարեգործական որակվելու դեպքում տվյալ կազմակերպությունը պետք է իր գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություն ներկայացնի լիազոր մարմնին: Լիազոր մարմինը, որը կայացնում է որոշումները և իրականացնում «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգով» սահմանված մյուս գործառնությունները, հանդիսանում է ՀՀ փոխվարչապետը: Վերջինս պետք է ծրագրերը բարեգործական որակելու մասին որոշում կայացնի Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կողմից ներկայացված

157 ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 59:

158 ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 64:

159 ՀՀ օրենքը «Բարեգործության մասին», 08.10.2002, հոդված 16:

160 ՀՀ կառավարության N 66-Ն որոշումը «Բարեգործական ծրագրերի մասին» 16.01.2003:

161 ՀՀ կառավարության N 66-Ն որոշումը «Բարեգործական ծրագրերի մասին», 16.01.2003, Հավելված 1. Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգը, հոդված 28:

առաջարկությունների հիման վրա¹⁶²:

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու դեպքում ՔՀԿ-ները գործում են շահութահարկի, իսկ շրջանառության` 115 միլիոն դրամի շեմը անցնելու դեպքում` ԱԱՀ-ի վճարման նույն դաշտում, ինչ առևտրային ընկերությունները: Ի տարբերություն առևտրային ընկերությունների` ՔՀԿ-ները չեն կարող օգտվել շրջանառության հարկից: Հարկ է նշել, որ քանի որ օրենքում չկա հստակ ձևակերպում հակառակի մասին, նվիրատվություններից ու դրամաշնորհներից ստացած գումարը 115 միլիոն դրամի շեմը անցնելու դեպքում ՔՀԿ-ների ձեռնարկատիրական գործունեությունը կարող է ԱԱՀ-ի վճարման ենթակա լինել` անկախ այդ գործունեությունից ստացած եկամտի ծավալից:

Հետագոտության մասնակիցները տարաբնույթ կարծիքներ ունեն ՔՀԿ-ներին լրացուցիչ հարկային արտոնությունների հատկացման մասին: Մի մասն անբավարար է համարում առկա արտոնությունները և շեշտում դրանց ընդլայնման անհրաժեշտությունը, մյուսներն էլ գտնում են, որ նոր արտոնությունները չարաշահումների առիթ կտան և կվնասեն ՔՀԿ հատվածի վարկանիշին: Այնուամենայնիվ, մի քանիսը կարծիք են հայտնել, որ ապրանքների և ծառայությունների գնումների ազատումը ԱԱՀ-ից կարելի է նախատեսել ոչ միայն միջպետական պայմանագրերով նախատեսված` որոշակի դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի դեպքում, այլև հանրային միջոցներից ֆինանսավորվելու դեպքում: Ինչ վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության պարագայում հատկացվող արտոնություններին, ապա ՔՀԿ-ներն առաջարկում են նախ հստակ չափանիշներ սահմանել սոցիալական նպատակով իրականացվող ձեռնարկատիրության համար, որի հիման վրա հետագայում հնարավոր կլինի արտոնությունների ներդրումն ու կիրառումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4. ՔՀԿ-ՆԵՐԻՆ ԼՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՎԱՑՄԱՆ ԴԵՊՁՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԱՆՀԱՏՆԵՐԸ ՕԳՏՎՈՒՄ ԵՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ:

ՔՀԿ-ների նվիրատու կազմակերպություններին տրամադրվում է հարկվող եկամտի նվազեցման հնարավորություն, սակայն այդ նվազեցումը շատ փոքր է համարվում` բարեգործական նվիրատվությունները խթանելու համար: Անհատ նվիրատուների համար որևէ արտոնություն նախատեսված չէ:

Ըստ օրենքի` շահութահարկ վճարող կազմակերպությունների (ներառյալ` ընկերությունների, անհատ ձեռնարկատերերի, տնտեսական գործունեություն իրականացնող ՔՀԿ-ների) հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված ակտիվների, դրանց համար կատարված աշխատանքների և կամ դրանց մատուցված ծառայությունների արժեքը, բայց ոչ ավելի, քան հարկային տարվա համախառն եկամտի 0,25

162 ՀՀ վարչապետի N 1111-Ա որոշումը «Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կանոնադրությունն ու անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի մարտի 14-ի N 205 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, 21.08.2018:

տոկոսը¹⁶³: Որևէ այլ հարկային արտոնություն նվիրաբերող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար օրենքով նախատեսված չէ:

Ըստ հետազոտությունների՝ հարկվող եկամտի նվազեցման ներկա շեմը ընկերությունների կողմից նվիրատվությունների խթան չի հանդիսանում, և շատ դեպքերում ընկերություններն անգամ նվիրատվություններ տրամադրելիս գերադասում են չօգտվել նշված արտոնություններից՝ հիմնականում այս գործընթացի հետ կապված թղթաբանությունից խուսափելու համար¹⁶⁴:

Այս ուսումնասիրության շրջանակում իրականացված հարցազրույցների և ՖԻՏ քննարկումների մասնակիցներից մի քանիսը նշել են 1 կամ 2 տոկոսի հարկի օրենքի անհրաժեշտության մասին՝ որպես ՔՀԿ-ների համար ֆինանսական կայունությունն ապահովող և միաժամանակ ՔՀԿ գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը խթանող մեխանիզմ: Այս օրենքը գործում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում և հնարավորություն է տալիս անհատներին իրենց վճարած հարկի մեկ կամ երկու տոկոսը ըստ նախընտրության հատկացնել որևէ ՔՀԿ-ի¹⁶⁵:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆՈՒՄ ԵՆ ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ և ԽԹԱՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԴՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ:

Օրենսդրությամբ սահմանված են կամավորների և կամավոր աշխատանքի հասկացությունները, սակայն կամավորության զարգացման խթանները բավարար չեն:

«Բարեգործության մասին» օրենքում ներկայացված է կամավորների սահմանումը, համաձայն որի՝ կամավորներն այն ֆիզիկական անձիք են, ովքեր կատարում են անհատույց աշխատանքներ բարեգործություն ստացողների օգտին¹⁶⁶: «Բարեգործության մասին» օրենքով սահմանված են նաև պետության կողմից կամավորների գործունեությունը խրախուսող նորմեր. այսպես՝ օրենքը սահմանում է ՀՀ նախագահի կողմից «Հայաստանի Հանրապետության պատվավոր կամավոր» և «Հայաստանի Հանրապետության տարվա կամավոր» կոչումների շնորհումը¹⁶⁷: Այնուամենայնիվ, չի հաջողվել տեղեկատվություն գտնել ՀՀ նախագահի կողմից որևէ անձի երբևէ այս կոչումները շնորհելու մասին:

Ըստ աշխատանքային օրենսգրքի՝ կամավոր աշխատանքը և օգնություն ցուցաբերելու նպատակով կատարված աշխատանքը չեն կարող համարվել անօրինական, միաժամանակ նշված է, որ այդպիսի

163 ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 123:

164 ՔՀԿ-ների ներգրավվածությունը քաղաքականության մշակման և իրականացման մոնիթորինգի գործում. կարիքներ և կարողություններ, Երևան, 2014թ.: Հայաստանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների զարգացման կարիքների գնահատում, 2016թ.:

165 «Տոկոսի հատկացման վերաբերյալ օրինագծեր», Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն, http://ecnl.org/category/percentage-laws/?post_type=publications:

166 ՀՀ օրենքը «Բարեգործության մասին», 08.10.2002, հոդված 9:

167 ՀՀ օրենքը «Բարեգործության մասին», 08.10.2002, հոդված 15:

աշխատանքների կատարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով¹⁶⁸: «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով սահմանվում է հասարակական կազմակերպության կողմից կամավորներ ներգրավելու իրավունքը և ընթացակարգը, ընդ որում, եթե կամավոր աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր: Միևնույն ժամանակ, արգելվում է կամավորներին ներգրավել կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության մեջ¹⁶⁹:

Միջազգային կամավորությունը գործնականում կիրառվում է Հայաստանում, և բազմաթիվ կազմակերպություններ կամավորներ են ուղարկում արտասահման և կամ համակարգում են օտարերկրյա կամավորների ներգրավումը տեղական ՔՀԿ-ներում: Այնուամենայնիվ, միջազգային կամավորության վերաբերյալ որևէ իրավական կանոնակարգ չկա: Կամավորական փորձը ընդհանուր առմամբ գնահատվում է ՔՀԿ-ներում և շատ ընկերություններում, իսկ որոշ միջազգային համալսարաններ ընդունելության ընթացքում հաշվի են առնում կամավորական աշխատանքային փորձը: Այնուամենայնիվ, այս պրակտիկան առկա է մասնավոր մակարդակում և չի խթանվում կամ կարգավորվում պետության կողմից:

2017 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ էր դրվել «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» օրենքի նախագիծը, որով որոշակի հստակեցումներ էին ներառված կամավորության սահմանման, կամավորների իրավունքների և պարտականությունների, ծախսերի փոխհատուցման և այլ հարցերի վերաբերյալ¹⁷⁰: Մակայն նախագիծը քննադատության արժանացավ ՔՀԿ-ների կողմից՝ որպես սահմանափակող օրինագիծ, քանի որ նախագծով նախատեսված պարտավորություններն անհիմն հաշվետվողականության բեռ էին դառնում կամավորներ ներգրավող ՔՀԿ-ների համար, իսկ կամավորների անձնական տվյալները պետական մարմիններին տրամադրելու պահանջը վիճելի էր մասնավոր կյանքի իրավունքի տեսանկյունից: Երկայուն այս նախագիծը սառեցված է:

Այնուամենայնիվ, քանի որ կամավորության կանոնակարգումը ներառված է միայն «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում, հիմնադրամներում կամավորների ներգրավումը մնում է չկարգավորված, իսկ կամավորների ծախսերի փոխհատուցումը ներկա օրենսդրությամբ համարվում է հարկման ենթակա եկամուտ:

168 ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 09.11.2004, հոդված 102:

169 ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 17:

170 ՀՀ օրենքը «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին», նախագիծ, <https://www.e-draft.am/projects/389/about>:

ՈՒՈՐՏ 9-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Պետական աջակցությունը թափանցիկ ու մրցութային հիմքերի վրա դնել՝ ապահովելով թափանցիկ, արդյունավետ ու մասնակցային ընթացակարգեր: Որպես հաջողված փորձ կարելի է օգտագործել Նախկին Սպորտի և երիտասարդության հարցերով Նախարարության առցանց դրամաշնորհային համակարգի ընթացակարգերը, որոնք դրական են գնահատվել ԶՀԿ-ների կողմից:
- Բոլոր պետական մարմինների կողմից տրամադրվող ֆինանսավորման հնարավորությունների և այդ ֆինանսավորմամբ իրականացված ծրագրերի վերաբերյալ առցանց տեղեկատվություն տրամադրել՝ ցանկալի է մեկ միասնական հարթակի միջոցով, որը կապահովի թափանցիկությունը և օգտագործման դյուրինությունը:
- Հստակ և թափանցիկ կանոնակարգեր ապահովել ԶՀԿ-ների ֆինանսավորման հնարավոր մեխանիզմների, ներառյալ՝ դրամաշնորհների, սուբսիդիաների, ծառայությունների մատուցման պայմանագրերի և ֆինանսավորման այլ տեսակների վերաբերյալ՝ հստակ տարբերակելով այս մեխանիզմներից յուրաքանչյուրի նպատակները, ֆինանսավորման, ընտրության, մոնիտորինգի և հաշվետվությունների տրամադրման ընթացակարգերը:
- Վերացնել հանրային միջոցներից ֆինանսավորման դեպքում պարտադիր ֆինանսական աուդիտի պահանջը՝ աուդիտի պարտավորությունը դնելով ֆինանսավորող պետական մարմնի կամ այլ լիազոր մարմնի վրա:
- ԶՀԿ-ներին ձեռնարկատիրական գործունեության համար ավելի բարենպաստ հարկային դաշտ տրամադրել՝ հնարավորություն տալով աշխատել շրջանառության հարկի սկզբունքով, ինչպես նաև հստակ սահմանելով արտոնությունների համար անհրաժեշտ պայմաններն ու չափանիշները:
- Հստակեցնել ԱԱՀ-ի շեմի համար հաշվարկվող շրջանառության մեջ ներառված եկամուտների տեսակը՝ այդ շրջանառության ծավալում հաշվի առնելով միայն ձեռնարկատիրական գործունեությունից եկած հասույթը:
- Բարելավել նվիրատուների համար տրամադրվող հարկային արտոնությունները՝ անհատների և առևտրային ընկերությունների կողմից ԶՀԿ-ներին ուղղված նվիրատվությունները խթանելու համար:
- Կամավորությունը խթանող դրույթներ ներառել աշխատանքային և հարկային օրենսգրքերում, հիմնադրամների մասին օրենքում, ըստ

4.10 Պետություն-ՔՀԿ համագործակցություն

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1. ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՊԱՍՏՈՒՄ Է ՔՀԿ-ՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ և ՆՐԱՆՑ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ:

Որոշումների կայացման գործընթացում հանրային մասնակցությունը կարգավորող օրենքներից զատ` պետություն-ՔՀԿ համագործակցությունը կարգավորող կամ խթանող հատուկ քաղաքականություն կամ ռազմավարություն չկա:

Պետության և ՔՀԿ-ների միջև համագործակցության վերաբերյալ առանձին մշակված համընդհանուր քաղաքականություն կամ ռազմավարություն չկա: Համագործակցությունը հիմնականում ձևավորվում է տարբեր իրավական ակտերի միջոցով սահմանված հանրային մասնակցության հնարավորությունների շուրջ, այդ թվում` Հանրային խորհրդի և նախարարություններին ու այլ գերատեսչություններին կից հասարակական խորհուրդների ու ոլորտային աշխատանքային խմբերի միջոցով:

2014 թվականի սեպտեմբերին կառավարությունն ընդունեց «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգը», որը մշակվել էր ՔՀԿ-ների հետ լայն քննարկումների արդյունքում: Հայեցակարգը ՔՀԿ-ների համար բարենպաստ մի շարք դրույթներ ներառեց, որոնք հիմք հանդիսացան «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքի մշակման համար¹⁷¹: Հայեցակարգի նպատակը սահմանված է որպես ՔՀԿ-ների բնականոն գործունեության և կայուն զարգացման ապահովում: Օրենքում ներառված դրույթներից բացի հայեցակարգը պարունակում է մի քանի այլ դրույթներ, որոնք մինչ օրս չեն իրականացվել, օրինակ` կամավորների ծախսերի փոխհատուցման կարգի սահմանում, ՔՀԿ-ների առցանց գրանցման հնարավորության ապահովում, ՀՀ պետական բյուջեից ՔՀԿ-ներին տրվող ֆինանսական աջակցության ռազմավարության ու ընթացակարգերի սահմանում և ՔՀԿ-ներին հատկացվող պետական ֆինանսավորման առցանց շտեմարանի ստեղծում: Հայեցակարգին կից կա ժամանակացույց, որտեղ, բացի ժամկետներից, նշված են նաև պատասխանատու պետական մարմիններն ու ֆինանսավորման աղբյուրը, ընդ որում, գործողություններն ըստ ժամանակացույցի պետք է իրականացվեին մինչև 2015 թվականի ավարտը: Հայեցակարգի իրականացման մոնիտորինգ, ըստ երևույթին, պետության կողմից չի իրականացվել, կամ առնվազն այդ մասին որևէ հրապարակային տվյալ չկա:

ՖԻՐ քննարկումների մասնակից կազմակերպությունները և հարցված

171 Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2014թ. ՔՀԿ կայունության ինդեքս, 2015թ. հունիս:

փորձագետները տարբեր կարծիքներ ունեն այն հարցում, թե արդյոք անհրաժեշտ է պետություն-ՔՀԿ համագործակցության վերաբերյալ առանձին հայեցակարգ կամ ռազմավարություն, բայց բոլորն, ըստ էության, համակարծիք են, որ այս համագործակցությունն անհրաժեշտություն է: Ծատերը նշում են, որ, բացի որոշումների ընդունման գործընթացում ՔՀԿ մասնակցությունից, համագործակցությունը պետք է դրսևորվի նաև տարբեր խնդիրների ուղղությամբ ջանքերի համատեղման միջոցով, այդ թվում՝ պետության կողմից ՔՀԿ-ներին որոշակի ծառայությունների ու գործառույթների պատվիրակմամբ: Առաջարկվել է նաև ՔՀԿ-ներին ներգրավել տարբեր ոլորտային ռազմավարությունների իրականացման գործընթացում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՂ ՀԱՏՈՒԿ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ՈՒՆԻ:

Պետություն-ՔՀԿ համագործակցությանն աջակցելու համար տարբեր խորհրդակցական մարմիններ են ստեղծվել, բայց դրանց արդյունավետությունն ու ազդեցությունն ապահովելու համար մի շարք քայլեր են անհրաժեշտ:

ՀՀ սահմանադրության և «Հանրային խորհրդի մասին» օրենքի համաձայն ստեղծվել է Հանրային խորհուրդը՝ որպես կառավարության խորհրդակցական մարմին: Հանրային խորհրդի հիմնական խնդիրներից են՝ քաղաքականության մշակման և իրականացման գործում հասարակության տարբեր շերտերի շահերը ներկայացնելը, պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությանը նպաստելը, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության զարգացման քաղաքականության առաջնահերթությունների վերաբերյալ կառավարությանն առաջարկություններ ներկայացնելը, կառավարության, պետական կառավարման համակարգի մարմինների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջև փոխադարձ վստահության, երկխոսության և գործընկերային հարաբերությունների ձևավորմանը նպաստելը, հանրային նշանակություն ունեցող հարցերի, այդ թվում՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի, պետական ծրագրերի, ռազմավարությունների, հայեցակարգերի և դրանց նախագծերի վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելը¹⁷²: Ըստ օրենքի՝ Հանրային խորհրդին կից գործում են 15 ոլորտային մշտական հանձնաժողովներ, իսկ առանձին հարցերի քննարկման համար կարող են ձևավորել ժամանակավոր հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր: Հանրային խորհուրդը կազմված է 45 անդամից, որից 15-ին նշանակում է ՀՀ կառավարությունը, սպա տարբեր կառույցներից վարկանիշային ընտրության միջոցով հավաքագրվում են ևս 15 անդամ: Հետագայում արդեն 30 անդամների կողմից ընտրվում են մնացած 15 անդամները՝ առկա անդամների կողմից առաջադրված թեկնածուներից: Հանրային խորհրդի նախագահի թեկնածուին 45 անդամների շարքից ընտրում է վարչապետը

172 ՀՀ օրենքը «Հանրային խորհրդի մասին», 07.03.2018թ., հոդված 2:

և ներկայացնում է կառավարությանը՝ հաստատման համար¹⁷³:
Հետազոտության մասնակիցները Հանրային խորհրդի աշխատանքին
թերահավատորեն են վերաբերում՝ նշելով, որ այն ձևական և փաստացի
չգործող կառույց է:

Ըստ կառավարության 2016 թվականի որոշման՝ նախարարությունների
առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման ընթացքում
քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովման
նպատակով նախարարներին կից հասարակական խորհուրդներ պետք
է ստեղծվելին՝ այդ մասին կետ ավելացնելով նախարարությունների
կանոնադրություններում¹⁷⁴: 2018 թվականի մայիսին պետական
կառավարման մարմինների համար կանոնադրության նոր օրինակելի
ձևաչափ հաստատվեց, իսկ դեկտեմբերի որոշմամբ այդ ձևաչափում
նորից ավելացվեց նախարարություններում հասարակական
խորհուրդներ ստեղծելու վերաբերյալ կետը¹⁷⁵: 2018 թվականին
ընդունված՝ նախարարությունների կանոնադրության օրինակելի
ձևերում վերասահմանվեց հասարակական խորհուրդ ձևավորելու
վերաբերյալ կետը¹⁷⁶: Ոլորտային վերջին հետազոտության համաձայն,
նախարարություններից շատերը (18 նախարարությունից 13-ը) ունեն
հասարակական խորհուրդներ, որոնք պարբերաբար հանդիպումներ են
ունենում: Մինույն ժամանակ, այդ նույն հետազոտությամբ մի շարք
խնդիրներ են արձանագրվել՝ կապված խորհուրդների գործունեության
արդյունավետության, հաշվետվողականության, իրականացրած
աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, խորհրդի
անդամների ակտիվության հետ: Օրինակ, խորհուրդների գործունեության
վերաբերյալ տարեկան զեկույցները ոչ միշտ են հրապարակվել,
իսկ հանդիպումները տեղի են ունեցել շատ ավելի հազվադեպ, քան
նախատեսված է օրենքով¹⁷⁷:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ինտեգրված
սոցիալական ծառայությունների ներդրման գործընթացում
պետական, համայնքային և ոչ պետական կազմակերպությունների
ու անհատների դերը կարևորելով՝ նախաձեռնել է սոցիալական
համագործակցության ազգային համաձայնագիր¹⁷⁸, որի շուրջ միավորված
կազմակերպությունները և անհատները կազմել են «ազգային
մակարդակում աջակցող ցանց»: Աջակցող ցանցի և համաձայնագրի
վերաբերյալ դրույթներն ամրագրված են «Սոցիալական աջակցության

173 ՀՀ օրենքը «Հանրային խորհրդի մասին», 07.03.2018թ., հոդված 5:

174 ՀՀ կառավարության N 337-Ն որոշումը «ՀՀ կառավարության մի շարք որոշումներում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 31.03.2016:

175 ՀՀ կառավարության N 1552-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018
թվականի մայիսի 22-ի N 624-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին», 27.12.2018:

176 ՀՀ կառավարության N 1552-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018
թվականի մայիսի 22-ի N 624-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին», 27.12.2018:

177 Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի մոնիթորինգի
զեկույց, ՀԿ կենտրոն, Արագա ՀԿ, 2017:

178 Ազգային համաձայնագրի միանալու հրավեր, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարություն, http://www.mlsa.am/?page_id=2841:

մասին» օրենքով, որը սահմանում է աջակցող ցանցի հասկացությունը, համագործակցության սկզբունքները ազգային և տեղական մակարդակով¹⁷⁹: Աջակցող ցանցում ներառված են 47 ՔՀԿ, իսկ 2016 թվականին ցանցի առաջին համագումարին ընտրվել է ցանցի համակարգող խորհուրդը: Սակայն 2017-ից հետո աջակցող ցանցն, ըստ երևույթին, նիստեր չի կայացրել¹⁸⁰: Աջակցող ցանցեր են ձևավորվել նաև տարածքային մակարդակով, սակայն կարելի է ենթադրել, որ դրանք ևս ակտիվ չեն, քանի որ մարզպետարանների կայքերում դժվար է տեղեկատվություն գտնել այդ ցանցերի գործունեության մասին:

Առանձին համատեղ աշխատանքային խմբեր են ստեղծվել նաև միջազգային մի շարք նախաձեռնությունների՝ Կայուն զարգացման նպատակների, Բաց կառավարման գործընկերության, Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության շրջանակներում: Հասարակական խորհուրդներ են ձևավորվել նաև մարզային և համայնքային մակարդակով: ՖԻՄ քննարկումների մասնակիցները հիմնականում թերահավատորեն էին վերաբերում այս խորհուրդներին՝ նշելով որ դրանք կամ չեն գործել, կամ ծառայել են տվյալ իշխանության նպատակներին և կազմվել նրանց մտերիմ կամ փոխկապակցված անձանցից: Այնուամենայնիվ, նշվել են նաև համայնքային կամ մարզային մակարդակում խորհրդի աշխատանքի դրական փորձառության օրինակներ:

Համագործակցության հաջորդ մեխանիզմը ՔՀԿ-ների դիտորդական խմբերն են: Այսպես, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի պահանջի¹⁸¹ համաձայն և ՀՀ արդարադատության նախարարի հրամանով¹⁸² սահմանված կարգի հիման վրա 2005 թվականից գործում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը: Խմբի կազմում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներն են՝ սահմանված նախարարի հրամանով: Խմբին հնարավորություն է տրվում այցելել քրեակատարողական հիմնարկներ՝ ազատագրկվածների և քրեակատարողական մարմինների հսկողության տակ գտնվող անձանց իրավունքների պաշտպանության, քրեակատարողական հիմնարկներում ազատագրկվածների աշխատանքային և կենցաղային պայմանների ուսումնասիրման, անհրաժեշտության դեպքում՝ քրեակատարողական օրենսդրության մեջ փոփոխություններով և լրացումներով հանդես գալու նպատակով: Չնայած գործունեության ընթացքում որոշ խոչընդոտներին՝ այս դիտորդական խումբը, ըստ հետազոտության մասնակից փորձագետի

179 ՀՀ օրենքը «Սոցիալական աջակցության մասին», 17.12.2014:

180 Ազգային համաձայնագիր/արձանագրություններ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, http://www.mlsa.am/?page_id=10438 :

181 ՀՀ օրենքը «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին», 06.02.2002, հոդված 47:

182 ՀՀ արդարադատության նախարարի թիվ ՔՀ-66-Ն հրաման, 18.11.2005:

գնահատականի, հաջողված համագործակցության օրինակ է, քանի որ դիտորդական խումբը ակտիվ գործունեություն է ծավալում, իսկ խմբի կողմից ներկայացվող տարեկան և արտահերթ գեկույցներում բարձրաձայնված խնդիրները հաշվի են առնվում կառավարության կողմից և հնարավորության դեպքում լուծումներ են տրվում¹⁸³:

Առցանց հարցման մասնակիցներից 55-ը նշել են, որ մասնակցել են որևէ խորհրդակցական մարմնի աշխատանքներին, բայց տարբեր կարծիքներ են հայտնել դրանց կազմման թափանցիկության, հասանելիության, որոշումների կայացման գործընթացում ազդեցության վերաբերյալ: Մի քանի ՔՀԿ-ներ հասարակական խորհուրդների հաջողված աշխատանքի օրինակներ են ներկայացրել, մյուսները նշել են, որ խորհուրդն ունեցել է ձևական բնույթ: ՔՀԿ-ներից մեկի նկատառումով՝ «գործում են այն խորհրդատվական մարմինները, որտեղ ներգրավված ՔՀԿ-ները արհեստավարժ են և ունեն ոլորտի մասին առավել խորը, փաստարկված գիտելիքներ: Մյուս դեպքերում հիմնականում առաջարկներ չեն լինում և այն վերածվում է լուծումների և ոչ համատեղ աշխատանքի»: Նմանատիպ կարծիք են հայտնել նաև փորձագետներից մի քանիսը՝ այսինքն, ինչպես նշվեց որոշումների ընդունմանը մասնակցության վերաբերյալ բաժնում, հաճախ ՔՀԿ-ների փորձառությունից ու հմտություններից է կախված տվյալ մարմնի աշխատանքի արդյունավետությունը: Փորձագետներից մեկն առաջարկում է վերանայել խորհուրդների աշխատանքի մոտեցումը՝ մշակել խորհրդի գործունեության ռազմավարություն, սահմանել աշխատանքի ուղղություններ և չսահմանափակվել հանդիպումից հանդիպում հաղորդակցությամբ: Խորհուրդներում ՔՀԿ-ների ներգրավման չափանիշների մասով բաց կա, քանի որ պարզ չէ, թե ինչպես են հրավիրվում կամ ընտրվում այս կամ այն խորհրդի անդամները:

ՈՒՈՐՏ 10-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գործարկել համագործակցության առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները՝ բարելավելով հասարակական խորհուրդների և այլ խորհրդակցական մարմինների արդյունավետությունը, թափանցիկությունը, հանրային մոնիտորինգի մեխանիզմները:
- Քաղաքացիական հասարակության հետ համատեղ պլանավորել և իրականացնել միջոցառումներ ՔՀԿ-ների համար առավել նպաստավոր միջավայրի ապահովման ուղղությամբ, ներառյալ՝ հարկման պահանջների մեղմացումը, պետական ֆինանսավորման ծավալի ընդլայնումն ու թափանցիկության ապահովումը, պետական քաղաքականության մշակման, իրականացման և մոնիտորինգի գործընթացներում ՔՀԿ-ների իմաստալից մասնակցությունը և տվյալ գեկույցի արդյունքների բխող այլ դրույթներ:

183 Դիտորդների խմբի գործունեության վերաբերյալ մանրամասներին և գեկույցներին ծանոթանալու համար տե՛ս չ՛հ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողությունն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, <http://www.pmg.am/hy/> :

V. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով հետազոտության մասնակիցների կողմից առավել հաճախ բարձրացված խնդիրներից, ինչպես նաև «ՔՀԿ չափիչում» ներառված ցուցանիշների վերլուծությունից՝ առանձնացնենք մի շարք առանցքային առաջարկություններ, որոնք ռազմավարական նշանակություն կարող են ունենալ ՔՀԿ-ների համար առավել բարենպաստ միջավայրի ապահովման համար:

ՔՀԿ-ների ֆինանսական կայունություն. Հայաստանում ՔՀԿ-ները կարող են օգտվել ֆինանսավորման տարբեր աղբյուրներից, օգտագործել ֆոնդահայթայթման մեթոդները՝ առանց վարչարարական և հաշվետվության ծանրաբեռնող պահանջների և սահմանափակումների: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ների ֆինանսական կայունությունը շարունակում է խոցելի մնալ, և տեղական ֆինանսավորման աղբյուրների օգտագործումը գտնվում է ցածր մակարդակի վրա: Այսպիսով, պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի անհատների և ընկերությունների կողմից նվիրատվությունները խրախուսելու և ՔՀԿ-ների կողմից տնտեսական գործունեության իրականացումը խթանելու համար: Այս միջոցները կարող են ներառել.

- Ավելի շահավետ հարկային խթաններ անհատների ու կազմակերպությունների նվիրատվությունների համար:
- Արտոնյալ հարկային դաշտ ՔՀԿ-ների տնտեսական գործունեության համար,
- Կամավորության խթանում:
- Պետական ֆինանսավորման ավելի մեծ ծավալ, արդյունավետության և թափանցիկության բարելավում, ինչպես նաև ՔՀԿ-ների ծառայությունների պատվիրակման ինստիտուցիոնալ մեխանիզմների ստեղծում:

Մասնակցություն քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներին. Հայաստանում կան մի շարք առաջադեմ գործիքներ և հարթակներ՝ որոշումներ կայացնելու գործընթացին հանրային մասնակցությունն ապահովելու համար, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով: Օրենսդրությամբ սահմանված են ինչպես հարցումների, այնպես էլ պետական գործակալությունների կայքերում համապատասխան տեղեկությունների ակտիվ հրապարակման միջոցով տեղեկատվության մատչելիությունն ապահովող դրույթներ: Կարևորվում է նաև մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է շարունակական քայլեր ձեռնարկել մասնակցության գործնական կիրառումն ապահովելու ուղղությամբ: Քաղաքականության

մշակման փուլում մասնակցության ազդեցությունը երբեմն կասկածելի է, իսկ քաղաքականության իրականացման և մոնիտորինգի փուլերում ՔՀԿ-ների մասնակցությունը խթանող մեխանիզմները քիչ են: Այսպիսով, այս ուղղությամբ առաջարկվում է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- Քաղաքականության իրականացման և մոնիտորինգի գործընթացներում ՔՀԿ-ների մասնակցության ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրում, այդ թվում՝ պետության կողմից պատվիրակման միջոցով:
- Պարտադիր քննարկումների կազմակերպում որոշումների կայացման վաղ փուլերում՝ նշանակալի մասնակցության հնարավորություն տալով պետական քաղաքականության համապատասխան ոլորտներում մասնագիտացած ՔՀԿ-ներին:
- Էլեկտրոնային գործիքներից զատ՝ մասնակցության այնպիսի եղանակների օգտագործման ընդլայնում, ինչպիսիք են հանրային լուսմները, փորձագիտական քննարկումները և հարցումները:

Մոնիտորինգի գեկույցի արդյունքների հիման վրա խորհուրդ է տրվում ռազմավարություն կամ ճանապարհային քարտեզ մշակել՝ ուղղված Հայաստանում քաղաքացիական հասարակության միջավայրի զարգացմանը: Ճանապարհային քարտեզը պետք է ներառի բարելավված հարկային միջավայրի, գրանցման գործընթացում ՔՀԿ-ների և քիզնեսի նկատմամբ համահավասար մոտեցման, որոշումների կայացման գործընթացում ՔՀԿ-ների առավել արդյունավետ մասնակցության, ատելության խոսքի և ՔՀԿ-ների խարանման խնդիրների լուծման և այլ համապատասխան բաղադրիչներ: Այս փաստաթուղթը պետք է պատշաճ կերպով քննարկվի քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերի հետ և մշակվի համատեղ ջանքերով:

VI. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

6.1 Հավելված 1՝ Օգտագործված աղբյուրներ¹⁸⁴

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

ՀՀ սահմանադրություն, 05.07.1995, փոփոխված 06.12.2015, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>

ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119456>

ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=122474>

ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», 03.04.2001, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121691>

ՀՀ օրենքը «Բարեգործության մասին», 08.10.2002, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123353>

ՀՀ օրենքը «Չանգվածային լրատվության մասին», 13.12.2003, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1379>

ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117173>

ՀՀ օրենքը «Անձնական տվյալների պաշտպանության մասին», 18.05.2015, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120901>

ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, խմբ. 16.12.2016, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=125341>

ՀՀ օրենքը «Ազդարարման համակարգի մասին», 09.06.2017, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123969>

ՀՀ օրենքը «Հանրային խորհրդի մասին», 07.03.2018, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120555>

ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին», 21.03.2018, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123348>

ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին», 16.04.2001, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131406>

ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1372>

184 Համացանցի հղումները հասանելի են եղել 2019թ. մայիս-հունիս ամիսներին

ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131987>

ՀՀ օրենքը «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին», 06.02.2002, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=131547>

ՀՀ օրենքը «Սոցիալական աջակցության մասին», 17.12.2014, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=119105>

ՀՀ օրենքը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին», 26.05.2008, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126311> «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքը, 16.12.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=129946>

ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին», 08.12.2017, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=128170>

ՀՀ սահմանադրական օրենքը «Քաղաքական կուսակցությունների մասին» 16.12.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110534>

ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 09.11.2004, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126314>

ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=130299>

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 05.05.1998, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126332>

ՀՀ քրեական օրենսգիրք, 18.04.2003, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=125137>

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 05.12.2013, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126308>

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, 06.12.1985, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=130653>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի N102-Ն հրամանը «Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության օրինակելի ձևը, լրացման, հրապարակման և ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի փետրվարի 13-ի թիվ 59-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին», 15.02.2019, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128528>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի N58-Ն հրամանը «Հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվության ձևը,

լրացման կարգը, հաշվետվության հրապարակման և Հայաստանի հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացման կարգը հաստատելու մասին», 24.02.2017, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123015>

ՀՀ կառավարության N 1204-Ն որոշումը «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին», 15.10.2015, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=122108>

ՀՀ կառավարության N 1146-Ն որոշումը «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126002>

ՀՀ կառավարության N 337-Ն որոշումը «ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 31.03.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=104665>

ՀՀ կառավարության N 1552-Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի N 624-Լ որոշման մեջ լրացում կատարելու մասին», 27.12.2018, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=127392>

ՀՀ կառավարության N 1937-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին», 24.12.2003, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113917>

ՀՀ կառավարության N 66-Ն որոշումը «Բարեգործական ծրագրերի մասին», 16.01.2003, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128100>

ՀՀ վարչապետի N 1111-Ս որոշումը «Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կանոնադրությունն ու անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի մարտի 14-ի N 205 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», 21.08.2018, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=133472>

ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՉԵԿՈՒՅՑՆԵՐ

«Տոկոսի հատկացման վերաբերյալ օրինագծեր», Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն, http://ecnl.org/category/percentage-laws/?post_type=publications

2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունների և հավաքների դիտորդության վերաբերյալ զեկույց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2018թ., <http://armhels.com/wp-content/uploads/2018/07/2եկույց-2018-դիտորդության-վերաբերյալ-.pdf>

«Բարեգործության աջակցության հիմնադրամի» բարեգործության համաշխարհային ինդեքս 2017, https://www.cafonline.org/docs/default-source/about-us-publications/cafworldgivingindex2017_2167a_web_210917.pdf?sfvrsn=ed1dac40_10

«Բարեգործության աջակցության հիմնադրամի» բարեգործության համաշխարհային ինդեքս 2018, https://www.cafonline.org/docs/default-source/about-us-publications/caf_wgi2018_report_webnopw_2379a_261018.pdf

Ազատությունն աշխարհում 2019 թվականին, Հայաստան (անգլերեն լեզվով), Ֆրիդոմ Հաուս, <https://freedomhouse.org/report/freedom-world/2019/armenia>

Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018, 2017թ., http://live-ogp.pantheonsite.io/sites/default/files/Armenia_Midterm_Report_2016-2018_ARM.pdf

Անցումային երկրները 2018 թվականին, Հայաստան (անգլերեն լեզվով), Ֆրիդոմ Հաուս, <https://freedomhouse.org/report/nations-transit/2018/armenia>

Ատելության խոսքի մշտադիտարկում, միջանկյալ զեկույց (հուլիս-դեկտեմբեր 2018 թ.), Հայաստանի Հելսինկյան կոմիտե, 2019թ., <http://armhels.com/wp-content/uploads/2019/03/Ատելության-խոսքի-պիլոտային-մշտադիտարկում-2018-հուլիս-դեկտեմբեր.pdf>

Գենդերային քաղաքականությունը Հայաստանում՝ Օրենսդրական, հակագենդերային քարոզչության և համայնք ձևավորելու ռազմավարությունների ուսումնասիրություն, Կանանց աջակցման կենտրոն, http://www.womensupportcenter.org/assets/PDF%20publications/Gender_politics_final.pdf

Դիտորդ #1 (73). Մարդու իրավունքները Հայաստանում 2018 թվականին, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2019 թ. մարտ, http://armhels.com/wp-content/uploads/2019/03/Ditord-2019arm_Ditord-2019arm-2.pdf

Խաղաղ հավաքների ազատության մոնիթորինգի զեկույց (2017 թ. հուլիս – 2018 թ. հունիս), Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2018թ., <http://armhels.com/wp-content/uploads/2018/08/Zekuyc-2017-2018.pdf>

Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկման զեկույց (2018 թ. հուլիս – 2019 թ. հունիս), Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2019թ., <http://armhels.com/wp-content/uploads/2019/07/Խաղաղ-հավաքների-մոնիթորինգ-2018-2019-զեկույց-2.pdf>

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2014թ. ՔՀԿ կայունության ինդեքս (անգլերեն լեզվով), 2015թ. հունիս, https://www.usaid.gov/sites/default/files/documents/1863/EuropeEurasia_FY2014_CSOSI_Report.pdf

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2017թ. ՔՀԿ կայունության ինդեքս (անգլերեն լեզվով), 2018թ. սեպտեմբեր, https://www.usaid.gov/sites/default/files/documents/1866/2017_CSOSI_Sustainability_Index_for_Central_and_Eastern_Europe_and_Eurasia.pdf

Կովկասյան բարոմետր (ԿԲ) 2017, Հարավկովկասյան երկրներում քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացումների հանրային ընկալումը (2017թ. նոյեմբերի դրությամբ), 19 դեկտեմբեր, 2017թ., https://www.crrc.am/wp-content/themes/crrc/barometer_files_hy/ներկայացումներ-2017.pdf

Համացանցի ազատությունը 2018 թվականին, Հայաստան (անգլերեն լեզվով), Ֆրիդոմ Հաուս, <https://freedomhouse.org/report/freedom-net/2018/armenia>

Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՍ-ների իրավունքների խախտումների մասին 2019թ. առաջին կիսամյակի զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2019թ., <https://khosq.am/reports/hայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-18/>

Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՍ-ների իրավունքների խախտումների մասին 2018թ. տարեկան զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2019թ., <https://khosq.am/reports/hայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-17/>

Հաշվետվություն 2018 թվականի ապրիլի 13-20-ը խաղաղ հավաքների ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումների մասին, «Իրավունքի պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, 20.04.2018, <http://prwb.am/new/hy/2018/04/20/2018-13-20/>

Հայաստանում քաղաքականության մշակման միասնական կառավարման մոդելի մոնիթորինգի զեկույց, ՀԿ կենտրոն, Արագա ՀԿ, 2017թ., <http://ngoc.am/wp-content/uploads/2018/07/Հայաստանում-քաղաքականության-մշակման-միասնական-կառավարման-մոդելի-մոնիթորինգի-զեկույց.pdf>

Հայաստանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների զարգացման կարիքների գնահատում, 2016թ., <http://www.civilsociety.am/resources/strongsco//pubs/554a577bfb8b13aad17a7f3d763147a5.pdf>

Մամուլի ազատությունը 2017 թվականին, Հայաստան (անգլերեն լեզվով), Ֆրիդոմ Հաուս, <https://freedomhouse.org/report/freedom-press/2017/armenia>

ՔՀԿ նպաստավոր միջավայրի ազգային ուսումնասիրություն, Հայաստան, ՀԿ կենտրոն, Երևան, 2018թ., <http://ngoc.am/wp-content/uploads/2018/11/>

[ՔՀԿ-ՆՊԱՍՏԱՎՈՐ-ՄԻՋԱՎԱՅՐԻ-ԱՉԳԱՅԻՆ-ՈՒՄՈ-ilovepdf-compressed.pdf](#)

ՔՀԿ-ների ներգրավվածությունը քաղաքականության մշակման և իրականացման մոնիտորինգի գործում. կարիքներ և կարողություններ, Երևան, 2014թ., http://ngoc.am/wp-content/uploads/2018/09/Mapping_Armenia_ARM.pdf

ՔՀԿ-ների պետական ֆինանսավորման աղբյուրները. Մշտադիտարկում, «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ, Երևան, 2019թ., <https://drive.google.com/file/d/1tNwDXP6FM1K75qdKrxo6D0atx4Dko6l/view>

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Գործընկերություն Հանուն Բաց Հասարակության» նախաձեռնության հայտարարությունը «Լոբբիստական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, 11.11.2005, <https://transparency.am/hy/statements/view/101>

«Կոչ ենք անում նոր իշխանություններին՝ միջոցներ ձեռնարկել՝ ՉԼՍ-ներին գերծ պահելու ոստիկանական ապօրինի գործողություններից և առավել բարենպաստ պայմաններ ապահովել»։ Հայտարարություն, 10.12.2018, <http://medialab.am/news/id/9693>

Ամուլսարի հանրի շահագործման դեմ բողոքի ակցիայի մասնակիցները պնդում են, որ ոստիկանությունն իրենց նկատմամբ անհամաչափ ուժ է կիրառել, Arminfo.am, 20.08.2019, https://arminfo.info/full_news.php?id=44529&lang=1

Բարեփոխում, թե՞ օրենսդրական ճնշում. ՀԿ-ները պնդում են, որ լոբբիստական գործունեության մասին օրենքը կիսանգարի իրենց գործունեությանը, ArmeniaNow.com, https://www.armenianow.com/hy/news/6463/reform_or_repression_ngos_say_law

Խաղաղ հավաքների և միություններ կազմելու ազատության իրավունքների հարցերով Միավորված ազգերի կազմակերպության Հատուկ զեկուցող Կլեման Նյալեցոսի Վուլեի հայտարարությունը Հայաստանի Հանրապետություն իր այցելության ավարտին, Երևան, նոյեմբերի 16, 2018 թ., <https://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=23882&LangID=E>

Հայաստանում տրանսգենդերի պատմական ելույթից հետո LGBTI անձինք մահվան սպառնալիքներ են ստանում, Առավոտ, 26.04.2019, <https://www.aravot.am/2019/04/26/1038786/>

Հայտարարություն, «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ, 06.11.2018, <https://ngngo.net/hy/news/ANOUNCEMENT/97>,

Հայտարարություն. Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան

գրասենյակի նկատմամբ ոտնձգությունների վերաբերյալ, ստորագրված 70 ՔՀԿ-ների կողմից, 05 հունիսի 2019թ., <http://prwb.am/new/hy/2019/06/05/բաց-հասարակության-հիմնադրամներ-հայա/>

Նաիրա Չոհրաբյանի արձագանքը խտրական էր, Փինք Արմենիա, 06.04.2019, <http://www.pinkarmenia.org/announce/na-upr/>

Սորոսը՝ նախկին իշխանությունների աջակիցների հարձակումների թիրախում, Ազատություն ռադիոկայան, 05.06.2019, <https://www.azatutyun.am/a/29983350.html>

Վալերի Օսիայանը՝ ԼԳԲՏ ֆորումի մասին. «Նպատակահարմար չի, ինքս չեմ գտնում, որպեսզի անցկացվի՝ նաև ռիսկերից, անվտանգությունից ելնելով», Առավոտ, 06.11.2018, <https://www.aravot.am/2018/11/06/991547/>

ՔՀԿ-ների հայտարարությունը օգոստոսի 19-ին ՀՀ ոստիկանության կողմից խաղաղ հավաքի ազատության ոտնահարման կապակցությամբ, 20.08.2019, <https://transparency.am/hy/news/view/2816>

Օպերայի հարակից տարածքում սրճարանների ապամոնտաժումը վաղը կշարունակվի, Azatutyun.am, 14.03.2019, <https://www.azatutyun.am/a/29821742.html>

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ, ՆԱԽԱԳԾԵՐ, ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՅՆ ՀՂՈՒՄՆԵՐ

«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիր, Հավելված ՀՀ կառավարության N 1307-Լ որոշման, 15.11.2018, http://ogp.am/u_files/file/OGP_AP_2018_2020_ARM.pdf

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/1912>

«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/1914>

Ազգային համաձայնագիր/արձանագրություններ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, http://www.mlisa.am/?page_id=10438

Ազգային համաձայնագրին միանալու հրավեր, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, http://www.mlisa.am/?page_id=2841

Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ, <https://www.e-request.am>

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք,

<https://www.e-draft.am>

Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, <https://www.arlis.am>

Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարում, <https://www.e-gov.am>

ՀՀ օրենքը «Լոռիիստական գործունեության մասին», նախագիծ., <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=793&Reading=0&lang=arm&enc=utf8>

ՀՀ օրենքը «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին», նախագիծ, <https://www.e-draft.am/projects/389/about>

Պետական գրանցման/հաշվառման/ համար անհրաժեշտ փաստաթղթեր, տուրքերի դրույքաչափեր և ժամկետներ, ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստր, <https://www.e-register.am/am/docs/49>

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Աշոտ Մելիքյան, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե

Ավետիք Իշխանյան, Հայաստանի Հելսինկյան կոմիտե

Արթուր Սաքունց, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Արփինե Հակոբյան, «ՀԿ կենտրոն» քաղաքացիական զարգացման ՀԿ

Մարո Մաթոսյան, Կանանց աջակցման կենտրոն

Նաիրա Առաքելյան, Արմավիրի զարգացման կենտրոն

Նունե Պեպանյան, «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամ

Սյուզաննա Սողոմոնյան, Իրավաբանների հայկական ասոցիացիա

